



Ա. Գ. Ի. Ն

212/4

Թ. ՏԱՐԻ 1970 ՅՈՒՆՈՒԱՐ

ԹԻՒ 1

digitised by A.R.A.R.@

پاكين
 مجلة شهرية ، ادبية وفنية علمية
 مدير المسؤول
 السيد اوتين كارنيك قزاجيان

PAKINE
 REVUE MENSUELLE
 LITTÉRAIRE & ARTISTIQUE
 Propriétaire
 Dr. A. KAZANDJIAN

բ Ա գ ի ն
 ԱՄՍԱԳԻՐ
 ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
 ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ

ՎԱՐՈՋ ԽՍՐԱԳԻՐ
 Կ. ՍԱՍՈՒՆԻ
 ԽՍՐԱԳԻՐ
 Գ. ՄԱՍԳԵԱՆ
 ԽՍՐԱԳՐՈՒԹԵԱՆ
 ԱՆԴԱՄՆԵՐ
 Զ. ԳԵՂԱՐԻ
 Տ. ՈՍԿՈՒՆԻ
 Բ. ՓԱՓԱԶԵԱՆ
 Ն. ՊԱՐԲԵՆԵԱՆ
 Ժ. ԱԲԲԱՐԵԱՆ
 ՀԻՄՆԱԳԻՐ ԱՆԴԱՄՆԵՐԷՆ
 † ԵՒ. ՊՅԱՆԵԱՆ

Խմբագրութեան հասցէ
G. SASSOUNI
 Rue Sélim Boustani,
 Beyrouth-Liban
 Հեռաձայնի թիւ 296898

ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ

Ա. ՍԱՆԻՆԵԱՆ
Ժ. ՅԱԿՈԲԵԱՆ
Ն. ՊԷՇԻԿՅԱՆԵԱՆ
Յ. ԳԵՂԱՐԻ
Ն. ԶԱՐԻՆՈՒՏԵԱՆ
Յ. ՄԱՆՈՒԿԵԱՆ
Ա. ԱՐՇՐՈՒՆԻ
Հ. ՄԱՐԳԱՐԵԱՆ
Ա. ՔԷՇԻՇԵԱՆ
Ն. ԹԻՐԵԱՔԵԱՆ
Վ. ՓԱՓԱԶԵԱՆ
Ս. ՄԻՔԱՅԷԼԵԱՆ
Ա. ՏՕՆՈՅԵԱՆ
Պ. Ս.
Բ. Փ.
.....
ՆՇՄԱՐՆԵՐ

Կողմի ձևար
 ԱՐԲԱՀԱՐ ԳՈՒՐԳԵՆԵԱՆԻ

Բազին

ԱՂՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ Ե ԱՐՈՒԵՍՏԻ

Թ. ՅԱՐԻ. ԲԻԻ 1

ՅՈՒՆԻՈՒԱՐ 1970

ՊԵՇՄԻՐ

ՍՈՒՐԷՆ ՍԱՆԻՆԵԱՆ

ԴԵՊՔԵՐԸ ԶՕՐԶԸԶ ԽՄԻՉՔԱՐԱՆՈՒՄ

George's խմբի քարանուծ կազմի մեջ չի բաղկացրել իմ բարեկամ Thim Charlie-ին, որն ինձ պատմում էր թափառաշրջիկների և մեր փողոցի անցուղարձի մասին: Այդ նիւթերն ինձ պէտք էին, որովհետեւ այն օրերին եւ Hobo-ների կեանքից մի զէպ էի սկսել գրել, եւ որն իմ անուղղելի ծուլութեան եւ իմ գրութեան նկատմամբ իմ ունեցած անձնական տանջութեան պատճառներով, չի լրանում, եւ ես դեռ շարունակում եմ գրել...

Thim Charlie-ից եւ ինձնից բացի, George's խմբի քարանուծ մնայուն յաճախորդներն էին Dizzy Terry-ն, Baby Face Jerry-ն, Big-Mouth Figby-ն, Lady-Like Mimky-ն եւ բազմաթիւ ուրիշները:

Թէեւ ես դրանց անձնապէս չէի ճանաչում, բայց իմ բարեկամ Thim Charlie-ն նրանց մասին ինձ ճշիւ տեղեկութիւններ է տուել, որոնց մի մասը եւ օգտագործել եմ իմ այս պատմութեան:



Ա.

ԹՀԻՆ ՉԱՐԼԻՆ

Ինչպէս նախագէտ ասացի, George's խմբիչքարանուս եւ Thin Char- lie-ին երբեմն-երբեմն հիւրասիրում էի դարեջրով, որը նա խմում էր դրժ- կամուսեմամբ, որովհետեւ ասելի խիստ տեսակի խմելիքներ էր սիրում խմել: Սակայն, իմ նիւթական միջոցները չէին թոյլատրում ասելի թանկանոց խո- մելիքներ դնել ԹՀին Չարլիի համար, եւ նա դիտէր այդ:

Չարլիի հետ ես ծանօթացայ պատահմամբ:

Ես նոր էի տեղափոխուել այդ քաղաքը, անդառնուել մի սենեակում, եւ միւս օրը փողոց դուրս եկել աշխատանք փնտռելու համար, երբ նա մօ- տեցաւ ինձ եւ հանեց իր համառ զլխարկը:

- Պարոն, տասը սէնթ տուէք մի դաւաթ սուրճի համար...
- Ի՞նչ է ձեր անունը, — հարցրի:
- ԹՀին Չարլի:
- Կո՞ր, Չարլի...
- Ըն՞ըն, — ընդհատեց նա ինձ, — ԹՀին Չարլի:
- Ինչո՞ւ, — հարցրի:
- Որովհետեւ, այդպէս են ինձ կանչում, եւ ես վարժուել եմ այդ անունին:

Ես ծիծաղեցի: Բայց մինչեւ վերջ էլ չկարողացայ նրան «Thin» անա- կանով կանչել:

— Լաւ, Չարլի, — ասացի, — ես այս քաղաքում նոր մարդ եմ եւ հի- մա մի ճաշարան եմ փնտրում նախաճաշելու համար: Եթէ դուք մօտակա- ղում նման մի տեղ դիտէք, դնանք միասին նախաճաշելու: Ես խոստանում եմ ձեզ հիւրասիրել յիւր նախաճաշով եւ սուրճով, որը դուք ուզում էք խմել:

Ես նկատեցի, որ նա այնքան էլ չխանդավառուեց իմ առաջարկով, բայց եւ այնպէս ասաց.

- Եկէք ինձ հետ:
- Մենք քայլեցինք մի քիչ տեղ, մինչեւ որ նա կանգնեց եւ ձեռքը պարզեց.
- Տեսնո՞ւմ էք այն չէնքը: Վարի յարկում ճաշարան կայ, ուր կարող էք դուք նախաճաշել:

- Դուք չէ՞ք դալիս, — հարցրի:
- Ո՛չ, — դուրսն օրօրեց նա:
- Իսկ սո՞ւրճը, Չարլի, — հարցրի:

Նա արով ծածկեց բերանը, հազաց եւ ասլա շեշտակի ինձ նայեց.

— Իսէք, պարոն, ես ատում եմ սուրճն էլ, սուրճ եփողներին էլ, սուրճ խմողներին էլ: Եթէ ուզում էք, տուէք իմ տասը սէնթը եւ ես դիտեմ, թէ սուրճի փոխարէն ինչ պիտի խմեմ...

Ես հասկացայ նրան:

— Տասը սէնթով ձեր ուղածից ձեզ տասը կաթիլ չէն սոյ, Չարլի, — ասացի:

Նա բացեց ձախ ափը եւ ինձ ցոյց տուեց չորս հատ ասսը սէնթա- նոցներ:

Ես տուեցի նրան քանակինը սէնթ: Այդ օրուանից էլ ԹՀին Չարլիի հետ բարեկամացանք: Ամէն առաւօտ,

156-2000

երբ ևս աշխատանքի էի դնում, Չարլին ինձ հանդիպում էր իմ հանրակառքի կանգառում, հարցնում էր, թե ինչպես եմ քնել: Երկու բառ էր տալով եզրահանգի մասին, ստանում էր իր քսանհինգ սենթը և գլխարկը հանելով շնորհակալութիւն յայտնում:

Երբեմն էլ, աշխատանքից տուն դարձին, երբ հանդիպում էի Չարլին, նրան հրուիրում էի GEORGE'S խմիչքարանք և հիւրասիրում պարելը: Բայց նա խուսափում էր այդ հիւրասիրութիւններից, պանկով, որ ամէն առաւօտ նրա ստացած քսանհինգ սենթը բաւական է արդէն:

Նա համարում էի Չարլին: Նա սիրում էի նրա պարզունակութիւնը և ճշմարտախօսութիւնը: Թէև և նա շարաթը երեւի երկու անգամ էր սափրւում, բայց նրա դէմքը միշտ էլ աչքի էր ընկնում իր կոկ գծերով և ներքին քաղաքավարութեան փայլով:

Բ.

ԼԵՅՆԻ - ԱՅԿ ՄԻՆԿԻՆ

Նախապէս ասացի, որ իմ բարեկամ ՔՀին Չարլին ինձ տեղեկութիւններ էր յայտնում George's խմիչքարանքի մնայուն յանախորդների մասին: Այդ մնայուն յանախորդներից էր Lady-Like Minky-ն: Minky-ն մի դրժբախտ երիտասարդ կին էր: Եւ, երբ մի օր նա անսպասելիօրէն մի քիչ դրամ սենցաւ, Dizzy Terry-ն և Baby Face Jerry-ն, որ լաւ բարեկամներ էին, այդ դրամի համար կուռեցին և իրար հարուածեցին:

ՔՀին Չարլին, որ ծանօթ էր Լէյնի-Լայկ Մինկիի անցեալին, մի օր ինձ պատմեց նրա մասին:

Ըստ Չարլիի պատմածի, Մինկին մօտ տասնութ-տասնինը տարեկան է լինում, երբ զաւառական մի փոքր քաղաքից մի մեծ քաղաք է գալիս հարստութիւն ու փառք որոնելու համար: Նա հաւատացած է եղել, և նրա ծնողներն ու ծանօթ-բարեկամներն նոյնպէս հաւատացած են եղել, որ նա, շնորհիւ իր գեղեցիկ դէմքին, սրացիկ հասակին և մարմնի շքեղ կազմին՝ կամ անմիջապէս շարժանկարային աստղ կը դառնայ ու յետոյ մի միլիոնատիրոջ կին, կամ էլ՝ անմիջապէս մի միլիոնատիրոջ կին, և յետոյ շարժանկարային աստղ:

Մեծ քաղաքում Մինկին իր վրայ է սիրահարեցնում գրաւիչ արտաքինով մի երիտասարդ, և նրան նրա իջած երկրորդական հիւրանոցից տեղափոխում է իր եղած հիւրանոցը, ուր պարագաները պայտասկան շքեղութեան են լինում, իսկ գծերն աստղայական, և երկուսի սէրն անսահման:

Երիտասարդը Մինկիին հաւատացնում է, որ ինքը մի զաւաճեալ ու ցնդած միլիոնատիրոջ որդի է. և իր հօր մահուան է սպասում անհամբեր, որպէսզի ժառանգի նրա թողած հարստութիւնը և այն իր ուղած կերպով դրժածի:

« — Այն ժամանակ էլ մենք կ'ամուսնանանք», — Մինկիին հաւատացրել է այդ երիտասարդը:

« — Ինչո՞ւ ոչ հիմա» — հարցրել է Մինկին:

« — Հիմա չի կարելի, — բացատրել է երիտասարդը, — հօրս ցանկութիւնն է, որ ևս ամուսնանամ մի այլ ցնդած միլիոնատիրոջ աղջկայ հետ, որը թէև և իր հօր հարստութեան միակ ժառանգորդն է, բայց գեղեցիկ չէ և ևս նրան չեմ սիրում: Եթէ մենք հիմա ամուսնանանք, ևս հօրս ցանկութեանը

20219-67

դէմ գնացած կը լինեմ եւ նա ինձ կը զրկի ժառանգութիւնից եւ մենք մի կտոր հացի կարօտ կը մնանք... Բայց, եթէ դու պնդում ես...»:

« — Ո՛չ, ոչ, — շտապել է ստել Մինկին, — մենք մեր ամուսնութիւնը կը յետաձգենք մինչեւ հօրդ մահը: Ես չեմ ուզում, որ քո եւ հօրդ միջև իմ պատճառով դժտութիւն առաջանայ եւ դու զրկուես ժառանգութիւնից»:

Մինկիի այդ մեծահոգութիւնը շատ է ազդել նրա սիրեկանի վրայ, որը պատրաստ էր եղել հօր կամքին դէմ գնալով ո՛չ միայն հրաժարուել նրա կողմից ընտրուած հարսնացուի միլիոնների հասնող հարստութիւնից, այլև հօր ցասմանը ենթարկուելով նաև, նորից միլիոնների հասնող իր սեփական ժառանգութիւնից: Եւ այդ միայն նրա համար, որ օր առօր ամուսնանայ իր սիրած գաւառացի աղջկայ հետ, բախտուորացի նրան եւ ինքն էլ երջանկանայ:

Որպէս, ինչպէս երևում է, սէրեր կան, որոնք մի քանի միլիոն դոլար արժեն եւ, անշուշտ, գնահատանքի արժանի:

Մինկիի երջանկութիւնն իր գաղաթնակէտին է հասել, երբ մի անգամ իր սիրեկանի հետ բազմօցի վրայ զրկուած նստած է եղել, եւ Հենց այնպէս ստել է, թէ իր երազն է եղել շարժանկարի աստղ դառնալ:

« — Եարժանկարի ա՞նող, — թեթևօրէն ծիծաղել է նրա ապագայ միլիոնատէր ամուսինը, — դրանից էլ դիւրին բան չկայ: Մեր ամուսնութիւնից յետոյ դու մի օրում աստղ կը դառնաս, որովհետեւ հայրս շարժապատկերային արգելադրութեան մեծ քանակի բաժնեթղթեր ունի, ինչ եւ լայն կապերի մէջ եմ Հոլիվուդի քննորդի հետ»:

« — Օ՛, Նինկ...», — (այդպէս է եղել այդ երիտասարդի անունը), բացաղանջել է Մինկին եւ փաթաթուել նրա վզով:

Նոյն օրը նա իր մօրը զրկել է՝

«...Ասում են հնարաւոր չէ մի քարով երկու նապաստակ խփել: Ես երեքը խփեցի: Ես միանգամից ամուսնանում եմ իմ սիրած մի զրաւիչ երիտասարդի հետ: Ես ամուսնանում եմ մի միլիոնատիրոջ հետ եւ շարժանկարի աստղ դառնալու իմ բոլոր հեռանկարներն ապահովում եմ...»:

Մայրը պատասխանել է Մինկին.

«...Հօրդ եւ իմ ուրախութեանը սահման չկայ... Մեր բոլոր բարեկամները ցնծութեան մէջ են: Ամէնքը հարսանիքի հաղուստներ պատրաստելով են դրողուած: Ես օրով կ'ուղարկեմ հարսանիքաւորներին ցանկը, որը մօտ յիսուսի կը հասնի: Ուղարկի՛ր նշանածիդ լուսանկարը...»:

Սակայն, Մինկիի մայրը, չնայած իր երկար ու անհամբեր սպասումներին, երբեք էլ չի ստացել իր ապագայ փեսայի այդքան ցանկալի լուսանկարը, որը վճռած է եղել հրատարակել տալ իրենց քաղաքի թերթում, եւ ապա մեծացնել ու կախել իրենց բնակարանի ճակատի պատից: Մինկիի մայրը չի ստացել այդ սպասուած լուսանկարը, որովհետեւ Նինկն միշտ էլ յետաձգել է լուսանկարուել եւ մի օր էլ անյայտացել է: Անյայտացել է, ոչ թէ ունի բանի համար, որ չի ուղեցել մի փոքրիկ նեղութիւն կրել եւ իր լուսանկարն ուղարկել իր ապագայ գոթանչին, որին շատ է սիրել, այլ ուղղակի այն բանի համար, որ ցանկացել է անյայտանալ: Թերեւս գնացել է ամուսնանալու այն միւս միլիոնատիրոջ միակ աղջկայ հետ, որը նրան պիտի բերէր ո՛չ միայն իր ջերմ ու մեծ սէրը, այլև նոյնքան մեծ, իր հօր հարստութիւնը...:

— Ո՛վ է եղել Նինկն, Չարլի, — հարցրի:

— Մինկին չգիտի: Թերեւս, իրապէս, մի միլիոնատիրոջ աղայ, եւ թերեւս մի խաբերայ...

— Յետոյ թնչ է պատահել Մինկիի հետ, Չարլի, — հարցրի:
Չարլին ծիծաղեց կարճ, գառն ու կծու.

— Այն, որ Նինիի անյայտանալուց յետոյ պարզուէլ է, որ նա չի վճարել Քանկանոց հիւրանոցի վարձը եւ այն ուսելիքների ու խմբիչների համար, որոնցով նա «հիւրասիրել» է պարզամիտ Մինկիին, Ելնելով Մինկիի անել վիճակից, հիւրանոցի տէրը, թէ կառավարիչը, ստիպել է նրան իր մարմնով վճարել ժոռ հազար դոլարի հասնող պահանջը... Յետոյ, նոյն այդ «մարդը» Մինկիի մարմնով «հիւրասիրել» է իր ընկերներին... Աւելի ուշ, Մինկիի հետ վճարովի սկսել են պատկել նոյն այդ հիւրանոցի այլ հիւրերը, մինչև որ նրան «յայտնաբերել է» սիրային գաղտնի առևտրով զբաղուող մի արնկերութիւն» եւ իր ժոռ ընդունել, որպէս մնայուն «աշխատակցուհի»... Այսպիսով ամբողջս հիմք է դրուել մի հոգու կործանման: Մի անձեզ հոգու, մի գեղեցիկ աշխայ, որն իրեն թիթեռնի է զգացել, կեանքը ծաղկանոց, իսկ մարդկանց՝ ծաղիկներ...

Գ.

Լ Ա Յ Ը

Սիրային առևտրով զբաղուող այդ ընկերութիւնն իր «աշխատակցուհիներին» առանձին յարկերի տակ է պահած եղել եւ աշխատել է նրանց «բարձր» դասի պատկանող անհոգ օրիորդների տեսք տալ: Նրանց համար թանկանոց բնակարաններ է վարձել: Հաղցրել է լաւապէս, եւ զարդարել կեղծ գոհարեղեններով: Նրանց արամադրութեան տակ են գտնուել ընկերութեան ինքնաշարժներն իրենց վարորդներով: Սակայն, «ազդիկները», ինչպէս որ նրանց պարզապէս անտանել են, զրկուած են եղել որոշ աղատութիւններից: Որինակ, նրանք միայն որոշ ժամերի են կարողացել փողոց դուր գալ, այն էլ միայն առաւօտեան ժամերին: Մնացած ժամանակ նրանք պարտաւոր են եղել նստել իրենց բնակարաններում եւ «յաճախորդի» սպասել: «Աղջիկներն» ազատ են եղել «յաճախորդներ» փնտտելու հոգսից, քանի որ «յաճախորդներն» ընտրուել են ընկերութեան գլխաւոր գրասենեակի կողմից եւ ուղարկուած ընտրուել «աղջիկներին» «Աղջիկներին» հետախուսութեան միայն ընկերութեան գրասենեակն է ունեցել եւ գրանք արձանագրուած չեն եղել ընդհանուր գրքերում:

Այդ ընկերութեան ժոռ սիրավարձը շատ բարձր է եղել եւ այն գանձուել է միայն գրասենեակի կամ էլ ընկերութեան գործակալների կողմից: Յաճախորդներ ընդունուել են հասարակութեան այսպէս կոչուող «բարձր դասից» միայն:

Երբ Լէյլ-Լայլ Մինկին «աշխատանքի» է ընդունուել, նրան ամբողջովին մերկ վիճակում եւ բաղձաթիւ գիրքերով նկարել է ընկերութեան լուսանկարիչը: Յետոյ շափել են նրա կուրծքը, մէջքը եւ կոնքը: Մինկին ունեցել է իր «գործը», ուր գետեղուած են եղել նրա մերկ նկարները, մարմնի շափերը, ժաշկի գոյնը, տարիքը: Երբ մի «յաճախորդ» ցանկանում էր օգտուել ընկերութեան սիրային «սպասարկութիւնից», ընտրութեան համար, նախ նրան արուժ էր գիտելու «աղջիկների» մարմնական բարեմասնութիւնները պատկերող այդ «անձնական գործերը»: Յետոյ էլ Մինկին ամենայն մանրամասնութեամբ բացատրել են «սիրային տեխնիկայի» նորագոյն մեքենաները:

« — Գիտցի՛ր, որ մեր «յաճախորդները» շատ բարձր գին են վճարում լաւազոյն զօղատարկուելու համար», — ասել են Մինկիին :

Մինկին բնական է ստացած եղել քաղաքի շքեղ հիւրանոցներէ շրջանում, այնտեղ, ուր տարում են երկրի միլիոնատէրերը միայն :

Միտալարձերի շափազանց բարձր լինելու պատճառով, Լէյդի-Լայկ Մինկին ևւ իր «աշխատակցուհիները» մատչելի են եղել միայն այսպէս կոչուող «բարձր դասի» տղամարդկանց :

Մի քանի տարի այդ ընկերութեան մօտ «աշխատելուց» յետոյ, մի օր էլ Լէյդի-Լայկ Մինկին փողոցում է մնացած լինում, որովհետեւ ոստիկանութիւնը յայտնաբերած է լինում ընկերութեան «ղործունէութիւնը», եւ լուծարքէ ենթարկում ամբողջ ցանցը : Մինկիի մի քանի հազարի հասնող խնայողութիւնը յարգուելիս է զրաւուում, որպէս «եկամուսներին» դիմաց չվճարուած հարկեր :

Լէյդի-Լայկ Մինկին մի կերպ սնեակ է գտնում երկրորդական կարգի մի հիւրանոցում եւ սկսում է առանձնակի «աշխատել», գործակալ ունենալով վերելակի մարդուն, որին վճարելիս է եղել իր «եկամուտի» տաս տոկոսը : Այդտեղ նրա «յաճախորդները» այլեւս «բարձր դասից» չեն եղել, այլ՝ բոլոր դասերից : Սակայն Լէյդի-Լայկ Մինկին, թէեւ դեռ երիտասարդ, սկսում է կորցնել սիրային իր հմայքն այնքան, որ տեղափոխուում է երրորդական կարգի մի հիւրանոց եւ այնտեղից էլ մեր փողոցը, որը քաղաքի ամէնից յետամնաց փողոցներից մէկն էր :

Երբ ևս Լէյդի-Լայկ Մինկին տեսայ George's խմբիչքարանում, նա անմիջապէս դրանց իմ ուշագրութիւնը : Նա այդ Ժամանակ կը լինէր մօտ քսանութից երեսուն տարեկան եւ իր գունաւոր դէմքի վրայ դեռ պահուում էր իր նախկին գեղեցկութեան հետքերը :

Նա երբեք տուանձին սեղանի առջեւ չէր նստում, այլ ընդհանուր եւ երկարաուսն վաճառատեղանի վերին անկիւնի առջեւ, սնկածեւ, մի ոտանի ու իր առանցքի շուրջը դարձող աթոռակի վրայ :

Մինկին միշտ լուռ էր : Նա ծուլօրէն կուսկում խմում էր իր խմիչքը, ծխում ու գլուխն ափերի մէջ առած, աչքերը յարում էր մի կէտի : Խմիչքաբանի կիսամութում՝ ես ե՛ւ դիտում էի նրա դէմքը, ե՛ւ ցանկանում էի գլխուս, թէ ինչ է կատարուում նրա հոգում : Չեմ կարող ասել, որ ես շատ բան էի տեսնում այնտեղ, բայց դառնութիւն, այն էլ ծովի չափ դառնութիւն բացայայտ էր :

George's խմիչքաբանում էլ նրան գտնում էին նրա «յաճախորդները» : Երբ դրանցից մէկն ու մէկը մօտենում էր նրան եւ նրա ականջին «սէք» շընջում, նա առանց «յաճախորդին» նայելու, մի ուժգով խմում էր իր խմիչքը, խմիչքապետին կանչում վճարում էր իր պարտքը, եւ տեղից ելնելով՝ դըլխով շարժուելու նշան էր անում «յաճախորդին» :

ԹՀին Չարլին եւ Լէյդի-Լայկ Մինկին լաւ բարեկամներ էին : Չարլին, թերեւս, միակ տղամարդն էր, որին Մինկին սիրում էր ու վստահում, որովհետեւ Չարլին երբեք սէր չէր առաջարկել նրան եւ նրա «յաճախորդներից» չէր : Չարլին էլ սիրում էր Մինկին, որովհետեւ նա էլ իր պէս թշուառ էր եւ կհանքի ուղին կորցրած :

Ծանկանալով օղտուել Չարլիի այդ բարեկամութիւնից, մի օր նրան առաջի, որ ես ցտնկանում եմ զրի առնել Լէյդի-Լայկ Մինկիի անցեալը, նրան վճարելով այն Ժամերի համար, որ նա օրիտի անցկացնի ինձ հետ գրառման Ժամանակ :

Չարլին խօսել էր, բայց Մինկին մերժել էր:

« — Լսիր, Քոնի, — ասել էր նա Չարլին, — զո ասելով զո բարեկամը ծանր աշխատանքով ապրող մէկն է, ուրեմն եւ օրեկան տաս դոլարից աւել չի վաստակում: Ես չգիտեմ, թէ զո բարեկամը այդ չնչին գումարով ինչպէս պիտի կարողանայ վճարել ինձ, իմ անցեալի գրառման բազմաթիւ ժամերի համար: Սակայն, կարեւորը դրամը չէ, որովհետեւ եթէ զո բարեկամը մի հրաշքով կարողանար այս երկրի բոլոր դրամներն ինձ տալ, ես նորից պիտի չհամաձայնէի, որ դրի առնուէր իմ անցեալը: Գիտե՞ս թէ ինչու: Որովհետեւ ես զղուում եմ իմ անցեալից: Որովհետեւ ես ուզում եմ շիշել այն... »:

Մինկին մի պահ լռել է ու սպա շարունակել:

« — Բայց, Չարլի, դու կարող ես առարկել, որ հիմա էլ ես շարունակում եմ կրկնել այդ նոյն անցեալը... »

« Այո, Չարլի, եթէ այդ ասես, իրաւունք ունես: Բայց, հիմա ես չկամ այլևս, Չարլի: Ինչպէ՞ս կարող է մէկը գոյութիւն ունենալ առանց հոգիի... Ես հոգի չունեմ այլևս, Չարլի, այլ հաղար-հաղար անդամ լիւրտած, աղտոտուած ու քղկոտուած մի մարմին միայն... »

« Անխարհի շների թուի շափ չյաճախորդները եմ զընդունել, Չարլի: Մարդիկ, որոնք ամէն ինչ են եղել, բացի մարդ լինելուց: Հրէշներ, հոգեկան հիւանդներ, սաղիստոնե՞ր, մագուխստոնե՞ր... «Առաքելներ» ընտանիքների «հայրեր», որոնք իրենց կանանց «մեզր» են անուանել, բայց եկել են ինձ հետ «երջանկանալու»... »

« Ձերանքով եմ ընդունել նրանցից իւրաքանչիւրին, Չարլի, և երբ զընդունել եմ, պահել եմ, թէ ինչպէս իմ հոգուց պոկուել ու զնացել է մի կրտոր, տեղը թողնելով սրոցուած մի վէրք... Այդ առաջին տարիներին էր, Չարլի: Հիմա էլ չէ... Հիմա էլ հոգի չունեմ ես, Չարլի: Ապառուել է այն... Հիմա ես բորստ եմ, Չարլի... Ընդունում եմ առանց նրանց վրայ նայելու, առանց նրանց տեսնելու, առանց հասկանալու... »:

« — Մինկի՛, Մինկի՛, — բացազանչել է Չարլին և մխիթարելու համար մեղմօրէն ցնցել է ու սեղմել հէշ աղջկայ ուսը:

Չարլիի այդ մխիթարանքից, Մինկին յանկարծ լաց է եղել: Հունցուր-հունգուր լաց է եղել ու ուրախացել է, որ կարողացել է լաց լինել:

« — Քանի տարի էր ինչ չէի կարողանում լաց լինել, Չարլի, — արցունքների միջից ասել է Մինկին ու շարունակել է հեկեկալ:

— Ես չիւանդարեցի նրա լացը, — ասաց Չարլին, — որովհետեւ լացն աղօթքի պէս մաքրում է մեր հոգիները... Քողկցի, որ լաց լինէր... »

Գ.

Ա Ռ Ա Ջ Ա Բ Կ

Ես այդքան երկար խօսեցի Լէյդի-Լայկ Մինկիի մասին, որովհետեւ նրա չյաճախորդներէց էր Dizzy Terry-ն, իսկ Դիլի Թերին George's Խը-միշքարանի նշանաւոր գէմքերից մէկն էր:

Թո՛ն Չարլին մի օր ինձ ասաց, թէ Դիլի Թերին Լէյդի-Լայկ Մինկիին առաջարկել է միասին «աշխատել»... »

« — Մինկի, — մի օր ասել է Դիլի Թերին, — վերջերս ինչքան շատ եմ մտածում այդ ուղղութեամբ, այնքան շատ եմ գալիս այն եղբակացու-

թեան, որ ես եւ դու կարող ենք զոտ արհեստի մի գործ սկսել եւ այն լաւ հիմ-
քերի վրայ դնել...»:

« — Ինչպէ՞ս», — անտրամադիր հարցրել է Մինկին:

« — Իմ ծրարներն է, — բացատրել է Դիդի Թերին, — մեր գործի մէջ
դնել կազմակերպական իմ կարողութիւնը, դու կը դնես զոտ փորձառութիւ-
նը, իսկ Baby Face Jerry կը վարի մեր անսեռական գործերը...»:

« — Ինչ դուրս հանիր այդ ընկերութեան կազմից», — տարտամ ու
անտարբեր ասել է Մինկին:

« — Սպասի՛ր, մի շտապիր մերժել, — ասել է Դիդի Թերին, — մեր
ընկերութեան մէջ դու այլեւս ազատ կը լինես այն զգործը՝ կատարելուց,
որն անուժ ես դու հիմա: Ազդիկներ ճարելու եւ տեղաւորելու գործն ես վեր-
ցնում եմ իմ վրայ, իսկ իմ մի բարեկամին, որին դու շնո՞ւնաւ ճանաչում կը
տանք մեր ընկերութեան գործակալի պաշտօնը: Քու գործը կը լինի միայն
հսկել ազդիկներին, եւ զոտ փորձառութիւնը փոխանցել նրանց...»:

« — Դիդի, — հարցրել է Մինկին, — ճի՞շդ է, որ դու նախկին gan-
gster ես:»:

« — Այո՛, — պատասխանել է Դիդի Թերին, դժբարկը հրելով ծոծ-
րակի վրայ:

« — Դիդի, իմ խորհուրդն է, որ Թողնես սիրալաճառութեան զոտ այդ
ծրարները եւ դնաս նորից gangster-ութեամբ զբաղուես», — ասել է Մինկին:

« — Բայց, սիրալաճառութեան գործը մեր gangster-ութեան մի մասն
է կազմում», — բացատրել է Դիդի Թերին:

« — Ինչքան գիտեմ, ոչ անպայման, Դիդի», — ասել է Մինկին:

« — Մինկի, բէյբի, դիտե՛ս, որ gangster-ութիւնը մարդասպանու-
թիւն է եւ ստիկանութեան հետ գործ ունի...», — ասել է Դիդին:

« — Իսկ զոտ առաջարկած գործը հողեսպանութիւն է, Դիդի, հոգեպա-
նութիւն», — բացառապէս է Մինկին եւ շրջուել:

Դիդի Թերին չի հասկացել, թէ ինչ ասաց Մինկին: Մտածել-մտածել
ու հարցրել:

« — Well, Minky, ես չեմ հասկանում, թէ սիրային առեւտուրը ի՞նչ
կապ ունի հողեսպանի եւ սպանութիւնների հետ, երբ ոսկու պէս մաքուր մի
գործ է...»:

« — Get lost», — բարկացել է Մինկին:

Դիդին դժբարկն իջեցրել է աչքերին, ելել է տեղից, դնացել դէպի
դուռն եւ շրջուելով ասել է.

« — Well, Minky, Baby, նորից մտածիր: Իմ նպատակն է Քեզ ազա-
տել զոտ սեւ գործից եւ մի հաստատութեան կառավարչուհի դարձնել...»:

« — Դիդի, խնդրում եմ դնաս այստեղից», — ասել է Մինկին արգա-
հատանքով, եւ շրջել գէժքը:

Ս. Ս.

(Շար. 1)

ԺԱԳ ՅԱԿՈՒԲԵԱՆ

Մ Ե Ր Մ Ա Յ Ի Ե Ր Ը

Սիրոյ նուէր՝ իմ հայ մայրիկիս

Մեր տուներուն նոյս ձեռքն էին
 Մայրերը մեր...
 Ձեռքերը այս, առտու - գիշեր,
 Կը պահէին
 Քոնիրը՝ հի՛ր, լամբարն՝ արքա՛ն,
 Իլիկը՝ ժի՛ր, օրրանն՝ օրրո՛ւն,
 Ամբարն՝ հարո՛ւտս:
 Սեղանը՝ լի՛, քիմքերը կո՛ւշտ
 Կը պահէին
 Հացին համով ու ուկիով,
 Միրգին հոտով ու գինիով:
 Եւ հօքիին ու ծամբորդին, —
 Հրաւերի պէս դուռը՝ ազա՛տ
 Ու մեղքի պէս կուժը առա՛տ
 Կը պահէին:
 Մեր պահապան մայրերն էին...

Մեր տուներուն վառ ե՛րգն էին,
 Մայրե՛րգն էին
 Մայրերը մեր...
 Արծաթն իրենց ծիծաղներուն
 Երբ ծննդայեր՝
 Տունը կ'առնէր խնկոյ՛քի գոյն
 Առտու - իրկուն:
 Իրիկուան դէմ,
 Քնարի պէս մայրերը այս,
 Երգերը այս,
 Սեմին՝ ժպի՛տ կը սփռէին,
 Թե՛ւ ու կարօտ կը պարզէին,
 Դժուար օրուան տեղը ու տապէն
 Տունն դարձնողներն իրիկնային
 Կ'ընդունէին

Ջով ու ցօղով ովախսի:
 Կը սրբէին անոնց նակտէն
 Քիրտն ու փաշին
 Թաշկինակով մը մայրսի,
 Եւ հօք շուէն կ'առնէին վար
 Առօրեայի բնար կապար
 — Լե՛ռ մը կապար —
 Որ անար սիրտը խոնջահեւ՝
 Շուշաններով լնցուի քեթի...
 Մեր հրեշտակ մայրերն էին...

Մեր տուներուն զարո՛ւնն էին
 Մայրերը մեր...
 Մայրսն իրենց կը դարձնէր
 Ածում դալա՛ր՝
 Ծաղիկներով,
 Օրրոցը՝ վա՛ռ՝
 Մանկիկներով:
 Մեր մայրսեան մայրերն էին...
 Մեր պարտեզին վարդերն էին -
 — Հարսի նման կը պչրէին
 Մետա՛քս մետա՛քս:
 Ջարդեր էին.
 — Պուպրիկի պէս կը պննէին
 Դանի՛քը տան.
 Հա՛նը կենսան:
 Կարթեր էին.
 — Իրենց յօնքով, իրենց կունքով,
 Հաջապին տակ խա՛ղ ու ժպի՛տ
 Կը շարժէին,
 Կը պահէին իշխան փեսան
 Իրենց սրտին մօտ յաչաղկուտ.

Իրենց լեզուին ճազ ու սազով
 Ու կեռասով
 Կը գերէին իրենց արքան
 Մինչեւ ի մահ ճոյճ մէ՛կ բարձին...
 Մեր հայրենի մայրե՛րն էին...

Մեր տուներուն արե՛ւն էին
 Մայրերը մեր,
 Առաւօտեան բարե՛ւն էին...
 Իրենց շոգերը մեղուագոյն
 Երբ գարթնէին
 Մութնուլուսուն՝
 Տունը ամբողջ կ'ըլլար նրա՛ց
 — Կը բացկլտա՛ր,
 Տունը ամբողջ՝ հագա՛ր փեթակ
 — Կը բռնա՛ր:

Նոր օրուան մը դօղա՛ցն էին,
 Որ կը կանչէր
 Մէն մի տնուորն յատուկ գործին
 Ու դպրոցին:
 Եւ օրն ի բուն՝
 Աշխատանքի սաջ ու անխոնջ
 Խոյսոջ էին
 Այի՛ք այի՛ք,
 Խօսանոցէն մինչեւ մահին,
 Մասայութեան թռի՛չք էին
 Առանց թառի ու դադարի՝
 Շեմէն տանիք:
 Մեր երկնածոր մայրե՛րն էին...

Մեր տուներուն ի՛նչը չէին
 Մայրերը մեր...
 Կեանք ու մահի,
 Զէն ու գրահի ընկերն էին
 Իրենց այրին:
 Համբարով մը զնո՛րդն էին
 Անոր խնդին,
 Նուս ժպտով
 Մը՛ յաճախա՛րզն անոր ժպտին
 Եւ արցունքով
 Մը՛ բաժանո՛րզն անոր վշտին:
 Կը բաժնէին բաժա՛կը նայն
 Մեղր ու դիրտի,
 Կեանքի բօլոր վայրկեաններուն
 Ու վայրերուն:
 Առնանման, արիասիրտ

Ընկե՛ր էին զէն ու գրահի,
 Կեանք ու մահի:
 Օ՛, մեր մայրերն առաջինի,
 Որ, փափկասուն էին թէն,
 Բայց գլտէին կռուի՛լ նաւ՝
 Կտրի՛ն իբրեւ,
 Իրենց կտրի՛ն մարգուն կողմին,
 Պսակնակուն հողի համար,
 Մեռնի՛լ նաւ
 Խաչին համար,
 Կոխկոտելով խորոյկ, Եփրատ
 Թէ խորխորատ...
 Զի, փափկագոյն էին թէն,
 Բայց կանացի մորթին ներքեւ
 Ունէի՛ն եւ հայի հոգի,
 Վարդի սգի:
 Հայ՛ մայր էին...
 Պարկեշտութեան պատնէշ էին,
 Զոր ո՛չ մէկ գէնք կրնար պատռել...
 Ու պատիւի գրան էին,
 Զոր լակ մա՛հն էր կարող փշրել...
 Մեր մարտիրոս մայրե՛րն էին...

Մեր տուներուն մայրե՛րն էին,
 Մայրե՛րը հայ...
 Զինք մայրենին իրենց շուրթին
 Ի՛նչ չէր եւ դեռ ի՛նչ չէր ըլլար
 Իրեն նեկտար,
 Իրեն բնար:
 Երբ ժպտէին՝
 Երկինքն արպէս բէ վա՛րդ շողէր
 Ու վա՛րդ շողար...
 Իսկ երբ լային՝
 Կարծես իրենց ամբողջ հագին
 Գոհա՛ր գոհա՛ր
 Կը գլզար
 Երդիքն ի վար...
 Համբարները իրենց սիրոյն՝
 Զուկի նակտին հեշտ հուր էին,
 Գուստրի այտին՝
 Վարդանան փրփուր էին,
 Իսկ ամուսնի
 Սրտին անուշ սուր էին միշտ...
 Մոց մ՛ուսէին,
 Որ ծա՛վ մըն էր սիրոյ անծայր,
 Գիրկ մ՛ուսէին,
 Որ գի՛րք մըն էր սուրբ մայրութեան...
 Մեր սիրասուն մայրե՛րն էին...

Մեր տուններուն տանճերն էին
 Մայրերը մեր...
 Ազօ՛րք ազօ՛րք
 Կը պահէին սկիւղ վե՛ր
 Ամառ-ձմեռ,
 Որ չարը տան չմերձենա՛յ:
 Իրքեւ կանթեղ
 Կը վառէին իրենց հոգին,
 Առտու-գիշեր,
 Որ մօրի տեղ՝
 Լոյս Աստուծոյ գուրը իջնէ
 Հայոց ազգին:
 Իրենց սրտին վրայ խորան՝
 Կը բռնէին գմբէթն ռոջ տան,
 Որ հաւատքի սիւնին վրայ՝
 Հայ ընտանիքն անբա՛նջ մնայ
 Եւ ըլլայ առ՛րր ազամանդեայ...
 Ու մամ առ մամ կը հալէին,
 Որ որդիներն իրենց լոյսով
 Զա՛հ դառնային,
 Բաշխուէի՛ն
 Մուր ու ծարու մէն մի անկիւն՝
 Եւ չո՛րս ծագուն...
 Կիրակուտի՛ն,
 Երբ խնկամանն արծարծէին
 Բարբ հաւատքի իրենց շունչով,
 Անգին Նարեկն իրենց շուրթին
 Կը դառնար խուկ
 Ու կը մխար աղերսագին.
 Արցա՛նեք արցա՛նեք...
 Մեր հագեւոր մայրե՛րն էին...
 Մեր տուններուն օրհնէ՛նքն էին
 Մայրերը մեր՝
 Ծուխին հանգոյն բուխերիկին
 Իրիկնային:
 Անո՛ւշ անո՛ւշ իրիկում էին,
 Ուր արեւները կը մաշին՝
 Կնդրուկի պէս կ'անէանան,
 Ուր ճեւերը ա՛լ կը հաշին՝
 Մասունքի պէս կ'իտէանան...

Ակուրթին շուրջ՝
 Ծալապատիկ հե՛քիա՛ք էին
 Եւ գուսնի պէս մագաղա՛ք.
 Ոսկիին շուրջ արծա՛ք էին,
 Ալպում դարձած յո՛ւշ եւ ան՛ւրջ,
 Ու հին օրեր,
 Գայնուն մոխիր, սնեարշամ սէր
 Կը բարէին:
 Նոր հարսնիքի մ'երբալու պէս՝
 Վերջին ձմրան ու հրաւերին,
 Հուկ փեսային
 Կը սպասէին
 Երագուգին:
 Հինա շուկ ու շու՛ք էին
 Հին յարկէն ներս,
 Ուր հարսի մը լո՛յսն էր ցաթեր
 Ծիծաղի պէս,
 Ուր նոր մօր մը հ՛րգն էր մանր
 Ծիծառի պէս:
 Եւ նո՛ր ծաղկած մամուկներու
 Հօգմիկն ի վեր, աղմուկն ի վեր՝
 Ա՛լ փոփառք եւ սիւ՛ք էին
 Մայրերը մեր.
 Զի սեւազգեստ եւ լուսածամ
 Մամիկ դարձած մայրե՛ր էին,
 Սրբուհիներ...
 Ո՛վ օրհնութիւն,
 Կտարն ի վար
 Համբիշի պէս շափրա՛կ շափրա՛կ
 Կաթող, օրհնող ճիւղին հանգոյն
 Եւ համբոյրին,
 Մայրերը մեր՝
 Մի՛շտ օրհնութիւն էի՛ն ներսակ:
 Ու շարական իրենց երգէն,
 Նշխար ձեռէն,
 Իրենց կեանքի անուշ բերէն,
 Միտունի պէս,
 Շուշանի պէս ու ցորենի՝
 Օրհնութիւններ կը ցօղէին
 Թռեղիկներու վարդ վարդ գլխին...
 Մեր օրհնելի,
 Օրհնեղբայրի մայրե՛րն էին...

ՆՇԱՆ ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ

Ջ Ր Ո Յ Յ Ն Ե Ր՝

ՀԱՅՐԻԿԻ ՄԸ ՈՒ ՄԱՆՉՈՒԿԻ ՄԸ ՄԻՋԵԻ

(ԱՆՅՔ ՄՈՆՄԱՐԹՐԷՆ)

Ա.

Կիրակի, արեւոտ յետմիջօրէ մը, փարիզարնակ դերձակ Արշամ զուրա կ'երլի տունէն, իր մանչուկին, Արային հետ, երթալու Սաքրէ Քէօրի տաճարանիսա բարձունքը, որ իրենց բնակարանէն հարկու քառասուն վայրկեան հեռու է, ոտքով:

Կ'անցնին Մոնմարթրէն, որ Նոր Բարիտին սուղոմաթաղն է, ուր ամէն դիշոր կը ածուին հեթանոս աստուածները, որոնք Ողիմպոսէն ախտեղ դաղթած են վտղուց:

Լիցուն է թաղը դրօսավայրերով, որոնք կը բացուին երեկոները ու կը փակուին արշալոյսին: Ամէն մէկ հեթանոս հաստատութիւն կը ցուցադրէ սրատկերները իր հուրիններուն, որոնք յաճախ մերկ են յոտիցդուրի:

Արամ հայրիկը կը քալէ իր մանչուկին ձեռքէն բռնած: Մտածումներով բեռնաւորաւ ըլլալուն՝ կախ է դուրիք: Մինչդեռ տասնամեայ Արային սեւուրիկ

աչուկները կը շրջին աջ ու ձախ, եւ կը տեսնեն մերկ կիներու՝ մեծ լուսանկարները:

Արա հօրը կը հարցնէ.

— Տի փափա, սա կնիկները ինչու՞ հազուաւ չեն...

— Ո՞ր կնիկները, ձաղուկս:

— Սա պատկերներուն կնիկները:

— Ա՛... Ատոնք խեղճ են, հազուաւ չունին:

— Աղքատ են...

— Շատ աղքատ են: Դրամ չունին հազուաւ առնելու համար:

— Անոթի չեն երեւնար կոր...

— Չէ՛, անոթի չեն: Ուտելիք մը առնելու չափ դրամ ունին, բայց հազուաւ չաւ սուղ ըլլալուն՝ ատանկ մերկ կիները չատցած են:

— Ինչու՞ ատանկ չըլլախ չըլլախ պատկերներ քաչուած են, ու փողոցին պատերուն վրայ շարած են...

— Որ մարդիկ մեղքնան իրենց, ու ամուսնանան եւ հազուեցնեն:

— Ըսել է կարգուիլ ուղղոյնքը ատանղէ՞ն կնիկ կը դտնան...

— Կարգուիլ ուղղոյն ալ, չուղղոյն

ալ, կարգուածն ալ հոս է որ կ'ընեն շը- նութիւն: Մոնմարթըը Սողոմ է, Մոն- փարնասն ալ Գոմոր է: Քալէ', քալէ':

— Դո՛ւն ալ աստեղէն տաքը մա- մաս...

— Ո՛չ, ձազո. մայրիկդ Մարտիրո- յէն ասած եմ. իր մօրմէն ուզած եմ:

— Նալէ', նայէ', փափա, աստեղի կնիկները շատ աղուոր են, շատ շարմաք են:

— Մայրիկդ ալ աղուոր, շարմաք էր:

— Ասո՞նց չափ...

— Ասոնց չափ չէր, բայց աղուոր էր: Քալէ', քալէ':

— Կը քալեմ կոր, փափա, վաղելու չեմ: Կամաց քալենք էի սա աղուորիկ կը- նիկները տեսնանք: Դուն ալ նայէ, փա- փա, էլ սոն վրէժման պէլ: Տի, փափա, մեծնալու ըլլամ Սէ, ինծի համար աստե- ղն աղուորիկ կնիկ մը կ'առնե՞ս...

— Դուն հայ ես. ես քեզի համար ա- նուշիկ հայ աղջիկ մը պիտի առնեմ:

— Ես ասոնցմէ կ'ուղեմ, փափա:

— Ինչո՞ւ...

— Աղուոր են, չըլպախ են, կը մը- սին... Մեղք են Սէ'... Կ'առնեմ կը տաք- ցընեմ, կը հաղուեցնեմ...

— Ծօ՛ խայտառակ, հիմակուց աչքդ ասոնց վրա՞յ է...

— Եստ շատ նուլօ փրանկ վասակիմ Սէ՛ քանի մը հատ կ'առնեմ ասոնցմէ:

— Ի՞նչ... Մէկ հատ ալ չէ, հապա քանի մը հատ... Ծօ՛, հաւկիթ կ'առնեն կոր... Թրէզ ալա տուգէն...

— Հաւկիթ չէ, փափա, հա՛ւ. հա՛ւ: Ան ալ կու տա՞ն քրէզ ալա տուգէն:

— Աղէ՛կ, աղէ՛կ. երբոր մեծնաս, քեզի համար քանի մը հաւ կ'առնենք:

— Փափա...

— Ի՞նչ է նորէն...

— Մի՞նչու մեծնալս՝ չըլլան հատ- նին սա աղուոր կնիկները: Ուրիշները կ'առնեն ու ինծի համար քանի մը հատ չի մնար: Կը վախենամ էի կը քիչնան, կը հատնին...

— Ինչաւ մի՛ վախնար ասոր համար: Ասանկ կնիկները երթալով կը շատնան

կոր, Քեղի ալ կ'օգտեն, զաւկիդ ալ, թո- ոանդ ալ:

— Աս ի՞նչ աղուոր բաներ ըսիր, փափա:

— Ծօ՛ անդիտան, սա կնիկները դէշ են, սատանաներ են:

— Օ՛, Սօ՛, փափա... Հրեշտակի պէս աղուոր են: Հրեշտակներն ալ աղ- ւոր են: Սատանաները սեւ կ'ըլլան: Ա- սոնք իմ իմած կաթիս պէս ներմակ են: Ժերմակ սատանայ կ'ըլլա՞յ...

— Սատանան անոնց փորին մէջն է:

— Ես ալ տօճքորքի կը տանիմ, որ փորերնին բանայ ու սատանաները հանէ: Մեղք են Սէ'... Նայէ, փափա, սա մէկ հատը ի՞նչ աղուոր է...

— Ծօ՛, շուտ քալէ. հիմակ ստա- նան քու փորդ ալ կը մտնայ...

— Իմ փորս պզտիկ է. սատանան հոն չի սղմիր: Սատանան ինծի պէս սղտիկ մանչերը չի սիրեր: Սատանան գիտէ մտնալիք տեղը...

— Ծօ՛ անառակ, պզտիկ սատանա- ներ շատ կան սա կողմերը. վախնամ ա- նոնցմէ մէկը մտած է արդէն փորդ:

— Ինծի տօճքորքի շտանիս ասոր համար: Աս իրիկուն տեփիրաքիփ մը կ'առնեմ, ու վաղը աստու զուրս կը հա- նեմ սատանան:

(ԳԵՐԵԶՍԱՆԱՏԱՆ ՄԷՋ)

Բ.

Մեռելուցի մը, հայրիկը Արախն հետ կ'այցելէ գերեզմանը իր հօրը, որ մեռած է երկու տարիէ ի վեր:

Հայրիկը թաղար մը ծաղիկ կը դե- տեղէ հողակոյտին վրայ, սպա կը ըրէ, ու կ'աղօթէ:

Արա խղելով լուսթիւնը՝ հօրը կը հարցնէ.

— Տի, փափա, մաման կ'ըսէ քի մեծ հայրիկը երկինք զացած է: Դուն ալ կ'ը- սես էի մեծ հայրիկը սա հողին տակն է:

Չեմ հասկնար կոր... Ո՞րն է շիտակը...
կրամ փէրը հողին տա՞ն է, չէ՞ մէ՛ եր-
կինքն է...

— Անուշիկ ձագուկս, մեծ հայրիկին
մարմինը հողուն տակն է, հողին ալ եր-
կինքն է:

— Ըսել է մեծ հայրիկս մենէ՛ զատ-
ւելէն զատ, ինքը իրմէն ալ դատուած
ու երկու կտոր եղած է... Մէ՛ տումած,
վրէ՛ւան տումած...

— Մարմինը հողուն տակն է, հողին
ալ երկինքն է, ըսի... Ա՛լ մ'երկարեր...

— Հողին մը մը ո՛վ փա... Մէ՛ մար-
մինը չի՞ մտր, մարմինը չի՞ վախնար
զի՛ւնները, մինակը, մեռելներուն հե-
տը...

— Մարմինը ա՛լ ցաւ չի զգար:

— Սէ՛ք Էնփոսիպլը, փափա... Մար-
մինը միշտ կ'իմանայ ցաւն ալ, ցուրտն
ալ, վախն ալ...

— Աէ, ձագուկս, երբոր հողին եր-
կինքն է, մարմինը ա՛լ ցաւ չ'իմանար:

— Ինչո՞ւ մարմինովը չ'ընաց եր-
կինք...

— Մարմինը ծանր է, տղաս: Մար-
մինը ծանր ըլլալուն՝ հոս կը մնայ: Հո-
ղին թռչունի պէս թռի՛ն է ու կը թռի,
կ'ելլէ երկինք, Աստուած Պապային քով:

— Ի՞նչ ծանր ավիաններ, ֆիւզէ՛ններ
կը թռչին, երկինք կ'ելլան կոր: Մեծ
հայրիկս տոմս արմիրէն ալ ծանր չէր
եա՛... Աստուած Պապան ուզէր մէ՛ չէ՞ր
կրնար մեծ հայրիկս մարմինը երկինք
հանել... Տիեօ է թաւ փուխան...

— Աստուած Պապան մարմինները չի
տանիր երկինք...

— Թող դո՛ւն զրկէ՛իր, փափա... Ա-
վիանը զնէ՛իր ու զրկէ՛իր... Մեկը չէ՞ մեծ
հայրիկս, որ հողին տակը պահուի...
Չմեռը թո՛տոր կ'ընէ... Հողին տակը,
միշտ հողին տակը...

— Օրէնքը ասանկ է. մի՛ երկնցներ:
Քալէ՛, երթանք ա՛լ...

— Աէ մէ՛ հողին մէջ կը գնեն կոր քի
նորէ՞ն բուսնի... Ե՞րբ հողին տակէն
դուրս պիտի ելլայ...

— Օր մը, մեռելները ամէնն ալ

դուրս պիտի ելլան, ու պիտի կենան
Աստուած Պապային առջեւ:

— Թուրքուա՞, փափա...

— Աստուած Պապան բարիները պի-
տի զրկէ՛ արքայութիւն, շարերն ալ պի-
տի խոթէ՛ դժոխք:

— Եթէ մէկուն հողին բարի, մար-
մինը չար ելլէ, նորէ՞ն դատուիլ պիտի
ըլլայ... Աս ի՞նչ բան է. միշտ դատուիլ
կայ...

— Երբոր մեծնաս, կը հասկնաս:

— Տի, փափա, շիտա՞կ է քի ամէն
մարդ՝ մեծ հայրիկին պէս պիտի մեռ-
նի...

— Մ՛՛վ ըսաւ...

— Էտմոնը, Գրիգորին տղան. ան
ամէն բան պիտէ՛ կոր. ինձմէ՛ վեց տարու
մեծ է: Փափա, իրեն հարցուցի քի՛ Ե՞ս
ալ պիտի մեռնիմ. Ասթիւրիլումն բտաւ:
Շիտա՞կ է ըսածը, փափա... Յ՛, սէ
թէրիպլը...

— ...

— Ինչո՞ւ բան մը չես ըսեր կոր...

— ...

— Փափա, ես մեռնիլ, հողին տակը
մտնալ չեմ ուզեր...

— Մեռնիլը ծերերուն համար է:

— Օր մը, ես ալ ծեր պիտի ըլ-
լամ...

— Օ՛, ութուն, իննսուն տարի ետ-
քը... Շատ հեռու է աս օրը...

— Փափա, ես ասանկ կ'ընամ մը-
նալ...

— Ինտո՞ր...

— Ասանկ պիտի...

— Մի՞շտ պիտի...

— Ուի, փափա...

— Ինչո՞ւ, ձագուկս:

— Որ չմեծնամ, ծեր չըլլամ, չմեռ-
նիմ ու հողին տակը չմտնամ...

— Ա՛խ, ձագուկս...

— Չ'ըլլա՞ր, փափա...

— Կ'ըլլայ, տղաս, կ'ըլլայ...

— Դուն ալ հողին տակը չմտնաս.
մամա ալ չմտնայ հողին տակը... Հո-
ղին վրայ աղէկ է, հողին տակը շատ գէշ
է, մութ է, թաց է, սէք Էնփուվան-

քապիւր... Ո՞վ կրնայ ընել, որ հողին տակը չմտնանք...

— Օր մը կ'ըսեմ, տղաս... Հիմակ, ա՛լ քալէ, երթանք:

— Խեղճ մեծ հայրելու հո՞ս պիտի մնայ...

Հայրիկը Արային ձեռքէն բռնած՝ կը քալէ դերեղմանատան մէջ, ու կը մտածէ:

— Ո՞վ կրնայ ընել, որ մարդ հողուն տակը չմտնէ: Կամ ջուրը կամ կրակը: Ուրիշ ոչ մէկ բան...: Հող, ջուր կամ կրակ...: Է՛յ, Աստուած իմ, աս ի՞նչ վախճան է մարդուն տուածդ: Չարչարանք կեանքի մէջ. մահուան մէջ քայքայութիւն ալ պայծառ: Մտած մտածուկը լեզու կրած է, ու կը բողբոջէ: Բայց եղևցին Քամք քո: Աստուած մարդիկ մտեր են հողուն մէջ, մենք ալ կը մտնենք: Միայն թէ՛ սա ձաղուկիս ո՛չ խելքը, ոչ ալ դերեղմանը շուտ մի՛ բանար: Տէր իմ Աստուած, ներէ՛ որ աւելին ինչդեմ. ասանկ կեանքին մէջ, աւելի յաւ է որ տըղան իայվան մեծնայ... Իմաստուն ու դպրուն ըլլալէն քառսուն անգամ աղէկ է:

(ԲԱՐՁՈՒՆՔԻ ՎՐԱՅ)

Գ.

Կերակի, յետմիջօրէի մը, դարձեալ հայրիկ Արչամն ու Արան դուրս ելած էին, երթալու համար Սաքրէ Քէօր, Մոնմարթի այդ նուիրական, նկարչագեղ եւ տաճարանիստ բարձունքին վրայ նստելու եւ մաքուր օդ շնչելով՝ դիտելու փարիզեան տուներուն տանիքները, որոնց ներքեւ ծածկուած եղերական կեանքեր երգուած են գուսաններուն կողմէ:

Հաղիւ հասած էին փողոցին ծայրը, երբ իրենց դէմ ելաւ՝ մօտիկը ընակող հայ ընտանիքի մը կրտսեր զաւակը, պատանի էտմոնը, որ բարեւեց զիրենք ու հարցուց.

— Ո՞ւր կ'երթաք:

Երկուքը միասին պատասխանեցին.
— Սաքրէ Քէօր:

Էտմոն աւելցուց.

— Ես ալ Արթուրին գացած էի, որ միասին Վիէօ Մոնմարթը բարձրանանք, բայց տունէն կէս ժամ առաջ մեկնած էր ընկերոջ մը հետ:

Դերձակ Արչամ առաջարկեց.

— Ուրեմն ընկերացիք մեզի: Սաքրէ Քէօրի բարձունքին վրայ քիչ մը հանգչելէ ետքը, կ'այցելենք Վիէօ Մոնմարթը:

Էտմոն փութաց պատասխանել.

— Մերով, հաճոյքով:

Եւ երեքը միասին, հետիոտն բարձրացան բլուրին գագաթը, տեղ մը նստան, ու դիտեցին փարիզաբնակներու եւ դրօշաշրջիկներու խայտարեղէտ, բարեկենդանեան բազմութիւնը, բազկացած բարեպաշտներէ, հետաքրքիրներէ, պեղարուեստասէրներէ եւ օղապաշտներէ, քանի որ սրբութեան հետ կայ նաեւ մաքուր օդ այդ կատարին վրայ:

Արչամ հարցուց էտմոնին.

— Ըսէ նայինք, էտմոն, ի՞նչ որոշեցիր. ո՞ր ճիւղին, ո՞ր ճամբուն տուիր ընտրութիւնդ:

— Տոքթոր պիտի ըլլամ:

— Պատուական գործ է մարդիկը բժշկել:

— Ամէնէն առաջ, ինքզինքս պիտի բժշկեմ:

— Ինչո՞... Հիւանդ ես...

— Էրոնոմիքը ման:

Արա միջամտելով՝ հարցուց.

— Գէ՞ջ հիւանդութիւն է, փափա. Հայրը սաստեց.

— Գուն լու՛: Անգամ մը որ հարցումներուդ սկսիս, ա՛լ վերջը չի գար: Ապա, դատնալով էտմոնին՝ ըսաւ.

— Լուրջ հիւանդութիւն է, բայց անբուժելի չէ:

— Նոյնիսկ շուտ կը բժշկուի, եթէ հիւանդը յաջողի տոքթորի վկայականը ստանալ:

— Ի՞նչպէս...

— Ամուսնութիւնով: Հարուստի աղջիկ մը առնելով: Մոտեցնեն ալ, աղ-

չիկներն ալ խենթ կ'ըլլան տղթորի համար: Պատիւ ու պարծանք է տղթոր փեսայ, տղթոր ամուսին ունենալը:

— Միշտ աստ՞նկ է...

— Բաներ կան, որոնք տէ՛ւտնէ շեն ըլլար: Տղթորներուն հանդէպ յարգանքը յաւիտենական է:

Դարձեալ միջամտեց Արա.

— Ես ալ կը կարծէի որ մարդիկ կը վախնան տղթորներէն ու կը փախչին անոնցմէ:

Խամոն պատասխանեց.

— Ծի:Պ է, մեծ մարդիկ, մանաւանդ մանուկները շատ կը վախնան տղթորներէ: Ես ալ կը վախնայի: Բայց ասկէ ետքը, ուրիշները պիտի վախնան ինձմէ: Վախցնելն ալ հաճոյք մըն է:

Արշամ ըսաւ.

— Ուրեմն օտարափառարը պիտի ըլլայ սարսափելի:

— Սարսափելի ու սիրելի: Մանաւանդ յարգելի: Տղթոր վար, տղթոր վեր: Տղթոր՝ թիկնաթոռ, տղթոր՝ մենտոր, տղթոր՝ տիրէթոր, տղթոր՝ տիրտաթոր:

— Դուն բժիշկ ըլլալէ առաջ, բանաստեղծ եղեր ես:

— Մոռնալու չէ որ բանաստեղծները հիւանդ կ'ըլլան, ու պէտք կ'ունենան բրժիշկի: Ըսի որ ամէնէն առաջ, ես ինքզինքս պիտի բուժեմ, որ կարողութիւն ունենամ ուրիշները բուժելու:

Արա միջամտեց.

— Երբ Խամոն տղթոր ըլլայ, ես ալ չվախնալով իրեն կ'երթամ:

Խամոն հարցուց.

— Դուն ի՞նչ հիւանդութիւն ունիս: Հայրը պատասխանեց.

— Հարցում ընելու ախար ունի. ճար մը, դեղ մը կա՞յ...

— Ես ալ պատասխան տալու հիւանդութենէն բռնուած եմ: Հայրիկս ու մայրիկս ասանկ կ'ըսեն:

— Ի՞նչպէս է Հայրիկդ... Շատոնց է որ չեմ տեսած...

— Տիկին Հայրիկս շատ լաւ է, նոյնպէս պարոն մայրիկս:

— Ի՞նչ, ի՞նչ ըսիր... Հայրիկդ տիկին է, ու մայրիկդ ալ պարոն է...

— Այո՛, քանի որ Հայրիկս դողնոց կը կապէ ու խոհանոցի գործերով կը դրողի, ուրախ-ուրախ երկելով: Դուքսը անուտրական է, բայց տունին մէջ ճորտան պիտօ է, որով՝ տիկին Հայրիկ է: Գալով մայրիկիս, ան ալ քանքալովնով բաղկաթոփն մէջ երկնցած՝ կը ծխէ ու կը հրամայէ, որով՝ պարոն մայրիկ է: Քոյրս ալ պարոն օրիորդ է կամ մանչ աղջիկ, եղբայրս էթէ հարցնէ՞ք՝ օրիորդ պարոն է կամ աղջիկ մանչ: Եթէ քով քովի կենան, չէ՞ք կրնար ըսել, թէ ո՛րն է Արմանը, ո՛րն է Սիւզանը:

— Հապա դո՞ւն ինչ ես...

— Ես տղթորացու եմ: Տղթոր՝ թիկնաթոռ, տղթոր՝ տիրէթոր, տղթոր՝ մենտոր, տղթոր՝ տիրտաթոր: Արան ալ թո՛ղ դեղապործ ըլլայ: Ես անոր յոճախորդ կը զրկեմ, ան ալ կը զրկէ ինձի:

Արշամ սկսաւ մտածել, ու այս, հարցուց.

— Ես ի՞նչ եմ արդեօք...

Խամոն պատասխանեց.

— Դուք ալ կէս տիկին Հայրիկ մըն էք:

— Բայց ես ընաւ դողնոց կտպած չեմ, երբեք խոհանոց մտած չեմ:

— Բայց մեր գործը ասեղի չեաւ է: Ասեղ դարնիլը կնկայ գործ է:

Արշամ տիրեցաւ, իսկ Արա ըողոցեց.

— Մէ փափաս էրիկմարդերուն հագուստ կը կարէ, կնիկներուն համար հագուստ չի կարեր:

Խամոն շանթեց.

— Ատ էրիկմարդիկ ըսուածներուն մէջ, շատ ասելի կնիկներ կան, քան թէ կնիկներուն մէջ:

Արշամ եղբակացուց.

— Խամոն, գուն շատ մեծ տղթոր մը պիտի ըլլատ:

Խամոն հաստատեց.

— Հարկաւ, քանի որ տիակնոսքիքս չի սխալիր:

156-2000

— Իսոյց ինչո՞ւ էրիկմարդոց մէջ կնիկները շատցած են:

— Ընտանիքներու պահպանութեան համար: Ձէ՞ որ տունի մը այրը չքանալով՝ ընտանիք մը չի քանդուիր: Քանի որ կնիկները էրիկմարդ եղած են, էրիկմարդիկն ալ կին եղած են, ընտանիքը փրկելու համար կործանում է:

— Մեր անցիւղին հետ բաղդատելով՝ հիմակուան պատանիները եղած են փորձառու, փիլիսոփայ:

— Է՞, հիմակ յառաջդիմական դարու մէջ ենք: Զեր ատենը, պատանիները հագին դիտէին, թէ մանուկը ի՞նչպէս աշխարհ կու դայ: Հիմակուան մանչերը, մանաւանդ աղջիկները աստիկա շատ լաւ գիտնալէ դատ, զիտեն նաև թէ մանուկը ի՞նչպէս աշխարհ չի գար:

— Եստ չիտակ է:

Արա հարցուց:

— Ես ի՞նչոր աշխարհ բերում եմ, փափա:

Արշամ սաստիկ սաստեց իր մանչուորդը:

— Լու՛կ, խայտառակ: Քեզ ո՛չ ոք չբերաւ աշխարհ: Ղուն ինքզ էկար, անոնց մեր ուզելուն:

(ԵԿԵՂԵՑԻՒՆ ՄԷՋ)

Դ.

Կիրակի, յետմիջօրէի մը, դարձեալ Հայրիկը իր մանչուկին հետ ելած էր դուրս, թափառելու, երբ զիջ մը հետուն եկեղեցի մը տեսնելով՝ հողեկան պահանջ դրաց անքս մտնելու, աղօթելու:

Արային ըսաւ.

— Մանչուկս, մտնա՛ք Աստուած Պապային տունը ու մէյմէկ աղօթք ընենք:

Պառիկը պատասխանեց.

— Փափա, Աստուած Պապան ուս որչափ շատ տուններ ունի... Իր ընտանիքը շա՞տ մեծ է:

— Զագուկս, Աստուած Պապան շատ տուն ունի, շատ մարդ ընդունելու համար իր տուններուն մէջ:

— Մէ ինքը ժաւէ, ժամէ՛ իր տուններուն մէջը չէ. միշտ ապսամ է...:

— Տէրտէրները եւ վարդապետները, որոնք իր ծառաներն են, անոնք է որ կ'ընդունին Աստուած Պապային տունները զացողները:

— Աստուած Պապային տունը դարձողներուն ինչո՞ւ բան մը չեն հրոճցներ կոր... Ո՛չ սուրճ, ո՛չ պոնպուրի...

— Որիչ բաներ կը հրոճցեն, ժագուկս, կը հրոճցեն օրհնութիւն, հազորդութիւն, երգ, օրհնեալ ջուր, մատ, խուկի ծուխ եւ քարոզ: Մտնա՛ք: Աղօթք մըն ալ զո՛ւն ըրէ:

— Աղօթքով ի՞նչ ուղեմ, փափա:

Ի՞նչ ուղեմ Աստուած Պապային:

— Անպատճառ բան մը ուզելու չես:

Գովէ Զինքը: Ենորհակալ եղիր:

— Մեր վարժապետը կ'ըսէ Քի Աստուած Պապային խելք ինչորենք:

— Ո՛չ, ո՛չ. ունեցած խելքդ զեղի կը բաւէ հիմակուհիմակ: Եստ խելք ունենալն ալ փորձանք բան է: Մանաւանդ խելք ունենալով՝ անկեզ ու քաջ ալ բլլալը: Վազ անցիր, տղաս:

— Մէ, փափա, քանի Քի Աստուած Պապային տունը պիտի մտնանք մէ, բան մը ուզեմ, ի՞նչ կ'ըլլայ: Կաղանդ Պապային ի՞նչոր կ'ուզենք: Աստուած Պապան հազար հեղ հարուստ է կաղանդ Պապային: Հարկաւ ուզածներս կու տայ: Ի՞նչը կը պահսի իրեն: Բան մըն ալ քեղի Համար կ'ուզեմ: Բան մըն ալ մամայիս համար: Միմակ էի ըսէ ինծի ի՞նչ ուզեմ...

— Քանի որ միտքդ դրած ես անպատճառ բան մը քաշել Աստուածէ, ուրեմն է՛ն կարեւոր բանը ուղէ: Հայ աղօղին համար ուղէ բա՛խտ, նորէն բախտ, միայն բախտ: Եթէ բախտ ունենանք, ամէն բան կ'ունենանք: Մեր աղօղ ընդունակութիւններ շատ ունի, ձիրք, շնորհք, տաղանդ, հանճա՛ր ալ ունի, շինելու, շտկելու եւ աշխատելու կարողութիւն ունանդ ալ ունի, քարէն հայ հանելու, նաև պտուղ հասցնելու հնարքն ալ ու-



նի, միայն բախտ չունի, բա՛խտ: Բա՛խտ ուզէ:

— Մեղի համար բան մը չուզե՞մ...

— Քեզի համար ալ, մայրիկին համար ալ, ինծի համար ալ, ամբողջ հայերուն համար ալ բախտ ուզէ: Բախտն է մեղի պահածը; ազուր մանչուկս:

— Մէ, բախտը ի՞նչ է, փափա...

— Բախտ՝ յաջողութիւն ըսել է, յաղթութիւն ըսել է, հայուն հայ մնալը ըսել է, ամբողջ Հայաստանը հայերուն ըսել է, հայերուն հայրենիքի մէջ հաւաքուիլը ըսել է, հայերէն խօսիլ, հայերէն կարգալ, հայերէն դրել, հայերէն երգել, հայերէն սիրել, հայերէն աղօթել ըսել է: Բախտը հանդատութիւն, հանդարտութիւն, հարստութիւն, աշխատանք ու սրբութիւն արբոց Ազատութիւն ըսել է: Բա՛խտ, բա՛խտ պահանջէ Աստուած Պապայէն: Բա՛խտ՝ հայերուն համար, հայրենիքին համար, հայերէնին համար: Մենք Աստուած Պապային է՛ն հարադատ զուակներն ենք: Աստուած Պապան պարտական է մեզի:

Ու կը մանեն աղօթատեղիէն ներս: Քանի մը վայրկեան գլխիկոր կը մնան ամայի տաճարին մէջ: Ապա, կ'ելեն դուրս:

Հայրիկը կը հարցնէ.

— Ըսածս ուղեցի՞ր Աստուած Պապայէն:

— Այո՛, Բա՛խտ, բա՛խտ, բա՛խտ ուղեցի հայերուն համար: Ատկէ վտակ ըսի որ մեծ մայրիկին աղէկ նայի, հիւանդ չընէ: Ըսի որ մաւան ալ հիւանդ չընէ: Ըսի որ քեզի ալ, ինծի ալ հիւանդ չընէ: Ըսի որ Ինքը Իրեն ալ լաւ նայի, որ հիւանդ չըլլայ...

— Ո՞վ հիւանդ չըլլայ...

— Աստուած Պապան:

— Աստուած Պապան հիւանդ չ'ըլլար, ծագուկս:

— Կ'ըլլայ, փափա: Ան ալ հոգի ունի: Միշտ օգին մէջն է՝ մէյ մը ամպերուն մէջն է, մէյ մը լոյսերուն մէջը: Միշտ դուրսն է. արեւին ալ, անձրեւին ալ, ձիւնին ալ: Անտառի մանչերուն պէս՝ դուրսը մնալ կը սիրէ, շուրջը ներս դալ: Քե՛րան անձրի մէջ է. հարկաւ պաղ կ'անէ, հիւանդ կ'ըլլայ, հարբուխ կ'ըլլայ: Իր հիւանդութիւնը մեղի կ'անցնի, ու մենք ալ կըրթի կ'ըլլանք: Ասոր համար ըսի որ մեղի նայի, մէ Ինքը Իրեն ալ աղէկ նայի: Աստուած Պապան հիւանդ չ'ըլլայ եւ, մեղի բախտ ո՞վ պիտի տայ:



Յ. ԳԵՂՍՐԴ

ԱՌՕՐԵԱՅԷՆ ԱՆԳԻՆ

Ծո՛վը գայրագոս
 Անձրեւի շաչուն մտրակներուն տակ
 Երկինք ծառացող փրփո՛ւր աշտարակ,
 Ծո՛վը խելացնոր
 Ռմբագոս պայթում, կրրաբոյր փռչում
 Ապառաժ ափին.
 Ալիք անձկագին
 Օձեր՝ ողբատյլ, յօշոտող գիրար
 Կը գեղուն կանանչ, խաժ մա՛ղձ մ'անդադար...

Սակայն, քիչ անդին, Հորիզոնին տակ
 Ջուրերն են խաղա՛ղ, բուրո՛ղ մանիշակ:

Հով ու փոթորիկ
 Ամպերէն խըլած հըրավառ սուտեր,
 Բանակներու պէս խօլավա՛գ, անսէ՛ր,
 Հըրդեհ ու աւեր
 Կը ցանեն լերան ժայռակուռ լանջին,
 Հըրբդէ՛ն հարսնիք, —
 Ահով կը պարեն գիրկը կոյր հովին
 Ծառեր խորարմատ,
 Ջուրեր գայրագին՝
 Կը փռչրեն իրենց բիւրեղ հայելին,
 Կեանքէն՝ ձեռնունայն, մահէն՝ յուսահա՛տ...

Բայց ամպերէն վեր, գագաթն անվրկանդ
 Կը պահէ անբի՛ծ ձի՛ւնը ադամանդ:

Յ. Գ.

ՆՈՒՊԱՐ ԶԱՐԽՈՒՑԵԱՆ

ՄԱՀՈՒԱՆ ԿԱՄՈՒՐՋԸ

(Վ Է Պ)

Գ Ի Ր Ք Ե Ր Ր Ո Ր Դ

ՈՒՆԱՅՆՈՒԹԵԱՆ ԱՓԵՐԸ

ԳԼՈՒԽ Ա.

Անհուն տափաստանին վրայ, մահուան թաղաւորութիւնը իր սահմանները հաստատած է մինչև սունայութեան արիերը: Միակ շարժումը ես եմ, այս ճերմակ էջին վրայ:

Մինա՛կ եմ... մինա՛կ... մինա՛կ:
Հոն՝ հետուները, բարձունքներու վրայ խաչուած ընկերներս կը շարունակեն մեռնել: Անդամահատուած խամաճիկի անոնց շարժումները սակաւին կը դժուարութիւն հորիզոնի կապտորակ պատառին վրայ: Իսկ աւելի անդին, մեռելադաշտի վերածուած ճամբարէն, կը լսուի անմարդկային ժխոր մը, մեռնողներու եւ վիրաւորներու վայնասունը եւ հոնդիւնը խառնուած ողջերու հայհոյանքներուն եւ անէծքներուն:

Ուրեմն հիմա կը գտնուիմ նոր վիճակի մը մէջ: Երկար ամիսներ ապրելէ ետք Տառապանքի երկիրը, մտած եմ Մահուան թաղաւորութեան սահմաններէն ներս:

Օրը կ'երկարի յուսահատեցնող դան-

դաղութեամբ մը: Նոյնիսկ շուրջս չկայ դիակ մը, որ ինծի յիշեցնէ մարդ էակին կերպարանքը եւ դոյութիւնը: Շուքս դադրած է ընկերանայէ քայլերուս, եւ չ'երեւիր աւազներու զորշութեան վրայ, հակառակ որ արեւը չի յողմիք գիտ հալածելէ:

Ա՛հ, ա՛յդ արեւը... եթէ կարենայի դայն վար առնել, փամփուշտ մը զետեղելով իր անգութ արտին կեղրոնը: Այնքա՛ն տառապեցուց զիս, այնքա՛ն տառապեցուց կալանաւոր ընկերներս, եղբայրներս:

Վերջապէս կրակէ բռնակալը կը գծի զահագիտիլ, կը քայլեմ աւելի արագ: Աջ կողմս կը տեսնեմ զիւղի մը աւերակները: Ոչ մէկ կեանքի նշան: Տուները կ'ողորան վիրաւորուած այրիներու պէս: Կը գտնեմ զիւղին շուրջը, դայն ամբողջութեամբ տեսնելու համար, կը մտանամ կիսափուլ հիւղակի մը: Ներս կը մտնեմ զգուշութեամբ, զետինը կ'երկնեմ քրնանալու համար:

Այդը աղօս լոյս մը կը սփռէ պատերուն վրայ: Կը թափափմ փողոցներուն

մէջ, յուսալով որ կրնամ շնորհ էակի մը հանդիպել: Ետնի մը տխուր նայուածքը, կատուի մը մեղմ մլաւիւնը պիտի ուրախացնէր հուրս: Ո՛ր են արդեօք այս դիւղին բնակիչները: Ո՛ր են փողոցներու մէջ խաղցող հայ մանուկները:

Փոքրիկ հրապարակին վրայ, եկեղեցիին դռան առջեւ շարուած են կիներու եւ երեխաներու հարիւրաւոր կօշիկներ: Աստուծոյ տունը սրբապօրծուած է, եւ հաւաքացեալը պէտք չէ անոր դետինը աղտոտէ ներքաննհրու ցեխովը: Սակայն ներսէն ո՛չ երգի, ո՛չ շարականի եւ ո՛չ ալ աղօթքի շուրջ կը լսուի: Մտրդ մը ինծի կը սպասէ, կոթնած եկեղեցիի դռան: Ուրախութեան ճիչ մը կ'արձակեն, կը մօտենամ անոր հետ խօսելու համար: Պիտի սեղմեմ դայն կուրծքիս վրայ: Կերկարեմ ձեռքս, կը դպչիմ ձախուսին... եւ մարդը՝ առանց ինծի պատասխանելու, առանց երեսիս նայելու, մէկ անդամէն կը փլչի թաքերուս առջեւ:

Եկեղեցիին պատերը սեւցած են մուխէն: Այրած միտի հետ մը կը ծորի պատին ծակտիկներէն դուրս: Պէտք չկայ աւելին փնտռելու: Գիտե՛մ, գիտե՛մ: Ճամբուս վրայ այսպիսի բաներ շատ պիտի տեսնեմ: Քանի մը հարիւրաւոր մարդկային անպէտք էակներէ՝ ձերբազատուելու ամէնէն աժան միջոցը հետեւեալն է. կը փնտռեն հայկական եկեղեցի մը. դահլիճներէն մէկը կը բարձրանայ անոր տանիքը եւ լուսամուտէն քանի մը թիթեղ քարիւղ կը սրսկէ վարը՝ բանտարկուած ամբոխին վրայ: Լուցիկի մը կը բաւէ, վերջացնելու համար սկսուած ցործը: Յետոյ կարելի է շրջանակ մը կազմել եկեղեցիին շուրջը, եւ մտիկ քննչ ներսէն բարձրացող համանուագրու քցելու ոռնոցը, եւ այրուողներու սողողօրմ վայնասունը: Մտրդիկ կան սրտնջ ջիղիւր կ'ախորժին՝ այսպիսի հազուադէպ հեշտանքներէն:

Կը ծաննեմ տուն մը: Պատի մը անկիւնը կը դռնեմ քարացած հացի մը կըտորը եւ քանի մը հատիկ չամիչ: Կը վերջընեմ հացը: Անոր եզերքը քանդակուած են սպիտակ ակունքներու հետքեր: Մանուկ

մը կը խածնէր այս հացը. չամիչները մէկիկ-մէկիկ կը հանէր իր դողողին զրպանէն ու բերանը կը նետէր, երբ յանկարծ դահլիճները ներս խուժեցին: Հիմա աղուն գիտկը կը դանուի եկեղեցիին սեւցած պատերէն ներս:

Կ'ուտեմ հացը եւ չամիչները: Կը քաշեմ փողոցի մը մէջ: Դպրոցի դռան քով կը դանուի ջրհոր մը: Ճախարակը, շուանը եւ դոյլերը տակաւին դործածելի են: Ինչ լաւ կ'ըլլայ, եթէ լեցուն գոյլ մը ջուրով յաղեցնեմ ծարաւս ու լուսած երեսիս աղտոցը: Կը սկսիմ վար իջեցնել դոյլերէն մէկը: Ճախարակը կը ճռայ, կը ճռայ մէկու մը պէս, որ չի դիմանար ցաւին: Դոյլը կը հասնի յատակը, սակայն շուանին կէսէն աւելին տակաւին դուրս մնացած է: Ես կը քաշեմ դոյլը. թիթեւ է ու սրբապ: Քոր մը կը նետեմ ջրհորին մէջ, հասկնալու համար, թէ ջուր կա՞յ յատակը: Քարը կ'իջնայ եւ ջուրին ձայնը չեմ լսեր: Կը նայիմ դէպի վար: Գարշահոտութիւնը կը խեղդէ զիս...:

Կերան հացս ու չամիչը կ'այրէ կորդոս. պատանները շարուած են կուրծքիս մէջ: Պէտք է ջուր խմեմ անպայման: Կը հեռանամ դիւղէն ու կը քաշեմ դէպի հիւսիս, Եփրատի սեղոութեամբ: Վրտանդաւոր է այդ դռան, ջարդարարներ կը վիտան հոն, բայց նաեւ հոն կայ առատ ջուր:

Արեւը զիս կը հայածէ ու կը շարժարէ: Ան միանգամայն իմ յոյս եւ իմ առապանքն է: Կէսօրուան ժամ, կը հասնիմ թիթեւ զառիթափի մը սկիզբը: Դիմացս կը տարածուի կոր տափարակութիւն մը, որուն կեղծոյր կը փայփայի ճերմակ մակերես մը: Կը ճանչնամ այս վայրը, Պրտտի աղաւաղանն է, չորցած աղի լճի մը յատակը: Սխալ համբայ քաշած եմ. փոխանակ հեռանալու, անզգայարար մօտեցած եմ տիրահաշակ ճամբարին: Պէտք է շեղեմ ճամբաս դէպի հիւսիս-արեւմուտք:

Աղի խաւը կը բոցափայտի ճերմակ խարոյիկի մը պէս եւ կը ծածկէ աչքերս: Միակ բիծը այս սպիտակութեան վրայ՝

գրականորէն կոչու մը : Քիչ մը անպիկն , երկտասարդ կին մը՝ կոնսակին վրայ պատկած եւ նորածին մը՝ փակած բաւտիքներուն եւ պղտիկ մատները պոկած՝ մօրը երկար մաղերուն : Կատուանի մը Հետքերը չկան աւաղին վրայ : Ի՞նչպէս այս կինը քարած է մինչեւ հոս : Ի՞նչ ինկի՞ յայտ մղուած՝ կրցած է հասնիլ մինչեւ այս կէտը եւ մեռած՝ անթիւ թոշունի մը պէս :

Պէտք է քաշեմ երեք ժամ անուշազն , դուրս դալու համար այս անկայուն աւաղի տարածութենէն : Քայլերս կը ծանրանան ու կը ձգեն խորունկ Հետքեր : Ձառիվերը կը ցցուի առջեւ , անառիկ լերան մը լանջքին պէս : Կը նշմարեմ նեղ ձկնք մը , մայրի մը ստորուոր , եւ շքնապարտ կը նետուիմ այս հեղձուցիչ շուքի ծուկնին տակ , պատասպարուելու համար արեւին սպառնայիքներուն դէմ : Չեմ փոփաքելր կրկին կանգնիլ ոտքերուս վրայ : Վերջապէս գտած եմ յարմար դերկման մը :

Յանկարծ շանթահարող ցաւ մը պիտ դուրս կը քաշէ թմրութեան անդունդէն : Կը նստիմ ընդոսա եւ կը նշմարեմ սեւ կարիւն մը , որ կը վաղէ սրունքիս վրայ : Կը կանգնիմ՝ գայն ճղմելու համար ներբանիս տակ , բայց ուշ է արդէն : Միջաւար անհետացած է Հողին ընդկրքներուն մէջ : Յաւր կը տարածուի մարմնէս ներս բոցէ ալիքներու պէս եւ այս անտանկի աչուածքը զիս կը շաղկէ իր բազուկներուն մէջ , մահուան խորխորատներէն վեր , փրկարար լատտի մը պէս :

Թունաւոր խայթոցի հարուած մը զիս բաժնեց մահուան կապանքներէն : Կարիճը կեանքս փրկեց իր թոյնով , եւ ես կը մտադրէի ճղմել փրկիլս :

Դուրս կ'ելլեմ խոռոչէն եւ կը քաշեմ խամաճիկի մը պէս , որուն մեքենան խանգարուած է : Մինակ եմ տեսողութեան եւ տարածութեան առջեւ : Մերկ եմ որդի մը պէս՝ անթութեան , ծարաւին , տառապանքին եւ արեւին առջեւ :

Կը քաշեմ մինչեւ իրիկուն , առանց հանդիպելու կենդանի էակի մը : Սողալով կը մազլցիմ բարձունք մը , որ կը

զոցէ Հորիզոնը : Կը գտնուիմ ապտածին վրայ , որ կը ցցուի Եփրատի Հոփխտին եղերքը : Գետը կը հասի դէմս , բուսական Հետու , բայց կրնամ անոր հասնիլ մուսթը չկոխած :

Կ'արագացնեմ քայլերս , որովհետեւ տարածութիւնը մերկ է եւ անպայման գինուորներ կը շրջին երկու ափերուն վրայ , փախտականները հայածելու համար : Քաղցր մթնշաղին մէջ , որ կ'ողբայ եղէգներու օրօրուելուն ընկերանտրու համար , կը կարծեմ լսել հառաչներ : Անոնք կու դան դատին կողմէ :

Վերջապէս հասած եմ եղերքը : Գլուխս կը միւրճեմ ջուրին մէջ եւ կը խըմեմ դանդաղօրէն , երկարօրէն : Կը վերածնիմ : Բան մը կը քսուի մաղերուս : Գլուխս վեր կ'առնեմ : Կնոջ մը մերկ դիակն է , որ հոսանքը բերած է դէպի ինձ : Երկտասարդուհի մըն է , հաղիւ քլասան տարեկան : Կոկորդը կտրուած է , մէկ ականջէն մինչեւ մյուսը : Կը նետուիմ ջուրին մէջ եւ դիակը կը քաշեմ գէղի եղերքը : Պէտք է թաղեմ դայն կտակող ու խոնաւ հողին մէջ : Կրնայ քոյրս ըլլալ : Սակայն հոսանքը դայն կը Հեռացնէ ինձմէ եւ ինչպէս որ բերաւ , կ'առնէ ու կը տանի :

Քիչ մը անդին ուրիշ գիակ մը , յետոյ . աւրիշ երկու հատ , եւ ահա դիակներու կարաւան մը , քսան-կրեստին հատ : Բոլորն ալ երկտասարդ կիներ եւ ազլիկներ են , մօրէ մերկ : Իրենց ճերմակ մարմիններուն վրայ կը կրեն ահռելի վէրքեր՝ կոկորդին , վիդին , կուրծքին , փորին : Եւ բոլորն ալ , պատկած են իրենց կոճակին , վրայ , աչքերը յառած երկինք , որպէսոյի աստղերը անոնց մէջ կարգան յաւիտենական յանդիմանութիւն մը եւ լան անոնց կորսուած կուտութեան վրայ :

Կը նստիմ խոնաւ հողին վրայ ու կը դիտեմ մեղապարտ ջուրերը , մինչեւ որ գիշերը փոշ իր աստղադարդ սեւ վերարկուն այս բոնարարուած կոյսերու մերկութեան վրայ :

Կէս գիշերուան մօտերը կը լսեմ կրբակոցներ : Մարդիկ կը վազեն եղէգները

ճեղքելով, ուրիշներ կը հետապնդեն դա-
նոնք հասցոյեցով: Մարմիններ կ'իյնան
ջուրին մէջ: Կը հասկնամ պատահածը:
Անշարժ ու լուռ կը սպասեմ որ փոթո-
րեկը վերջանայ: Ձինուորները հետու կը
կենան եղէղներէն: Նհատելով որ ոչ մէկ
շարժում կայ իրենց շուրջը, կը վերա-
դառնան իրենց բանակատեղիները:

Ձեմ կընար հոս մնալ աւելի երկար:
Երբ լոյսը բացուի, այն մարդիկը եւ կի-
ները, որոնք պահուարեցան եղէղներու
մէջ, պիտի յայտնուին, զինուորները
պիտի վերադառնան, կըլին պիտի կրա-
կեն:

Կ'իջնեմ դետին մէջ, սուսնց ազմու-
կն: Սակայն կը նախընտրեմ խեղդամահ
բլլալ մեր լեռներէն իջնող դետին ստոն
ջուրերու մէջ, քան կրկին ինչալ դա-
հիճանքուն ձեռքը: Գետափէն քանի մը
մեթր անդին շուրջ կ'անցնի հասակս, եւ
կը սկսիմ լողալ: Հասանքը երթալով կը
զորանայ: Անկարելի է բնթանալ ուղիղ
դժով: Ինքզինքս կը յանձնեմ հոսանքին,
չանալով նոյն ասեւն մտենալ միւս ա-
փին: Յարդի շեղի մը պէս կը ծփամ,
կը տատանիմ ջրապտոյտներու եւ հակա-
հոսանքներու խաղալիք: Եթէ Աստուած
ձեռք մը չերկարէ ինձի, պիտի վերան-
ւիմ ադ հազարաւոր դիակներէն մէ-
կուն, որոնք կը նաւարկեն ղէպի Ռաքքս
եւ Տէր-Ջոր:

Հուսարացը շատ հեռու չէ: Ան միշտ
կը քայլէ ձեռք ձեռքի իր նոր քրոջը՝
Մահուան հետ: Կրնան զիս յանկարծակիի
բերել: Եթէ հոս պիտի մեռնէի, ինչո՞ւ
ուրեմն լքեցի այն փայտը, որուն երկ-
ճիւղի՞ն նեցուկ մըն էր ինձի:

Կ'աշխատիմ հեռանալ հոսանքէն: Կը
գտնուիմ աւելի հանդարտ ջուրերու մէջ-
կը կսկսեմ քարի մը վրայ, կը նետուիմ
առաջ եւ ուժաթափ կ'իյնամ ցամաքին
վրայ: Դժբախտաբար այս կողմը եղէպ-
ներ չկան զիս պատսպարելու համար:

Միւս ասիին վրայ կրակոցները կը
վերսկսին: Սողալով կը մտնեմ ժայռի
մը: Արեւը կը բարձրանայ ու կը չորցնէ
հազուատներս, յետոյ կը սկսի այրել
զիս:

Երկու օր եւ երկու դիշեր քալեցի
այսպէս, խուսափելով գիւղերէն եւ ճամ-
բաներէն, ուտելով խոտեր եւ արձատ-
ներ:

Հիմա Տաւրոսը կը ցցուի դէմս ա-
նանցանելի պատնէշի մը պէս: Կը քայլեմ
ամայի ու գորշ հովիտի մը մէջ: Առտը-
ւընէ ի վեր ոչ մէկ շնչող էակ յայտնուած
է տեսողութեանս վրայ: Ետանդս ան-
ուսման է: Կը մտղջրիմ բարձր ժայռի մը
վրայ, գիտելու համար շրջակայքը: Գէժս
դէպի աջ կողմը, բարձունքի մը վրայ կը
նշմարեմ ընդարձակ շէնք մը: Գոբէթնե-
րէն մէկունս վրայ կանգնած է իսլ մը:

Կը մտնեմ զգուշութեամբ: Պա-
րիսպին վրայ մողջելով աչք մը կը նե-
տեմ ներսը: Ամայութիւնը եւ լուսթիւնը
կատարեալ է: Խրամատէ մը կը սահիմ
ներս: Մատուռի մը շուրջ, կան փլատակ
շէնքեր: Անդին, ընդարձակ պարտէզ մը՝
այրած կոնդերով եւ մեռած թռչուն-
կմախային ճիւղերով: Աջ կողմը, պա-
րիսպին մօտ, հողի կոյտեր, որոնց փայ-
տէ իսպրը, յողնած գործաւորներու
պէս հակած են ալ ու ձախ:

Կը քայլեմ կեղբոնական շէնքին պա-
տին ջովէն, եւ կը մտնեմ պարտէզին:
Չարչարուած ծառերուն տակը ցանուած
են պարսպ փամփուշտներ, պատուտուած
ցնցոտիներ: Մատուռին միայն պատերը
կանդոււն են եւ մաս մըն ալ տանիքէն:
Փոքրիկ դանդախատունը անփնաս կը թը-
ւի:

Վերէն լոյս կը տեղայ սալաքարե-
րուն վրայ, մինչ դասը քողարկուած է
մեզմ ստուերով մը: Խորանէն քանի մը
քայլ հեռու կը գտնուիմ, երբ մարդկա-
յին կերպարանք մը տղքի կը կանպի ու
կը քայլէ իմ կողմս: Երիտասարդ մըն է,
սեւ ջուրջներ հազած: Թաւ մազեր, մա-
ցառի մը պէս, կը ծածկեն դէմքը, եւ
անոնց մէջէն կը փայլին աչքերը՝ յոգ-
նած ջերմութենէն եւ անքնութենէն: Ա-
նոնց մէջ կայ աւկայծ բոց մը, որ պիտի
չուշանայ շիջելու: Ես ալ անհնալու եմ
նոյն կերպարանքը, նոյն ցնցոտիները:
Կը հասկնայ որ ես ալ իրեն պէս կ'ապ-
րիմ մարդկութեան լուսանցքին մէջ: Թէ

ևս ալ փարիս մըն եմ: Եւ կամաց-կամաց, ժպտի նմանոց բան մը կը յուսաւորէ իր գիշերային նայաւածքը: Այս բոլորը կը քանդէ դիմադրութիւնս: Քայլ մը կ'առնեմ իր կողմը, կը բանամ թևերս: Կ'ուզեմ որ սրտիս վրայ արտփէ մարդկային սիրտ մը, որովհետեւ յուսախար եղայ, կըր գիւղի հրապարակին վրայ ողջագուրեցի մարդ մը, որ չէր շնչեր եւ չէր խօսեր: Դէմս ունիմ մարդ մը, բարեկամ մը: Միտսին պիտի կարենանք կտորել միակուսեան աջանը: Ողջագուրուելու ատեն մեր ոսկորները մարմանեցին եւ մեր սրտերը սկսան տըրտփել նոյն կշռոյթով: Երկարօրէն լացինք միասին մեր ժողովուրդին դժբախտութիւններուն վրայ:

— Եղբա՛յր, — ըսաւ վերջապէս, — դուն Հեռունընէն կու գաս, յոգնած ես ու անօթի: Եկո՛ւր, զպրատան մէջ փրկուած կայ անկողին մը, հանդիստ ըրէ մինչեւ որ քեզի ուտելու բան մը ճարեմ:



Կրկին դուրս կու գամ շղոյթութեան սովորանոէն: Անճարակ լողորդի մը պէս, սասիճանաբար կը բարձրանամ զէպի կեանքին տփերը: Ինձի այնպէս կը թուի, թէ անդամներս ինձէ անջատուած են, թէ մարմինս բաժնուած է մասերու, եւ թէ պէտք է գոհնեմ այդ մասերէն ոմանք, փրկելու համար մնացեալը:

Կը բանամ կոպերս: Տակաւին դիշեր է: Կը զննեմ ստուերը: Կը շօշափեմ խաւարը, բանի մը կառչելու համար: Դիմացի փոքրիկ լուսամուտէն, թոթոյանքներու պէս, որոնք կամաց-կամաց կը փոխուին սքախուսեան ճիւղերու, սաստիկը սլալացումը զիս կը միացնէ կեանքին: Ինձի այնպէս կը թուի, որ ոչ մէկ միջոց զիս կը բաժնէ երկնակամարէն եւ թէ ես կրնամ զուլի անոր, եթէ կարենամ միայն թեւերս տարածել:

Քունը կրկին զիս կը տանի: Երբ աչքերս կը բանամ վերստին, աստղազարդ քոյրը, որ կը լըջապատէր զիս, տեղի տը-

ւած է սպիտակ տարածութեան մը: Կ'երթեմ տեղէս, եւ կ'երթամ կը նստիմ մասուռին մուտքի սասիճաններուն վրայ: Յնցոտիներ հազած մարդը կը յայտնուի զէմս:

— Ի՞նչպէս կը զգաս, — կը հարցնէ: — Երէկուրնէ քիչ մը աւելի լաւ: Մեռելները չեն կրնար շատ լաւ ըլլալ: Անօթի եմ... շատ:

— Երէկ՝ բաներ մը պատրաստած էի քեզի համար: Սակայն քունդ այնքան խորունկ էր, որ չուզեցի քեզ արթնցնել: Քունը աւելի կը կապուարէ, քան սնունդը: Քունը մեղ կ'անջատէ մեր բնազդներէն, կը կայանաւորէ մարմինը եւ ազատ թռիչք կու տայ Հողին:

Ըսածները շատ ճիշդ էին. սակայն մարմինն ալ ունէր իր պահանջները, իր նեցուկի պաշտօնը կատարելու համար Հողին հանդէպ:

— Երթա՛նք, — ըսաւ. — ճաշը պատրաստ է:

Կը քաշենք ընդարձակ քակին մէկ կողմէն միւսը: Կը մտահոնանք այն շէնքին, որ դըւթէ գեանին հաւասար եղած է: Կ'իջնենք քարէ սասիճաններ: Կը դուռը-ւինք ընդարձակ գեանայարկի մը մէջ: Նեղ յուսամուտներէ կը հոսի աղքատ լոյս մը: Պատին մէջ քացուած է հսկայ օճախը: Երկաթէ եռոտանիի մը վրայ, կ'եռայ խոշոր կաթնայ մը: Պղինձէ անաղ-ւած ամաններ շարուած են անկիւն մը, կուժի մը քով:

— Վարպետ խոհարար մը շեմ, եղբայր, — կ'ըսէ. — Եւ մեր ունեցած պաշարին տեսակն ալ քիչ է. բայց եփածներս լաւ կը կշտացնեն:

Քաշուած ոսպոյժ ու ձուարոյժ սպորի ամանը կը զնէ տոջեւս, ու ես կու տեմ մեծ անորձակոյժ: Ամիսներէ ի վեր ատաղին մարդկային կերակուրն է, որ ինձի կը հրամցուի: Եւ մինչ ես կը լստիմ պնակին պարունակութիւնը, բոց աչքերով երիտասարդը կը խօսի:

— Անունս Մեարոյ է, — կ'ըսէ, — ես այս վանքին վերջին արեղան եմ: Ամիս մը ատաղ, այստեղ կ'ապրէին քառասունէ աւելի կղերականներ: Մեր վանքը կը

զտնուի անուպատի մը կեղզրոնք, բանուկ ճամբաներէ հետու: Այդ պատճառաւ կատաբարութիւնը շտտ աշարհութիւն չէր դարձնէր մեր վրոյ: Աքսորեաներու կարաւանները կ'անցնէին մեղմէ շատ հեռու, տնայատի եղերքներէն: Եւ մենք անկարող էինք անոնց օգնելու: Աւտու մը, բլուրի վարի կողմը նշմարեցինք հարիւրաւոր քերէր, կիներ եւ երեխաներ: Անոնք կու դային հիւսիսէն: Հսկայ կարաւանի մը մտացորդացներն էին, տեղաւանուած Պիթիսէն եւ Մուշէն: Մեկնելու օրը, անոնց թիւը տասը հարարը կ'անցնէր: Երբ կ'անցնէին նեղ կիրճէ մը, հարիւրաւոր քերտեր, որոնք դիրք բռնած էին ժայռերու վրայ, շարձակած էին անպաշտօտն ամբոխին վրայ: Կրակ կը տեղայ ամէն կողմէ: Նոյն այն ժամ տարժաները, որ պաշտօն ունէին դիրենք պաշտպանելու, միացած էին քերտերուն ու կը կրակէին անխնայ իրենց պաշտօնի տարածքներուն վրայ: Անդհերուն վախճանը յատկապէս իր քրտապարտած էին մեռնելու այս լեռներու լանջին: Փրկութիւն չկար: Ճիշդ այդ միջոցին, լեռան մը գագաթը երեւցան խուճար մարտիկ ու անմիջապէս կրակ բացին շարձակողներուն վրայ: Հայ Փետայիներ էին: Քերտերը եւ ժանտուրմաները խուճարի ժանտուեցան եւ դիրքերին լքելով սկսան վախճիլ: Փետայիներուն գրեպակը չէր վրիպեր իր նարտակէն, եւ քաղձաթիւն զիսկներ գահադիմեցան մինչեւ կիրճին յատակը: Փետայիները գիտակցեցին մեր վանքին դիրքը: Եւ վերապրողները առաջնորդելով՝ ասի ասին մեր դուռը: Անմիջապէս ներս ընդունեցինք զիրենք: Մեր մարանները լեցուն էին պաշարով եւ մեր դիրքը անմատչելի էր: Քանի մը օր վերջ, հսկայ բանակ մը եւ քերտ հրատարակեցին պաշարեցին մեզ: Բարձրատարճան սպայ մը պատուիրակութեան եկաւ, եւ մեր մեծաւորէն պահանջեց, որ իրեն յանձնէին ոչ միայն Փետայիները, այլ կարաւանին վերապրողները: Վանահայրը, գուշակելով անոնց վիճակուած ճակատագիրը, մերժեց: — Քեզի՛չ, ըսաւ սպան, վանքը հո-

ղին պիտի հաւատարիս — Իմ վանք չէ, սպայ էֆենտի, իմ ժողովուրդիս տունն է, եւ այս վայրկեանին ան կը պատկանի այս բոլոր խեղճերուն: Ղոթս կ'ուղէք կըրկին զրկել մահուան ճամբաները: — Աւրեմն այս է վերջին խօսքը: — Այո՛, ըսաւ Վանահայրը, ուղիղ նայելով թշնամիին աչքերուն մէջ:

«Եւ շարձակումը սկսաւ: Կտիւն վախճանը ի նպաստ թշնամիին էր: Ի՞նչ կրնային ընել քան զաջերը հարարուոր արիւնարբու վայրագներուն դէմ: Թրնդանաթները դռացին մինչեւ կէսօր, յետոյ սկսաւ դրոհը: Փետայիները կը կըրէին առեճներու պէս: Իրաքանչիւր մարդ պարիսպներու վրայ անցած, կը ժանակցէր վանքին պաշտպանութեան: Թշնամին նահանջեց մէկէ աւելի անպամներ: Ա՛հ, եթէ հարիւր հաս միայն աննայինք այս զաջերէն: Գիտեա ինչպէս կը վարուին թուրքերը իրենց թշնամիին հետ: Եթէ թշնամին գորաւոր է, թուրքը կը դառնայ շնորայլ, եթէ թշնամին տրկար է, թուրքը կը դառնայ վազր»:

— Իսկապէս հրաշք է, որ գուն ողջ ելած ես այդ դժոխքէն:

— Եղբայրներուս գիտկները զիս պաշտպանեցին: Աղջեր պէտք են մեռելները առաջնորդելու համար իրենց վերջին բնակարանը:

Կաթսային դուրը անցաւ, խառնեց մէջէնը վայրէջեց զգալով մը: Սետոյ զիս դուրս հրաւիրեց:

Կը զալենք մինչեւ խրամատ մը, որ կը նայի դէպի արեւելք: Արեւը կ'ողողէ ամէն տեղ եւ կը ջնջէ նոյնիսկ քարձունքներու շուքերը:

— Տե՛ա — կ'ըսէ Մետոյ պրկտան, — այս պաշտպայրը, որ Տաւրուսն մեկնելով կ'իջնէ դէպի Եփրատ, անկէ անդին կը կաղմէ Մուրիոյ, Միջագետքի, Պարսկաստանի տափաստանները: Քան զոր պտաջ, ան մաս կը կաղմէ մեր Մեծն Տիգրան թագաւորին հակաք կայսրութեան: Այդ ընդարձակ բլուրը, որ տեղացիները կը կոչեն Թել էրմէն, կը կրէր Տիգրանակերտի պարիսպները, պաշտպանները եւ տպաւորները, եւ հրաշալի մայ-

բազաղաքը հայկական կայսրութեան, որ կը տարածուէր Սեւ ծովէն մինչեւ Կարմիր ծով, եւ Միջերկրականէն մինչեւ Պարսից ծոց: Գտան թագաւորներ՝ գըլխարաց կը քալէին Տիգրանի յաղթական սայլին ետեւէն: Պէլացի էր եւ յանդուզն, բայց դժբախտութիւնը ունեցաւ շուք ձեռքու հոսմէական կայսրութեան վրայ, ճիշդ այն պահուն, երբ ան կը գտնուէր իր յօրութեան զաղաթնակէտին եւ ունէր զօրավարներ, որ կը կոչուէին Յուլիոս Կեսար, Լուկուլլոս եւ Պոմպէոս: Ազգեր կան, որ կը ծնին զէջ աստղի տակ եւ կը դարձնեն՝ երբ պէտք է հանդիստ կենալ ու սպասել: Այս եղած է նաեւ պարտղան Հայ աղգին:

Եւ ահա քսան դար ետք, եոյն այս դաշտին վրայ, ուր Հայ լեզուները փախուստի մատնած էին Լուկուլլոսի բանակները, տեղի կ'ունենայ ամէնէն ահանքի ողբերգութիւնը, որ կարենայ սեւցընել պատմութեան էջերը յախտեանս յախտենից:

— Մերոսպ արեղայ,—բոյի,— դուն ինչո՞ւ կը մնաս այս ամայի փլատակներուն մէջ:

— Ո՞ր կ'ուզես որ երթամ: Ճամբուը ընթացքին կրցա՞ր հանդիպիլ վայրի մը, ուր Հայը ինքզինքը ապահով գղայ: Եւ յետոյ, մի՛ մոռնար որ այստեղ կ'ապրին տակաւին դժբախտներ, որոնք ծառայութեան պէտք ունին:

— Դժբախտե՞ր... Բայց ո՞ր են այդ շնչող էակները:

— Չուննք պահած եմ մտանձնորու մէջ, որովհետեւ թշնամի զինուորները կրնան վերադառնալ:

— Պէտք է որ քեզի օգնեմ: Պէտք է փրկել այդ դժբախտները:

— Փրկել: Եթէ մէյ մը տեսնէիր դանոնք: Դիակներ են, որոնք կը շարժին տակաւին, որովհետեւ Մահը մոռցած է զիրենք: Չանոնք փրկել անկարելի է: Մօտ ատենէն պիտի մեռնին: Ծաւ պիտի ջրնամ մեռնիլ անոնցմէ ետք: Եթէ ոչ, ո՞վ պիտի գոցէ անոնց աչքերը, ո՞վ պիտի ազօթէ անոնց վրայ: Դուն տակաւին կ'ենդանի եւ, առողջ մարդ էակ մըն

եւ, մի՛ զբաղիր անոնցմով, մի՛ զբաղիր մեռելուներով:

— Ո՞վ բտա որ ես կենդանի մըն եմ. ես իսկական մեռել մըն եմ: Կողք կողքի ապրած եմ մահուան հետ անվերջամայի օրեր: Մահը ընկերուհիս է, գոյրս: Այնքան բարի է անոնց համար, զորս կը շարշարեն, անոնց համար որ կ'ոռնան տառապանքէն: Ես մէկն եմ այն քոսն հազար գերիներէն, որոնք կ'աշխատէին Մահուան Կամուրջին վրայ: Եւ թերեւս միակ վերապրողն եմ: Խոնաւ հող կեցած եմ անթուփեմէն եւ ծառայէն յմեռնելու համար: Տեսայ ընկերներուս մորթիւր ոչխարներու, օգէս... Տեսայ անդուխ մարմիններ, որ կը փորձէին ոտքի կանգնիլ եւ քուլել, հարիւրաւոր կտրուած ձեռքեր, որոնք կը ցատկուտէին, շարժուլով իրենց մատները. սիրտեր, որոնք կը ժայթքէին կուրծքերէ դուրս, արիւնլուայ թռչաններու պէս, որ կը փախչին իրենց վանդակներէն. աչքեր, որոնք կը կախուէին ակնակապիճներէն դուրս, կուպեր, որոնց թարթիչները կը սարսուային տակաւին:

— Եթէ կ'ուզես տոկուլ ժամանակին, պէտք է որ սահնակ պատրանքներ Գիտցի՛ր, որ այս վայրկեանիս կենդանի մարդ մը կ'արժէ աւելի քան ամբողջ քաղաք մը, որ հոգեվարքի մէջ է: Մեր ժողովուրդին փրկութիւնը կախում ունի թե՛րեւս մէկ հատիկ մարդէ:

— Մահը կը հարուածէ այն անձը միայն, որ իրմէ կը սոսկայ:

— Եկո՛ւր եւ տե՛ս: Ուղեցի այս բոլորը պահել քեզմէ, սրպէսդի կեանքը տեսնես աւելի պայծառ, ապրելու եռանդդ վառ մնայ: Դիակներ կան որ կը խմեն, կ'ուտեն, կը խօսին եւ կը տառապին:

Կը հետեւիմ իրեն: Կ'անցնինք մատուռին ետեւի կողմը եւ կ'անդ կ'առնենք ցած դրան մը առջեւ: Քարէ սանդուխի մը առաջին աստիճանները կ'երևին: Անտանելի դարձահոտութիւն մը կը դիմաւարէ մեզ: Մերոսպ արեղան կ'անհետանայ խաւարին մէջ: Կ'իջնեմ աստիճանները մէկիկ-մէկիկ եւ կ'անդ կ'առնեմ

վերջինին վրայ: Բան մը չի՞մ գանապա-
նէր շուրջս, որովհետեւ այն տկար լոյ-
սը, որ կը ծորի նեղ լուսամտաներէն եւ
զուռնէն, չի բաւեր փարատելու ներսի
սպիմառզըր:

Յանկարծ կը լսեմ հեւք մը, չոր հազ
մը: Սուշ ձայն մը «ջուր» կը պոռայ: Եւ
ամէն կողմէ կը բարձրանան կաղկան-
ձուժներ, ունոցներ, կանչեր, աղաչանք-
ներ, անէծքներ եւ հայհոյանքներ: Եւ
այս անդրախրեմեան թռչուրոհին մէջ,
կը լսուի արեղային անձկային եւ մխի-
թարական ձայնը:

— Եղբայրներ՛ք, համբերեցէ՛ք: Տա-
ռապեցէ՛ք, առանց տրանջայու: Ձեր փր-
կութեան ժամը հնչելու վրայ է: Աստ-
ուած միշտ ձեռք կ'երկարէ տառապող-
ներուն:

— Աստուած բան մը չի՛ կրնար բնել
մեզի համար, — կը պոռայ ձայն մը խա-
ւարին ընդերքէն, — ան խաչուած կը
մնայ դարերէ ի վեր:

— Աստուած խաչուած՝ կը մնայ,
Աստուած հողեվարքի մէջ է, կ'արձա-
պանդին ուրիշ ձայներ:

Կամպո-կամպո սղօտ լոյսը, որ կը
սողայ լուսամտաներէն ներս, կը վերցնէ
խաւարէ վարագոյրը եւ կը յաջողիմ գա-
նազանել պատերը, սիւները եւ սալաքա-
րերը, որոնց վրայ գիրեր փորագրուած
են: Հոստարեստ սիւներու արանքէն գո-
յութեան կը կանչեմ քարէ դամբաններ,
եւ պատերու երկայնքին, սալաքարերուն
վրայ, որ դարերէ ի վեր կը ծածկեն վան-
քին ննջեցեալները, ստուերի դանդաղած-
ները կը վերածուին շարժուն դիակներու:

(Շար. 8)

Յանի մը քայլ կ'աննեմ եւ կը մօտե-
նամ Մեարսի արեղային: Քիչ առաջուան
պոռչտութենքը դապրած են, սակայն յը-
ռու թիւնը հեռու է կատարելու ըլլալէ:

Արեղան ծուած է սարսաղակցիկ
մէկուն վրայ: Ձախ ձեռքով կը վերցնէ
մարդու մը գանկը, որուն դէմքը մխի-
թուրջով մը ծածկուած է: Քիթը դապ-
րած է գոյութիւն ունենալէ. լինտերը
կրծուած են անասելի ախակ մը: «Քրք-
քական ամբողջ բանակը քայլից այս մար-
դուն դէմքին վրայէն», կը փոփոյայ տը-
ղան ականջիս:

Գաւաթ մը ջուր կը մօտեցնէ ան-
շքրթունք բերնին: Յանկարծ ձեռք մը կը
յայտնուի ցնցոտիներուն տակէն: Առա-
ջարագուկը կը նմանի շորցած ճիւղի մը
եւ մատները՝ իրարու կապուած հինգ
հանդուցաւոր արդատներու: Ձեռքը կը
դպչի գոտաթիւն, յետոյ կ'իյնայ քուրջն-
րուն վրայ՝ մեռած ստարկայի մը սկստ:
Բանդուած ծնօտները կը բողբոխն ու կը
դոցուին մոլեգնորէն: Ձուրը կը հասի այս
անակոտց փոսին մէջ, որ կը նմանի պար-
չաճոտ կոյսեղի մը մուտքին: Գլուխներ
կը բարձրանան աջ ու ձախ՝ կմախային
զանկեր, եւ ջուր կը պահանջեն:

Երբ ջուրի բաշխուած կ'աւարտի,
գոյու կ'ելլենք: Հիմա կարգն է կերա-
կուրին: Հսկայ կաթսան կը բերենք մին-
չեւ աստիճաններուն դլուխը: Շերեփով
կը լեցնեմ ամանները եւ արեղան կանոնք
մէկիկ-մէկիկ վար կ'իջեցնէ: Մութը՝
զարանակալ, կը շրջապատէ մեզ եւ գի-
չերը կը յայտնուի վտանգաւոր ու ան-
խիղճ:

Ն. Զ.

ՅԱԿՈՒ ՄԱՆՈՒԿԵԱՆ

ՅԱՆԱԽԱՆՔ ՍԻՐՈՅ



Հանդերու մէջ լուսնային դուն ես, իմ սէր, գուն միայն,
 Որ կը ժպտիս քաղցրօրէն աչքերուս դէմ վերստին
 Ու հայեացքիդ դէմ կը զգամ, ինչպէս հրաշքը գարնան,
 Համակ խայտանքը բուրեղ հմայքներուդ համբոյրին:
 Նայն ազիկն ես ոսկեվարս ու ճիւղաբոյր նոյն տեսքով,
 Որ կը կանչես պարագին հեշտանքներուդ զիս կրկին
 Ու խորհուլոյն ես նայն սիրոյ գոր ես այնքան հրայրքով
 երագեցի, պաշտեցի երդիքիս տակ երկրային:
 Սակայն ինչո՞ւ կու տաս այց մտածումիս դաղիճիմ,
 Պարտելով զիս անգուպ հին յոյզերով հոգեկան,
 Ձէ՞ սր ուխտած էինք մե՞ք բաժանման ցուրտ գիշերին
 Հանդիպումի քէ սիրոյ վերջին վայրն է գերեզման...:
 Ձէ՞ որ մտացած էի քեզ ու հեռացած սկամայ
 Անբայտ տեղանքը սրտիս՝ լուսնի ծագերն հեռակայ
 Իմամալով դառնագին, ով իմ անդարձ սիրուհիս,
 Թէ վաղուց ես դարձած մա՞յր, մտացած, հոգի՛ս, դո՛ւն ալ զիս...:



Կը կարկաչեն առունք մանկածիծաղ ու ծփուն,
 Որոնց ափին մե՞նաւոր կը լսեմ ձայնդ միայն,
 Որ դաշներգի պէս մեղմիւ կ'ամոհէր վիշտս անհուն
 եւ խոլումներս մուսլ, գերբ կե՞նարար բայասան:
 Ջրահարսի պէս չքնաղ, ա՞հ, կ'առիճենես զիս կրկին
 Ընծայելով լիառատ բոյրն այտերուդ վարդային
 Ու շունչիդ մէջ այնքան շերտ եւ այնքան շինք ու անուշ՝
 Կ'ուպրիտ բերկրանքը ամանց պատանեկան խօլ սիրոյս...:
 Ձեփուռներէն լուսնային վարսերդ ինչպէ՞ս կը ծփան
 եւ աչքերուդ դէմ քովիչ՝ քօշնած յոյսերն իմ հոգւոյն՝
 Դամբաններէն անցեալի կարծես նոր կեանք կը զգենուն
 Արձակելով սրտիս մէջ բարունակներ հեշտութեան...:

••

Բաւ է տանգես հո՛ւ ալ զիս տեսիլքներուս բնդմէջէն
 Ներկայութեամբդ ան՛ատույց եւ շիւթանովդ ոգեղէն,
 Բաւ է տանիս կածանէդ սիրաբարբո՛ք ցանկութեան,
 Ուր կարօտներս փշակէ՞զ զիս կը խոցեն յարածամ:
 Ո՛հ, դո՛ւն ես որ կը վարես զեկն հրքիտին իմ մտքին,
 Ջայն յանձնելով քմայքիդ ուկեծիրին ոլորուն,
 Ուր իմ խօսերս ամբողջ, խօսերս բոքր ու մքին,
 Մոլորակներ գերք անգնկ կը թաւալին անդադրում:
 Անհնա՛ր է հեռանալ կախարդանքէդ մոզական,
 Ջի դուն տրո՛փն ես կեանքիս եւ աւիշն իմ գոյութեան.
 Դուն, հոգւոյս դէմ մի՛շտ ներկայ, դուն անթարշում յիշատակ
 եւ արցունքիս մէջ ժպիտ, հրնուանքիս մէջ հեկեկանք:
 Ո՛ւր թեւածեմ, ջ՛ւր թառիմ, ա՞ր մոլորակն հեռուար,
 Որ չլսեմ առյաւել սիրոյդ զօգանքն հեշտօրօր.
 Անհնա՛ր է խաւսփիլ, ա՛հ, տեսիլքէդ սկեշտդ,
 Անուրջներուս մէջ իսկ զիս ուրուական եւ հալածող:
 Հանդերու մէջ միայնակ քեզմով տրտում եմ այնքան
 Ու կը զղչամ, կը զղչամ քեզ տենդօրէն սիրելուս,
 Ջի տարփանուշ առուպանք, տարի՛ր ինձմէ ամէն բան,
 Անդորրաբայր գիշերներ ու երազներ աստղալոյս:
 Գեղեցկութեամբդ կախարդ եւ նազանքովդ ծեփծեփուն
 կը յայտնուիս մինչ անվերջ մերթ անտուեր, մերթ թա՛նուն՝
 Սիրոյ հմա՛յք դուն վսեմ, յանայտանքիդ դէմ անմար
 Հանգիստ չկա՛յ ինձ համար...:

8. Մ.



ԱՐԱ ԱՐՇՐՈՒՆԻ

Յ Ո Ւ Լ Ի Ն Ճ Ի Չ Ը

Պարտիշաներ պարծանուհի մը՝ հրա-
տած ազարակի հսկայ դրան մօտ ինկած
բարտիի բունին վրայ՝ կը դիտէ դաշ-
տապետնի պզտոր հորիզոնի անպիծ համ-
բայրը: Հնուէն կով մը կը բառաչէ, խը-
ղելով ու շեշտաւորելով անծայրածիր լը-
նութիւնը:

Հորիզոնին համբայրի թտիծը կ'իջ-
նէ Փոյինի սրտին մէջ, ու միտքը կը սա-
հի հորիզոնէն անդին, զէպի հետաւոր
ծովափի ալիքները, ուր՝ ժայռերու
կարծրութեան յենած՝ բարձրացած էր
տօպոյն այն որբանոցը, որուն մէջ ան-
ցուցած է իր մանկական ու պատանեկան
տասը տարիները:

Եօթը տարեկանին կորսնցուցած էր
մայրը, որ կ'ապրէր դարձաբայր համբա-
ներով թագածասի մը մէջ:

Յիշեց, թէ ինչպէս մօրը ընկերուհի-
ները զինք յանձնեցին ոստիկանութեան:
Երկու օր սպասեց ու քնացաւ ոստիկա-
նատան մէջ: Յետոյ՝ որբանոց- մայրա-
պետը տոժարին մէջ գրեց անունը, ու տ-
նունին դիմաց՝ մօրը արհեստն ու հօրը
անձանօթութիւնը:

Ամիսներ ետք եկաւ մարդ մը. գըր-
կեց աղջիկը ու յացաւ: Մօրեղբայրն էր,

որուն ազարակը կու դար անցընելու ա-
մանային արձակուրդը:

Ահա հորիզոնի համբայրի միօրինա-
կութիւնը ջնջուեցաւ սեւ կէտի մը ծնուն-
դով: Ինքնաշարժ մըն էր՝ նորութիւն
մը՝ դաշտադեմնի տարածքին վրայ գըտ-
նըւող վեց ազարակներու բնակիչներուն
համար: Մօրեղբայրը ելաւ դուրս, աջ
ձեռքը դրաւ ճակտին, գիտեց հորիզոնը:

Ինքնաշարժը դանդաղեցուց իր ըն-
թացքը, թողուց ասֆալտէ մայր համ-
բան, ու մտաւ առաջին ազարակի հողոս
համբուն մէջ:

— Որսորդութեան եկող քաղաքի
մարդիկն են դարձեալ, — ըսաւ մօրեղ-
բայրը:

*
**

Մօրեղբայրը կը ջանար գրգռել ա-
ռայդ ցուլը ու մօտեցնել նախտուն կու-
վուն: Անտարածադիր էր ցուլը, ու ան-
հանդարտ շարժումներով անդին կը հրէր
ցանկացող կովը:

Փոյին պատուհանէն կը դիտէր ցուլն
ու կովը: Իր երակներէն վազող արիւնը
հապճեպով կը բարձրանար վեր ու կը
զարնէր անհանդարտ սրտին դռներուն:

Պրկուած կուրծքերը կը նեղուէին կըրծ-
կալներու սեղմումներէն, ու կոյուն
սպասումի գրգիռը կը խաղար իր ճեր-
մակ ժարմնին վրայ:

Յուլը կը յամառէր:

Չհասկցաւ, թէ ինչո՞ւ միտքը յան-
կարծ վազեց անցեալի ետեւէն ու հասաւ
նկզմայեան իր թաղամասին, ուր
վերջին անգամ տեսաւ ժօրը ամբողջ գէ-
տը: Դարձուց զլուխը. հեռացաւ պատու-
հանէն. հայեիին առկէ ուղեց նմանու-
թիւն մը դտնել ժօրը ու իր թարմութեան
միջև: Նայուածքը իջաւ կուրծքերուն,
կրնքերուն... ու ինքզինքը նետեց ան-
կողմին վրայ: Բռնեց անկողնին բազրի-
քը, սեղմեց. ուղեց ճղմել. զգաց իր տը-
կարութիւնը ու զրգիռը մեծցաւ հոգւոյն
մէջ:

Յուլը ճշաց: Կրթութիւն մը դրծ-
ւեցաւ Փոլինի շրթներուն վրայ: Գրկեց
բարձր, մատները աղատորէն շարժեց ա-
նոր խաղերուն վրայ...:

Երկնքի փոքրիկ կապոյտ մը ժպտե-
ցաւ յուսամտի բացումէն: Ազդիկը
դիտեց, կեանքի կանչը ակտու երկնքի
ժպտին մէջ: Յասկեց անկողնէն ու կլաւ
զուրս:

Յուլը անտրամադիր ինկած էր կը-
տրուած բունին մօտ ու կը դիտէր առ-
Փոլտապաս ճամբան, իսկ կո՞վը՝ գոհ ու
կայտառ՝ իր խոշոր լեզուով կը լիղէր ա-
նոր ստեղծը:

Փոլին կլաւ ապարակէն ու վազեց գե-
պի մօտակայ փոքրիկ անտառը, ուր ծա-
ռերու շուքին, առուակները իրենց բամ-
բասանքներով կը սպաննէին գալտուկա-
նի լուսնիւնն ու ձանձրոյթը: Ուր բազ-
մատուակ թռչուններ իրենց ճլվլոցը կը
միացնէին ծառերու շշուկին: Ուր կու
դային որսորդները...:

Փոքրիկ ջրվէժին մօտ ազդիկն ու որ-
սորդը հանդիպեցան իրարու:

— Ան՞ունդ...:

— Փոլին: Իսկ զո՞ւկդ:

Որսորդը ժպտեցաւ: Երեսունհինգ
տարեկան էր, իսկ ազդիկը՝ միայն տաս-
ներեթը: Իսկ ազդիկան աչքերու փայլը
չվրիպեցաւ որսորդին նայուածքէն: Փա-

լին Հևտաքքրուեցաւ հրացանով, մօտե-
ցաւ, բռնեց զէնքը, իր թարմ կուրծքերը
քսեց տղուն արմուկին: Մտերմացան,
խօսեցան թռչուններուն ու ջրվէժին փր-
փուրներուն մասին: Խօսուի նայուածք-
ներով ժամադրուեցան յաջորդ օրուայ
համար, ու բաժնուեցան իրարմէ:

* *

Գիշեր:

Շնագայլը կ'ոռնայ: Կը սղայ իր առ-
տանձնութիւնը: Ոռնոցը կը հասնի Փոլի-
նին, ու ան՝ ամառային դիւերուայ սօ-
թին մէջ՝ կը մտնուի ժարմնի մը տա-
քութեան պակասէն:

Կը նետէ վրայէն բարակ սուանը ու
թոյլ կու տայ որ լուսնին ցուքերը խա-
ղան իր կիսամերկ ժարմնին հետ:

Յակատացած է գալտուկտին գլծը:
Կոյը իր խոշոր աչքերով կը նայի խալ-
իւրած դրան ճեղքէն դուրս, կը սպասէ
արեւածային:

* *

Գիշեր:

Շնագայլը կ'ոռնայ: Որսորդի երեք
զոյգ աչքեր ծածկուած են կուրբու յող-
նութեամբ. իսկ շորթորդ զոյգը ակնապիշ
կը դիտէ սենեակին առասաղը:

Առասաղի մութի ու բոյսի խառ-
նուրդին մէջ, տղան կը տեսնէ փոքրիկ
անտառի ջրվէժին մօտ բարձրացող Փո-
լինի ժպտը ու մանկական աչքերուն մէջ
փայլող ցանկութեան խոճաութիւնը:
Ո՛ւ, կիրք չէր այդ ցանկութիւնը. ինք
լատ էր տեսած կրներու աչքերուն մէջ
այդ կրակը, բայց հոս, այդ պարմանու-
հին անմեղ նայուածքին մէջ սէրն էր
հանգրձուած ճերմակ սպասումներով:
Ուրե՛մն, սէրն էր ծնած պարմանուհիին
կուրծքին տակ, առաջին սէ՛րը...:

Չուզեց աւելի խորանայ մտածու-
մներուն մէջ: Իրեն համար կիներ անկողնի
ծտոյտոյ էրն էր միայն: Երբեք չէր աչ-
խասած բաղդատակուն մը բնէլ սիրոյ ու
կիրքի միջև: Հանճի էր սպասումն ու

ցանկութիւնը, ու մանաւանդ Էրազմերու
իրականացումը առաջ մարմիններու վը-
րոյ, այլեւս ինչո՞ւ մխրճուել արտի հար-
ցերուն մէջ, ինչո՞ւ...

Բայց աղջնակին ծիծաղը կ'ալնկոծէր
Հոյին: Չգաց, թէ քրոնած է ճակատը:
Փակեց աչքերը, ուռեց մտնալ. փնտուց
իր զոհերուն ամենազեղեցիկները, դա-
սաւորեց, ընտրեց ամենազրուհիը. իր Ե-
րեւակայութեան խաղերով մերկացուց
զայն, յիշեց իրենց առանձնութիւնը իր
բոլոր մանրամասնութիւններով, բայց,
դարձեալ եկան Փոլինի ծիծաղկոտ այր-
ները ու սրբեցին աւարի վրայ գծուած
անցեալի դէմքերը:

Առաջին անգամ ըլլալով մտածեց ա-
մուսուրեան մասին: Եղբակացուց, իր
կեանքը պիտի չկրնար միացնել անբնու-
թիւնը կորսնցուցած մարմնի մը հետ:

Ենազայր սոնաց: Որտեղք առանձ-
նութիւն մը զգաց. որոշեց յաջորդ օր
չընկերակցել ընկերներուն, ու ջրվէժին
մօտ սպասել աղջկան:

Եկաւ աղջիկը:

Իրենց խօսքերը խեղդուեցան ջրվէժի
աղմուկին մէջ: Բայց նայուածքները կը
փոխանակէին արտին խօսքերը ա՛յնքան
արալ ու հասկնալի, որ անոնք նեատե-
ցան բնութեան զեղեցիկութիւններու մէջ,
ձեռք ձեռքի:

Ժպտալով ու ծիծաղով խօսեցան մա-
ցառներու խտութեան ու ժայռերու սե-
պուրեան մասին. կարեւոր չէր նիւթը,
խօսեցան, որպէ՛տք իրենց ծիծաղով շեշ-
տաւորեն ստեղծուած նոր մթնոլորտը:
Բայց աղան կը զգար, թէ նոր թրթիռ-
ներ կը շարժէին կուրծքին տակ. պատա-
նեկան աւիշի մը վազը կը զգար երակ-
ներուն մէջ: Աղջկան ժպտուն նայուած-
քին տակ կը ջնջուէին հին սիրարկածնե-
րուն զրդիւր ու նոր հեշտանք մը կը լե-
ցրէր սիրաբն Այո էր ուրեմն սէրը. այս
անհոգ ու անբուժելի դաջցումը, որ կու
զար բացասելու իր սպրած կրքոտ օ-
րերուն մթորեակութիւնը:

— Լսէ՛, ի՞նչ հանելի է ծառերու
չլուկը, Փիէր:

Տղան ժպտեցաւ: Նայուածքները
հանդիպեցան իրարու, շփոթեցաւ Փոլին
ու ծածկելու համար իր շփոթանքը, ա-
նիմաստ քրքիլ մը արձակելով՝ փախաւ
զէտի մօտակայ ժայռը:

Ձկրցաւ մազցիլ ու իր կարեկցու-
թեան կարօտ նայուածքով կանչեց ար-
դուն: Փիէր ծօտեցաւ, գրկեց աղջիկը,
զգաց թէ ան կը նախընտրէր չարճա-
նալ ու մնալ իր թեւերուն մէջ. բայց
տղան շուտեց ջնջել անոր անբնութեան
կերտած երազի քեջութիւնը...

Ժայռի բարձունքէն, ծառերու բաց-
ւածքէ մը դիտեցին դաշտապետնի վրայ
հանդարտօրէն օտհոյ գետը, ու դիմա-
ցը՝ բլուրի ստորոտին՝ մօրեղբոր ազա-
րակը:

Փոլին տեսաւ հոն Երկու շարժող
մարմիններ: Ճուլին ճիշդ ինկաւ. ական-
ջին ու արձագանդեց արտին մէջ. դար-
չարքը ճամբաներու մթնոլորտը իջաւ
անտառի մեղմ ժխորին վրայ ու տփուց
զէմք մը դժուարաւ աչքերուն առջև:

— Կը գտնեմք, — չննջաց աղջիկը,
— վտանգաւոր է այս ժայռի բարձրու-
թիւնը:

— Ի՞նչնէք, — առաջարկեց Փիէր:

— Ո՛հ, ո՛չ, հոճելի է դիտել այս-
ակղէն գաշտապետնի եւ անտառի դեղջե-
կութիւնները: Մնանք հոս: Բայց լաւ
բունէ գիտ. թեւերուդ մէջ ապահով կը
զգամ ինքզինքս: Ի՞նչ մէջէքս...

Տղան իջեցուց ձեռքերը աղջկան մէջ-
քին: Փոլին վախի արտայայտութիւն մը
կեղծելով՝ ամփոփուեցաւ ստղուն կուրծ-
քին մօտ: Փիէր ստիպուեցաւ նեղցնել
թեւերուն օղակումը, ու աղջկան սակի
մաշերուն բոլոր զոյաց ունեւորուն տակ:

Արու ձեռքերու ներկայութիւնը Փո-
լինի նուրբ մէջքին վրայ իրենց դրացուցին
կոյուն սպասումին տօնապանքը: Ձեռ-
քերը զրաւ տղան ձեռքերուն, սեղմեց:
Տղուն շնչառութիւնը մխրճուեցաւ իր
մաշերուն մէջ ու Փոլին փոքրիկ անտա-
ռի դիտելու յանձնեց սիրոյ իր առաջին
խօսքը:

— Կը սիրեմ...
 Քսկուեցան տղուն թեւերը ու քրնք-
 չութեամբ գրկեցին, աղջկան՝ ուսերը.
 Փոլին դարձաւ նա, ու տղան անոր խո-
 նաւ աչքերուն մէջ տեսաւ միայն ի՛րը ը-
 լալու աղջկան խոստումը: Ո՛հ, այդ ան-
 ծածոթ նայուածքը: Այդ խոստումը ո՛չ
 մէկ կին չէր տուած իրեն, ու ինք յազե-
 ցրելէ ետք իր կիրքը՝ տեսած էր միայն
 կեղծիքին մեծութիւնը՝ անոնց մէջ: Հի-
 մա անրիւթ մարմին մը ունէր թեւերուն
 մէջ, ու մեծցող սէր մը՝ սրտի անհու-
 նին:

Երթները դրաւ աղջկան ճակտին.
 — Ի՞նչնք վար, Փոլին, նստիճք
 չըվէ՞սին մօտ, խօսինք...:

Ջրվէժին մօտ, իրենց խօսքերը խեղ-
 գըւեցան իւրերու երգին մէջ: Բայց
 նայուածքները փոխանակեցին սրտին
 խօսքերը այնքան տաք ու հասկնալի, որ
 անոնք հին սիրուհարներու նման իրենց
 շրթները միացուցին իրարու:

— Ահա, ինքնաշարժի այդ ահուկի
 արկածին զո՛հ զայցին՝ հայրն ու մայրը,
 երբ Փոլին եօթը տարեկան էր տակաւին:

Այս խօսքերով մօրեղբայրը վերջա-
 ցուց Փոլինի պատմութիւնը:

Փիէր յուզումը զսպելով՝ կը գիտէր
 Փոլինը, որ կը գատաւորէր գիւղական
 ընթերթի սեղանը: Անեղ ու դժբախտ
 անձի մը պաշտպանութիւնը գոհունակու-
 թեամբ կը լեցնէր հողին: Վերջապէս
 դտած էր կեանքի նպատակ մը. անձ մը,
 որուն հետ պիտի քայլէին սիրոյ ճամբա-
 ներէն ու մոռնային անանձնութեամբ գե-
 ղին տափաստանները:

— Այլեւս հին որբուկը պիտի շնայ
 ան, — ըսաւ Փիէր, — պիտի ունենայ
 իր տունը:

— Աստուած վարձատրէ քու բարի
 հողիդ, — շննջ մօրեղբայրը՝ թարթե-
 լով խոնաւ աչքերը:

Հետագայ շնորհայրը ունայ: Վտուրեան
 մէջ ունոցը զարնուեցաւ բլուրներու կա-

ղերուն ու արձագանգեց: Փիէր կարծեց,
 թէ ուրիշ շնորհայր մը կը ձայնակոչէր իր
 ընկերոջ ունոցին...:

**

Որբանոցի փոքրիկ ճառուախն մէջ,
 տաննեակ մը անձնրու ներկայութեան,
 Փոլին դարձաւ Փիէրի կինը:

Վերջին մնաք բարովը ըսին որբանո-
 ցի դրան առջև. հաւաքուած մայրապետ-
 ներուն ու մօրեղբորը: Մեկնող հարսա-
 նեկան ինքնաշարժի ետեւի պատուհանէն,
 վերջին անգամ մը ըլլալով՝ Փոլին դե-
 տեց ժայռերու կարծրութեան յենած այն
 շէնքը, ուր անցուցած էր հիւանդ ժան-
 կութիւն մը:

Որբանոցի տիւրը շէնքը փոքրացաւ
 ինքնաշարժի փախուստով ու առաջին իսկ
 անկիւնադարձին չքացաւ Փոլինի աչքե-
 լէն: Երիտասարդ կինը դարձաւ Փիէրի
 կողմը. սիրատենչ աղանձակի մը պէս
 ծոնց գլուխը ու հանգչեցուց տղուն ու-
 նին:

— Ի՛նչ ամայի էր որբանոցը մայր
 ճամբէն բաժնող այդ ուղին: Այլեւս
 երբեք պիտի չվերազատնամ հոն:

Փիէր սեղմեց երիտասարդ կինը թե-
 ւերուն մէջ:

Ինքնաշարժը կը սուրբար, տաք ժը-
 պիտ մը դժելով Փոլինի շրթներուն վը-
 բայ:

**

Ատուտ:
 Փոլին կը քնանայ:

Փիէր պանդոկի պատուհանէն կը դի-
 տէր լեռնային գեղեցկութիւնները: Վա-
 ըը ձորն էր, ուրկէ կը վազէր դետակը՝
 անհատնուած սեղ մը շրթներուն: Լերան
 կողերը հանդերձուած էին խիտ անտառի
 սաւանով ու բարձունքին՝ ելեկտրական
 սիւն մը եկած էր ջնջելու թնութեան ան-
 բրձութիւնը:

Փիէր վանեց գլանիկ մը: Դիտեց քը-
 նացող երիտասարդ կինը. յիշեց գիշերը
 իր համբոյններով, խոստումներով ու

լոյսանքներով, գիշերը՝ զով ու լուսնկայ՝
երբ հասարակներ փախան դուրս պա-
տուհանէն ու խեղդուեցան փոքրիկ գե-
տակին մէջ: Գարծուց նայուածքը, գի-
տեց խիտ անտառը, ու անոր բարձուն-
քին կանգնած սիւնը իր ուղղահայեաց
տխրութիւնը ձիւրճեց սրտին մէջ:

Մարդիկ ինչո՞ւ էին դրած այդ սիւ-
նը հոն ու ջնջած բնութեան անբնութիւ-
նը:

— Ո՛հ, բացուած է առաւօտը, ե-
կո՛ւր, Փիէ՛ր...:

Տղան պատուհանէն դուրս նետեց
անաւարտ դրանիկը. վերագարձաւ կըն-
կան թեւերուն:

Փիէրը մոռցած էր իր հետ տանիւ
սենեակի յիշատակները: Տղան ափը
հանդիչուց կնկան վարսերուն:

— Տե՛ս, Փիէ՛ր, ինչ խիտ է դիմացի
անտառը:

Տղան իջաւ անկողնէն, քաշեց պա-
տուհանին վարագոյրը:

— Ինչո՞ւ...:

Փիէր համբոյրով մը դոցեց կնկան
բերանը:



Վերադարձ:

Լեւնային նեղ ճամբան վերջացաւ
ծովեզերեայ ճամբու կողմն: Ինքնաշար-
ժը արագացուց իր ընթացքը: Փիէր ակ-
նասլիչ կը դիտէր ճամբու եզրին հաս-
տատուած ելեկտրական սիւները, որոնք
միօրինակութիւն մը կը ստեղծէին իրենց
յաջորդականութեամբ: Հոն՝ լեռան դա-
զաթին՝ ուրիշ կեցուածք մը սենէր մե-
նակեաց սիւնը, ինքզինք տէր կը զգար
չըջատատին. իսկ հոս այնքա՛ն հասարակ
էր անիկա, այնքա՛ն անզոր:

— Կը տեսնե՞ս այս սիւները, Փոլի՛ն,
չառ մօտ են դրուած իրարու, շատ...:

— Մեղի ի՛նչ...:



Ամէն անգամ երբ կ'անցնէր քաղաքի
մայր հրապարակէն, Փոլին կողմնակի
նայուածքով ու հետաքրքրութեամբ կը

դիտէր հին շէնքերով այն զարշարոյր
թաղամասը, ուր կը դանուէր նաև թաղա-
յին ուստիկանատունը: Թաղամասէն դուրս
կլլող երիտասարդներու զէմքին վրայ կը
զտնէր իր զոյսութեան ազրիւրը, ու ու-
ստիկաններու համազգեստներուն վրայ՝
առաջին տողերը իր որբութեան:

Իայց հապճեպ վրձինով մը կը նա-
խընտրէր սրբիւ անցեայի տխուր յուշե-
րը ու նայիլ ներկային:

Լեւնային պանդոկէն հետը բերած
էր երջանիկ ու վարդադոյն հեռանկար-
ներ: Առատութեամբ ցրուած էր զանոնք
իրենց փոքրիկ յարկարածին մթնոլոր-
տին մէջ ու մոռցած անցեայը:

Ամուսնութենէն վեց ամիս ետք, իր
մարմինն մէջ զգացած անկանոնութեան
մը հետեւանքով, Փոլին նոր ժպիտով մը
նայեցաւ ամուսնոյն.

— Փիէ՛ր...:

Կոնքերուն տակ կարծեց զգալ նոր
հիշի մը երազը: Իայց, կէս գիշերին ար-
թընցաւ ու կարմիր իրականութեան մը
դիմաց զգաց, թէ պատրանքը կը շարու-
նակուի:

Փամանակ մը ետք գլմեցին բժիշ-
կին: Երկար քննութիւններէ ետք, բժիշ-
կը խոստութեամբ նայեցաւ Փիէրի.

— Չաւակ չէք կրնար ունենալ, —
ըսաւ:

Տուն վերադարձի ճամբուն վրայ
լուռ էին երկուքն ալ:

Փիէր խղեց լուսութիւնը.

— Ուշ ամուսնացող երիտասարդի մը
կրնան պատահիլ այսպիսի արկածներ,
— շնջաց տխուր...:

Քայլեցին:

— Ես՞ո էին սիրուհիներդ:

Փիէր չպատասխանեց:

Փոլին յիշեց մօրը դէմքն ու զարշա-
րոյր ճամբաները...:



Ամէն անգամ երբ նայուածքները
հանդիպէին իրարու, Փիէր կը յիշէր
այն անձրեւոտ դիշերը, երբ ընկերը զինք

տարաւ մեծերական հիւանդութիւններու մասնագէտ բժիշկին :

Ամէն անգամ երբ Փիէրի նախածքը խուսափէր իր աշքերէն, Փոլին կը զգար մեծցող պարսպութիւնը սրտին տակ :

Վարդազոյն հեռանկարները ճորժուած էին անկարելիին մեծութենէն : Տան պարսպութեան մէջ ձանձրոյթը կը ճօճուէր . . . :

Ձմեռ :
Ինքնաշարժը զգուշութեամբ կ'ընթանայ լեռնային ճամբաներէ :

Ձիւնը իր սպիտակութեան տակ պահած է բնութեան դոյները : Միայն մի քանի ըմբոս ճիւղեր՝ հեռուէր դարնան կարօտով տողորուած՝ դուրս են հանած իրենց թեւերը ծառերու ամբողջութենէն ու խնդրական պարզած երկնքին :

Սպաննիլու համար ձանձրոյթը, Փոլին ինքնաշարժի պատուհանէն կը հաշուէր ձիւնադերձ ըմբոս ճիւղերը :

Հասան շմշկուծի կեդրոնը : Փիէր իջեցոց սահնակները ինքնաշարժին վերայէն : Անիօս ու մտածկոտ՝ կորուած իրենց շուրջ տիրող եռուզեռէն՝ նստան ինքնաշարժ-աթոռներու վրայ ու մետաղեայ հաստ պարանը տարաւ զիրենք լերան կատարին : Իջան աթոռներէն՝ Փիէր անցուց սահնակները սոսիւրուն ու ըսաւ .

— Կը մեկնին :

Ձարկու ձեռքի դաւադանները ձիւնածածկ դետնին ու նետուեցաւ առաջ : Փոլին գիտեց ամուսնոյն հեռանալը . առանձնութիւնը շշուշտուրուեցաւ իր շուրջ :

Կռնակը յենեց ելեկտրականութեան սիւնին ու դիտեց բաղմութիւնը . դուարթ խումբերը, անհոգ զոյգերը : ու նաեւ ճերմակ մազերով այն մարդը, որ մանուկի մը երջանկութեամբ ձիւնազնդակ կը նետէր իր պառուած կնկան վրայ : Փոլին շուրջնայ նայիլ բաղմութեան . յուշումը սկզբնայ կոկորդը, նախածքը նետեց դիմացի ամայի լերան կատարին, ու այնուհի լուսութեան փանրութիւնը զգաց սրտին մէջ :

Մխորը՝ աննպատակ թռչող թռչունի մը հեւքով՝ հասաւ հեռուէր այն դաշտապետին, ուր փոքրիկ անտառի ծառերու բացուածքէն, ծառի մը բարձունքէն՝ զիտած էր ժօրեցորդը ադարակին մօտ կանխած ցուլն ու կովը : Այդ պահուն Փիէրի թևերուն արու պրկումը ունէր մէջքին շուրջ, ու սրտի անկիւնին՝ վարդազոյն կեանքի մը ժպտաք :

Հիմա . . . :
Ձիւնազնդակ մը կարեց թելը իր մը տածուծներուն :

— Ներդրութիւն, օրիորդ, — բացառանչեց ձիւնազնդակ նետող երիտասարդը :

Փոլին ներդրումիտ ժպտով մը պատասխանեց տղուն սպասող նախածքին : Երիտասարդը հեռացաւ ու շարունակեց ձիւնախաղը խումբին հետ : Բայց Փոլին կը տեսնէր անոր դաղտազող նախածք . ձանձրացած աշքերով կը հաւաքէր դաննք, կ'իջեցնէր սրտի անհունին ու աննցմով կը ջնար հալեցնել վերջին ամիսներու կուտակուած ստոր :

Տղան բաժնուեցաւ խումբէն, կանչող նախածք մը նետեց Փոլինի ու առանձնացաւ յաջորդ ելեկտրականութեան սիւնին մօտ :

Փոլին փոխեց ուղղութիւնը : Կռնակը մէշտ սիւնին՝ նայեցաւ յաջորդ սիւնին կռնիոց երիտասարդին :

Տղան փնտրող նախածք մը նետեց իր կռնած սիւնի մետաղեայ հիւսքերուն : Նախածքը մաղլցեցաւ ու հասաւ սիւնի դագաթին, կախուեցաւ մետաղեայ հաստ պարանէն, սահեցաւ դէպի միւս սիւնը, ցատկոտելով իջաւ վար անոր հիւսքերէն, ու կեղծ դարձանքի մը արտայայտութեամբ զրկեց Փոլինի նախածքը :

Փոլին խնդաց տղուն դուարթ խաղին վրայ : Տղան թողուց իր սիւնը ու մօտեցաւ երիտասարդ կնկան :

— Առանձին էք :

Վարանեցաւ Փոլին, շպտասխանեց : Նայեցաւ տղուն . իրմէ . յորս տարու մեծ պէտք էր ըլլար ան . . . :

— Կ'ուզէ՞ք մտա կազմել մեր խումբին, — շարունակեց տղան։

Փոլին՝ տխուր ժպիտով մը՝ նայեցաւ խումբին կողմը ու շնչեց։

— Առանձին չեմ, շուտով ամուսինս կը վերադառնայ։

Տղան շեղուցաւ։ Նոր փայլ մը իջաւ ուրբերուն։ Նայուածքով զննեց շփուածի պիտաներու մէջ սեղմուած կնկան մարմինը, ու նոր խանդավառութեամբ հարցուց։

— Կը ձանձրանա՞ք։

Փոլին բարձրացուց ուտերը։ Փնտեղ բացը, ու ըսաւ։

— Քերեւս...։

— Քաղաք կը բնակէք, չէ՞։

— Այո՛։

— Չարժանայի, քաղաքի եռուզեռին մէջ ինչպէ՞ս կարելի է ձանձրանալ։

Փոլին տխուր ժպիտով մը նայեցաւ աղուն։

— Ժազ կը կոչուի՞մ, — շարունակեց տղան, — խանութ մը ունի՞մ գոհարարականներու շուկան։ Ետտ կիներ կուզան խանութս գնուծի, կը ճանչնամ բոլորն ալ. սնունդէ ոչ ոք կը ձանձրանայ...։

Ժպիտը նետեց տխրութիւնը Փոլինի շրթներէն վար։ Տղուն աչքերուն փայլը ինկաւ իր աչքերուն մէջ։

— Հեռացէք, — ըսաւ մեղմութեամբ, — ամուսինս կրնայ վերադառնալ։

Մի քանի քայլ հեռանալէ ետք, տղան դարձաւ ետ ու ըսաւ ցած ձայնով։

— Աղին չորբորդ խանութն է։



Արեւի տաք զգուածքները իջան ըմբոտ ճիւղերու թիւերուն, որոնք աղաչական ապաստանով բարձրացած էին ձիւներէն դուրս՝ դէպի երկինք։ Նոր դարանան բուրբուրանալու ձեռքերը՝ զեփուածներու շոյանքով՝ իջան ձիւներու վրայ, հալեցուցին սառը, մերկացուցին ծառը...։ Աքիւնազերծ ու հողաբոյր ծառին վրայ համրոյններ ծաղկեցան...։

Գարնան ճառագայթները դաշտապահանի հին ապաստանը թրթռացուցին Փոլինի անհանդարտ սրտին մէջ։



Փոլին հապճեպ քայլերով ու անհանդիստ սրտով բարձրացաւ մարմարեայ շէնքի աստիճաններէն։ Երկրորդ յարկ... թիւ քանոթմէկ։ Կիսարաց էր սենեակին դուռը։ Դանդաղեցուց քայլերը. նայեցաւ. հոն էր։ Մտաւ ներս։

Ժազ փակեց դուռը, ու երիտասարդ կինը առաւ թիւերուն մէջ։

Անուշաւտի մեղմ բոյրը կ'իջէր կապոյտ սաւանով անկողինն ու անոր մօտ դրուած փոքրիկ սեղանին վրայ, ուր կային խմիչքի շիշն ու երկու դաւաթնեւորը։ Փոլինի աչքերուն հանդիպեցաւ պատէն կախուած այն նկարը, ուր որսի շուն մը՝ սրած պոչով ու դուրս կախուած լեզուով՝ կը սպասէր զիչ անդին կանգնած կաքաւին...։

Ժազ, աջ ձեռքով բռնեց Փոլինի կրզակը ու դարձուց իր կողմ։ Նայեցան իրարու։ Խոնաւ էին աղջկան աչքերը։ Ժազ ուզեց խոստովիլ անոնց հարցականէն։ Փակեց աչքերը ու շրթները դրաւ կնկան շրթներուն։

— Դիտե՛մ, շեւ սիրեր դիս, — շնչեց շաց Փոլին, հեռացնելով շրթները աղուն բերնէն, — մարմինս է որ կը ցանկաս։

— Հասցա դո՛ւն, — հարցուց տղան, քակելով կնկան հագուստին առաջին կոճակը։

Փոլին անզամ մը եւս նայեցաւ նըկարին ու ըսաւ։

— Ձեմ դիտեր, տակաւին չեմ դիտեր, թէ իրապէս թ'նչ կը ցանկամ։ Ամէն օր կու գամ խանութդ, առանձնութիւնս պէտք օւնի քու ներկայութեանդ։ Բայց կ'ուզէի նաեւ որ սիրէիր դիս, սիրէիր հողիւս համար, սիրէիր...։

Տղան մատները դրաւ Փոլինի շրթներուն։

— Բայց կը սիրեմ, հաւատա՛ խոսքիս, — շնչեց անորոշ ժպիտով մը։

Քակեց վերջին կոճակը: Կնկան դէպի ետ՝ ուղղահայեաց իջնող թեւերը հրաւէր մըն էին ժապի ձեռքերուն, որոնք շոյանքով սահեցան Փոլինի ծոծրուկէն դէպի ուսերը, թեւերը, արժուկնէրը... Հազուադէպ ամփոփուեցաւ ինքն իր վրայ ու ինկաւ կնկան ուղեքրուն ձօտ: — Երթանք հոն...:

Ժառ մարեց կեդրոնական լոյսը: Կարծիք լոյսը ինկաւ պատի նկարին վերայ: Տղուն ու աղջկան լուսթիւնը շեղատուրեց սաւանին շուրջն ու խորհրդի շեղէն դէպի գաւաթները հոսող հեղուկին փոփոսցը...: Հառայանքներ, եկան խառնուելու անոնց շուրջին, մինչև այն պահը, երբ Փոլինի գողացող շրթներէն վտանգաւոր անհայտ լի խօսքեր:

— Կը գլխով, կը գլխով, կը սիրես զիս, ժա՛ղ...:



Երկրորդ յարկ... Թիւ զսանձէկ: Երկու ամիս անցած էր առաջին հանդիպումէն:

Փոլին հանեց բանային ու բացաւ թիւ զսանձէկ սենեակին դուռը: Ժառը եկած չէր տակաւին:

Հանեց չորջրգետն ու կօշիկները եւ լեցուց բաժակը խորհրդով: Անդրադարձաւ, թէ երկու օր առաջուայ կիտով լի շիշին տեղ լեցուն շիշ մը կար հոն: Չցնցուեցաւ: Երկնցաւ անկողնին վրայ ու աչքերը կեդրոնացուց նկարին:

Սկսած էր խորշիլ այս փոքրիկ սենեակին, որ կը տակարանոր սրտերու միջև բարձրացող բոցը: Փոլինին կը թուէր, թէ նկարի վրայի կաքուր օրրոտօրէ կը տղեղնոր ու շունին սրած պոչը աստիճանաբար կ'իջնէր վար:

Մտածեց փախչիլ այս մութ սենեակէն, մերադառնալ առն, բանալ պատուհանները, կանչել դարնան համայնները ներս, լեցնել տունը նորարոյս, ծիլերու բոյրով: Երբ մը թրթռացնել, ժպիտներ գծել, ու նոր կեանքի մը խոստումներով ծանրաբեռն՝ ընդունիլ ամուսնոյն երկնոյն վերադարձը:

Թիւնց ամուսինը: Խորհրդի լեցուն շիշին ցուրբրուն վրայ տեսաւ Փիէրի խոտո դէմքը: Ահա, կը բարձրանայ տան աստիճաններէն՝ ծանրացած մարմնի մը մտահոգութիւնը շարժած: Կը ժանկնընջաննեակ, կը նստի անկողնին, անխօս ու անտրամադիր կը հանէ կօշիկները, կը դնէ անկողնին տակ, ու յետոյ, յետոյ... Ժրօքինակութիւն, անժպիտ ու անհրապոյր առօրեայ: Ինչպէ՞ս բանալ պատուհանը, երբ դարնան բոյրերը պիտի չկարենան գրիլ չին օրերու անհոյ ժպիտը: Ինչպէ՞ս վերադառնալ հին օրերու աղմուկին, երբ լուսթիւնը զարացուցած է սրտերը, սանձած զգացումները...:

Ժառ ուշացաւ: Փոխուած էր ան վերջին օրերուն: աստիճան կը բարձրանար շէր առօրեայ: Ինչպէ՞ս բանալ պատուհանը, երբ դարնան բոյրերը պիտի չկարենան գրիլ չին օրերու անհոյ ժպիտը: Ինչպէ՞ս վերադառնալ հին օրերու աղմուկին, երբ լուսթիւնը զարացուցած է սրտերը, սանձած զգացումները...: Ժառ կը ժպտէր, ու այս շարժումները կարծէր, որ անհոյ ժպիտին հարաձայն զայնու մէջ գայտը կը մեծնար աղջկան կուպերուն տակ: Ժառները կը մարձէր տղուն մաղերուն մէջ, կ'ողջէր, սեղմել զանկը, զգացնել զայրոյթին մեծութիւնը: Նայուածքը կը կեդրոնացնէր տղուն աչքերուն ու կը շնչար:

— Խոստովանէ՛, այլեւս չես ցանկար զիս:

— Կը վստահմ, Փոլին, շատ երկար տեւեց մեր մտերմութիւնը: Ամուսինը կրնայ լսել զոչը պէտք է ըլլանք:

Հասկցած էր Փոլին. ամուսինը չէր վտանգը, այլ մանկոյթը, որ մեղմօրէն կը ժարէր կիրքը կուրծքերուն տակ:

Կղպտիքի մայրը կտրեց Փոլինի մտածումներուն թելը:

Փոլին չկրցաւ զսպել շիթթաբը: Անձանօթ երրտասարդ մը մտած էր սենեակէն ներս:

— Բայց պարոն, սխալ սենեակ մը մտած էք հաւանաբար, — թոթովեց Փո-

լին, բարակ սուանը քաշելով կիսամերկ ժարմինին վրայ:

Տղան ժպտեցաւ. հանդարտութեամբ փակեց դուռը, կղպեց.

— Թիւրիմացութիւն չէ, աիկին, — ըսաւ ամբարտաւան արտայայտութեամբ ժը, — Ժաղը զրկեց զիս:

— Ղրկե՛ց...: Ինչո՞ւ:

Տղան չպատասխանեց անձիջապէս: Ծարաւ աչքերով պահ ժը նայեցաւ սաւանդէն դուրս մնացած ցանկալարոյց սըրբունքներուն, ու ըսաւ.

— Պիտի շղայ:

Նստաւ անկողնին ժօտ դրուած աթոռակին.

— Ժան է անունս, — ըսաւ, — Ժաղի լաւ բարեկամն եմ: Ծանօթ եմ իր դաղտնիքներուն. ամէն բան կը պատմէ ինձի:

Նայեցաւ կնկան մերկ ուտերուն.

— Իսկապէս գեղեցիկ էք, աիկին, ժողոր իրաւունք ունի:

Փոլին ինքզինք մերկացած զգաց տըղուն խայթող նայուածքին տակ: Առանձնութեան հին զգացումի վերադարձով՝ վախն ու կասկածը թրթռացին սրաին տակ:

— Ձիս առանձին ձյեցէք, — շընջաց:

— Այլեւս ժաղը պիտի շտենէ ձեզ, — ըսաւ տղան հանդարտութեամբ, — զուգու ձեր կարգին մոռցէք զինք: Իսկ ես...:

Դողացին Փոլինի շրթները: Ուրեմն, այլ պէտք... վերջացած էր: Դարձած էր հին կն ժը, ու անոր հետ միասին՝ անուն ժը, յուշ ժը... Հիմա, նոր կն ժը բացւած էր. առջեւը՝ ձման խորագրով: Ակախ ինչո՞ւ սկսիլ, երբ այնքան միտքինակ պիտի ըլլայ էջը, լի միեւնոյն համբոյրներով: Խոսքերով ու յուսախարութիւններով: Ատէին մէջ իրար խաշածնեցին վատահամբաւ թաղամասն ու ամուսնոյն անցնալը:

Տղան կը խօսէր ու իր անուան խորագրին տակ կը յամառէր աւելցնել նոր տողեր: Փոլին անխռով իջաւ անկողնէն ու ձեռքը երկարեց շրջազգեստին:

— Ո՛ւ, Փոլին, — շընջաց տղան ձեռք-ձութեամբ, բռնելով կնկան ձեռքը. — մի՛ մեկնիր, խօսինք, մտերմանանք, վստահ եմ, թէ լաւ բարեկամներ պիտի ըլլանք: Բանեց Փոլինի ուտերէն, ու ներքնադրեւտին ուսակալները սոսկեցուց վար: Փոլին հապճեպով ձեռքերը դրաւ կուրծքերուն ու բռնեց վար սահող ներքնադրեւտը.

— Հանդի՛ստ ձգէ զիս, — ճշաց, — պտնիկ չէ՛ գիժացինդ...:

— Գիտեմ, — ըսաւ տղան ամբարտաւան ժպտով, — Ժաղը շատ խօսած է քու մասին: Մի հակառակիր. կը զըղջաս...:

Փոլին զղուանքով անդին հրեց տըղուն ձեռքը. շտկեց ուսակալները, ու ըսաւ կատաղութեամբ.

— Ձօտեանա՛ս: Կ'այտատակեմ...:

Տղան հանեց ծխախոտի տուփը: Գըլանիկը սեղմեց պրկուած շրթներուն միջև. վառեց: Գիտեց հաղուող կնկան անապարանքը ու ըսաւ.

— Ձեմ ուզեր բռնութիւն բանեցնել վրայ: Բայց լաւ մտածէ, ծանօթ եմ պատմութիւններուդ:

Փոլին հաղաւ կօշիկները, մօտեցաւ զրան, պայտասակին մէջէն հանեց սենեակին բանալին, նետեց անկողնին վրայ, պահ ժը նայեցաւ պատի նկարին ու մեկնելէ առաջ պոռայ զայրոյթով.

— Ծունե՛ր...:



Բացաւ տած պատուհանները:

Արեւը՝ բեռնաւորուած ծիւրբու կոյս բոյրերով՝ մտաւ ներս Փոլինի տան պատուհաններէն ու շոյեց կրիտասարդ կընկան սիրտը...:

Ժաղի հետ ունեցած իր սիրարկածի փորձառութենէն ետք, Փոլին որոշած էր մոռնալ դուրսի աշխարհը, ստեղծել նոր ու զուարթ միջոցառում մը տանը մէջ, զանդէլ տիրութեան եւ անհասկացողութեան պատնէշները, որոնք ցցուած էին իր եւ ամուսնոյն միջև:

Այդ դիշեր բայցարիկ խանդավառու-

Թեամբ մը ընդունեց ամուսնոյն վերա-
դարձը: Փիէր զարմանքով Թոթափեց ու-
սերէն առօրեայի մ'իօրինակ մասնու-
թիւնները ու ժպտեցաւ: Չհաննց կօշիկ-
ները: Կստաւ պատշաճի ծաղկած Թա-
ղարհերուն մօտ ու հարցուց:

— Ի՞նչ է, Փոլի՛ն:

Փոլին ձեռքը դրաւ ամուսնոյն ձեռ-
քին: Կայեցան իրարու: Այնպէս Թուե-
ցաւ իրենց, թէ երկար ատեն բաժնուած
էին իրարմէ, ու հիմա՝ ճամբորդութենէ
մը վերադարձի հաճոյքով առջուն՝ վե-
րադասած դիրար:

— Այսօր երկար մասձեցի մեր մա-
սին, — սկսաւ Փոլին, — Աստուած չկա-
մեցաւ մանուկի մը ճիշով լեցնել այս
տունը, ու՞րայ պատճառով լուռ պա-
քար մը ծնաւ մեր միջեւ: Մոռնանք այդ
բոլորը, Փիէ՛ր, վերադառնանք հին օրե-
րուն...:

Փիէն ժպտով նայեցաւ կնկան խո-
նաւ աչքերուն: Չոհոյութեան ձեռքերով
մատուցուած երջանիկ կեանքի մը հրա-
ւերք տեսաւ հոն: Հին օրերէն ծնող զրդ-
ջուցը ունէի եւս մեծցաւ սրտին տակ,
ու շնջաց:

— Քուկդ է որոշումը, Փոլի՛ն: Եթէ
մոռնաւ անցեալը, պիտի կարենանք օղ-
արիլ կեանքի միւս բարիքներէն:

— Մոռցած եմ արդէն չիտփնք...:

Ընթրեցին պատշաճի ծաղկած Թա-
ղարհերուն մօտ:



Երկու օր ետք դացին այն պանդոկը,
ուր անցուցած էին իրենց ամուսնութեան
առաջին դիւրերը:

Բաց պատուհանին մօտ դրկախառ-
նըւած՝ դիտեցին յոռնային գեղեցկու-
թիւնները: Վարը ձորն էր, ուրկէ կը վա-
ղէր գետակը՝ հին կրքը շրթներուն:
Լերան կողերէն կը մազլցէր խիտ ան-
տառը, կը հասնէր բարձունքին, ուր ե-
լեկտրականութեան սիւն մը կը յամառէր
ջնջել բնութեան դեղեցկութիւնը:

Պանդոկի սենեակին մէջ գտան յի-
շատակներ ու Թոթափեցին մամանակի
փռչին անոնց վրայէն...:



Շարաթ մը անցած էր այն օրէն, երբ
Փոլին անդրադարձաւ, թէ երեք օրուայ
ճրագադուձ մը ունեցած էր: Հարուց-
երեսուն մէկ օր անցած էր նախորդ Թու-
ակահէն: Յնցուեցաւ արդեօ՞ք...:

Սպասեց երկու օր ալ: Վիճելի չէր
այլեւս յդի էր:

Յիշեց անխոհմտութեան օրը, Ժազի
խօսքերը...: Ուրե՞մն...: Ուրե՞մն օտար
սաղմ մը կը խայտար իր մարմնին մէջ,
մտահոգութիւններով ու մեղքի դա-
ցումներով լեցուն...: Այնքա՛ն սպաս-
ւած նոր կեանքի մը ճիշդ կար իր մէջ,
բայց...:

Կստաւ պատշաճի Թաղարհերուն
մօտ Չղաց՝ թէ քրտնած է ճակատը:
Կայեցաւ ներս. երազ աչքերով մանուկ
մը գծեց ննջատենեակի կիսամութ ան-
կիւնը, ու Թոթովախօս բռուկը՝ ծաղկու-
տը օրօրոցի մը կողերուն: Պայակած
սպասումներով, անոնց ամբողջութենէն
ուզեց քաղել մտնուկի առաջին բառը ու
չսթել իր մայրական գոհունակութիւնը:
Ժպտեցաւ...: Ժպտեցաւ այս նոր եր-
ջանկութեան համայնքներէն: Բայց համ-
բոյրները վերածուեցան աշնանային չոր
տիրեաներու, ջրուեցան կապածանրի քա-
միներէն ու մնաց մտահոգութեան ծառը՝
անհրապօյր ու մերկ...:

Վիճեցնել՝ խեղդել ներկայի մանուկ
ու ապագայի հսկայ երջանկութիւնը,
պահել առօրեան իր ցանցատ ու խարու-
սիկ յոյսերով: Վիճեցնել՝ Թաղել պա-
տենութիւնը եւ հաւատարմութեան բա-
զինին զոհել մարմնին մէջ շարժող եր-
կունքի ճիշդ: Վիճեցնել...:

Մարտահեցաւ այդ մտածումէն: Ո՛հ,
ո՛չ... ո՛չ, իրն էր, չէ՞... Իսկ բժիշ-
կը...: Բժիշկը, ո՞վ ըսաւ, թէ ամենա-
զէտ է բժիշկը ու չէ սխալած: Այո՛,
պէտք է խարել, կեղծել, պահել այդ եր-
ջանիկ ճիշդ...:



Փիէր հապճեպ քայլերով բարձրացաւ
տան աստիճաններէն: Պատրաստուեցաւ

դրպանէն Հանել բանալին, երբ Փոլին ժպտերեա բացաւ գուռը:

Փիէր ձեռքերը դրաւ կնկան մէջքին ու փորձեց յորձրացնել վեր:

— Չլո՞ւնչ, Փիէ՛ր, — շնչաց երիտաւորը կիներ՝ շարձնել ժպիտ մը շրթներուն:

Փիէր յորձրացուց կիներ վեր, գրբկեց, դէմքը դրաւ անոր հարուստ կուրծքերուն դիմաց ու տարաւ նեւեղու սիրելի բեռը. զսպանկաւոր մահճակալին վրայ:

— Փիէ՛ր... Փիէ՛ր, զո՞ւնչ, լսէ զիս,...

Փիէր ինքզինք նետեց Փոլինի մօտ. ձեռքերով սեղմեց կնկան ուսերը, անշարժացուց դայն անկողնին ու շրթները դրաւ շրթներուն:

Ծծեց կնկան շրթները: Վայրագ բողբացում մը ծնած էր իր մէջ: Վրէժ մը ունէր լուծելիք այն պօղ ու անորոշ Հանդրուանէն, ու երկար ատեն սպասնալիքի մը տառապանքով ճօճուեցաւ իր ու Փոլինի միջև: Ծծեց կնկան շրթները, ցուցուց, ուղեց զիսցնել Հին սիրոյ վերադարձը:

Փոլին փակեց աչքերը, շրթները յանձնեց ամուսնոյն բերնի խաղալուն: Տրտի մը կար սրտին տակ, իսկ մտքի անկիւնին՝ յաջողութեան մը կասկածն ու սպասումը: Եզրակացուց, թէ կիրքի խաղերով տկարացած մտքի մը մէջ անելի գիւրտութեամբ պիտի կարենար ներմուծել խաբէութիւնը: Արտները մօտեցուց ամուսնոյն կուրծքին...

Գարնանային մեղմ հովը մտաւ ներս աննետկէն ու երկու մերկ մարմիններու վրայ դրոշմեց իր թարմութիւնը: Պահ մը հառ, ձգեց հեղտանքի հեւքին տակ Հանդուղ մարմինները. ու չբռնիքի հոգաբար դռլերով յանրարեան՝ ելաւ դուրս:

... Փոլին գոց, թէ թուլցոյ մարմնին Հետ միասին տկարացած էր նաեւ կամքը իր մէջ, ու պիտի չկարենար իրազորձել ծրագիրը: Տառամտեցաւ. ձգեց սր: զգացումները տառնորդեն դիմք, ու զգաց թէ հակամակ իր կամքին՝ կը թըր-

ջուէին աչքերը: Տիտրացած էր, ինչպէ՞ս ստէր: Որոշած էր ամենամեծ Երջանկու թիւնը կեղծիքով յայտնել ամուսնոյն, Ըսել՝ թէ նոր սիրոյ արդիւնքն էր ան. բոսել՝ թէ չփոթած էր բո՞րիւր: Բոսել՝ թէ նոր զգացումները...

Իսկ Հիմա՞...:

Տղուն ձեռքը իջաւ կնկան մաղկըն վար ու կանգ առաւ՝ այտերուն վրայ դանուղ խոնաութեան հարմէն: Փիէր շտկեց իր կուրծքին վրայ Հանդուղ Փոլինի գլուխը ու շնչաց.

— Ինչո՞ւ յուզուած ես, Փոլին:

Փոլին մատները դրաւ ազուն ախանջներուն ետեւ ու համբոյր մը դրոշմեց Փիէրի շրթներուն:

— Երջանկի եմ, Փիէ՛ր:

— Ես ալ...:

Լուցին: Անգանի ժամացոյցին զարկերը դարձած էին տիրական: Փոլին բողբաց, թէ անպառուղ կանցնէին վայրկեանները: Որոշեց յայտնել: Նախընտրեց Հեռացնել նայուածքը ամուսնոյն աչքերէն: Կրնա զարձակաւ դրաւ անոր կուրծքին, ու բռաւ:

— Երջանկի եմ, որեւէ օրէ աւելի: Երջանկի եմ նոր դէպքով մը, Փիէ՛ր: Ետևով պիտի չկենայ մեր յունը:

— Ի՞նչ բոսել կ'ուզես...:

— Եզրի եմ, Փիէ՛ր:

— Փոլին...:

Փիէր շտկուեցաւ անկողնին մէջ: Գարնան բոյրերով լեցուն սեննակը լեցուեցաւ անձրևանո փշերուայ մը շուտկով: Ուրեմն, չփոթած էր բո՞րիւր: Վեներական ախտի ոչ մէկ հետք մնացած էր իր վրայ: Ուշացում մըն էր միայն, ինչպէ՞ս կը սրտանէր շատերուն: Ահա, շուտով նոր երջանկութիւն մը պիտի աւելնար ատնը վերածնած Երջանկութեանը վրայ:

— Փոլին...:

Մատներով վար վրոյնց արցունքները կնկան այտերէն, ու թոյլ տուաւ սր ժպիտը՝ տիրէ՛ աչքերու խոնաութեանը: Խանդակառուեցաւ Փոլին՝ կասկածի ոչ մէկ հետք ամուսնոյն աչքերուն մէջ: Ու-

զեց զար մը եւս զննել յաջողութեան բարձրացող պատին վրայ:

— Երանի ուրիշ բժիշկի մըն ալ երթայինք, Փիէլի: Այդ բժիշկը անբարեբախտ զանուցաւ ու հապճեպ որոշում մը տուաւ միայն:

— Հոգ չէ, սիրելիս, շուտով կատարեալ պիտի ըլլայ մեր երջանկութիւնը:

— Բայց ինչու անիրաւ տեղը ըստեղծուէին այդ տխուր օրերը: Կը յիշե՞ս, երկու անձանոթ անձերու պէս կ'ապրէինք այս տան մէջ:

Փիէլի շրթները կտրեցին կնկան խօսքերը. նոր հարստութեամբ մըն էր լեցւած կնկան մարմինը, ու Փիէլի համար այլեւզ աւելի սիրելի էր Փոլին: Մեղմութեամբ շոյեց կնկան. մերկ կուրծքը:

— Այլեւս չիտօխ անցեալի մասին: Երջանիկ եմ, Փոլին:

Փոլին ցուցամտաւ դբաւ ամուսնոյն շրթներուն:

— Առաջարկեցիր չիտօխլ անցեալի մասին, չէ՞...:

Խնդացին: Փոլին ամփոփուեցաւ ամուսնոյն ձախ թելին մէջ. ալ ծիծը հանգչեցուց տղուն մերկ կուրծքին վրայ: Յաջողած էր խաղը. ո՛չ կասկած, ո՛չ ստատամուտ Փիէլի կողմէ: Փրկուած էր իր արդանդին մէջ շնչող մանուկին գոյութիւնը, ու անոր հետ միասին՝ ներկայի երջանկութիւնն ու անպապայտ ապահովութիւնը:

«Պանդան: Երազրեցին: Վիճեցան երեսային անուան ընտրութեան համար: Նոր համարոյնն՝, նոր յոյսն՝...»

Անորոշ ժպիտով լուսնկայ մը, գիշերուայ առաջին ճառագայթները նկատեց երջանիկ եւ մերկ մարմիններուն վրայ:



Կէս գիշեր:

Փոլին՝ ընկողմանած անկողնին վրայ՝ կը գիտէ պատուհանէն դուրս տարածուած երկնքի համայնապատկերը: Կը զգայ, թէ աստղերու փայլը տարբեր է

այդ գիշեր: Անոնք տեղեայլ ընող պարեն բռնած. կը կայծկլտան, կը շարժան, աշունք կ'ընեն իրարու ու ցոյց կու տան լուսնկան, ուր ժպիտը կը մեծնայ համբիթաց, զոհունակութեան ծիծաղով լի յրենյու համար յաջողած ու երջանիկ մարդոց որտեղը:

Ասող մը ինկաւ ու թաղուեցաւ անհունին մէջ: Փոլին փակեց աչքերը, մաղթանք մը ըրաւ իր մէջ ապրող շնչաւորին համար ու ջնացաւ:



Կէս գիշեր:

Անքուն է Փիէլը, ու աչքերը երկնքին սեւեռած՝ կը մտածէ: Կը զգայ, թէ աստղերը կը տկարանան աստիճանաբար. կը կայծկլտան, կը պայքարին, ազանքով լոյս կը մուրան լուսնկայէն, որու երեսին թախծ է դբոշմուած այս գիշեր:

Ասող մը ինկաւ ու թաղուեցաւ անհունին մէջ. ան կորսնցուցած էր պայքարը ու չէր կրցած տոկալ մինչեւ արշալոյս: Փիէլի սրտին մէջ խանդավառութեան վերջին շրթերը խամրեցան ու կասկածի որդը սկսաւ զերել միտքը: Երկու շաբաթ առաջ, Փոլին յանկարծ դուրս էր ելած իր անտարբեր վիճակէն, ու նոր խանդաւորաւորով փարած ամուսնոյն: Կեղծիք էր բոլորը. ո՛չ, ո՛չ: Անպամ մըն ալ հաշուեց օրերը. այո՛, սխալած էր: Մեղադրեց ինքզինք: Կեղծիք չէին կրնար ըլլալ վերջին օրերու տաք խօսքերն ու համարոյնները: Պէտք է մեռցնել կասկածի որդը. կնկան արդունդին մէջ շնչող էակը ի՛ր դասակն էր, ի՛րը...:

Փորձեց ժպիտ մը դանել լուսնկային թախծոտ վէճքին վրայ...:



Կեանքը երբեք այդքան դեղեցիկ չէր եղած Փիէլի ու Փոլինի համար: Երեկոները կը նախընտրէին ելլել դուրս, անցնել լուսաւոր հրապարակներէն, գիտել լուսաւոր ցուցափեղկերը, ուր խաղալիք-

ներն ու նորածինի հաղուստները ձէթ կը կաթեցնէին երջանկութեան կանթիկին. կը նայէին իրարու, կը զգային, թէ այլու հետ զոյգ մը չեն լուկ, այլ ընտանիք մը՝ մանուկի լացով ու ծիծաղով ուռնացած: Պատանի սիրահարներու պէս՝ ձեռքերու ազուցումով նոյնացած՝ կը քաշէին գետեղեքքի ճամբայէն, իրենց ժպտուն դէմքերը տուած զեփիւտի շոյանքին: Գետեղեքեայ նաշարաններէն մէկուն մէջ աւունց ծիծաղները կը խեղդուէին զարեջուրի փրփուրներուն օրրանին, ու գունուկապութեամբ կ'ընդունէին անծանօթ մարդոց ներողամիտ ժպիտները:

Վերադարձի ճամբուն վրայ, անտուն սերահարներու նման կ'օգտուէին մութ անկիւնի մը պատեհութենէն, իրենց շրթները միացնելու համար:

Կը գիտէին անլուսին երկինքը: Աստղերը իրենց փայլի կատարելութեան մէջ կը շողշողային...



Մեղմ զեփիւտը միբռնեցաւ բնութեան կանչող զրկին մէջ, ու ձմբան գոմանութեան անծանօթ աղլկայ մը անհուզութեամբ յանձնուեցաւ զարնան թեւերուն: Ամառնային անհրապոյր համբոյրները՝ քրտինքի պփռանքով ծածկեցին զարնանային երազները, ու զեփիւտը պարտուած շան մը նման մեկուսացաւ բլուրի մը բարձունքին: Պարտալի մը զուապիր հանդարտութեամբ սպասեց


աշնանային առաջին հրաւէրին, ու հոյի պատմունքն մը առած իր ուսերուն՝ նետուեցաւ բլուրէն վար՝ գէպի ծարաւ դաշտերն ու սուկեղոյնով բեռնաւորուած ծառերը: Սպասումի վրէժինդրութեան զայրոյթով հարուածեց բնութեան մտիտ վեղեցկութիւնները, անջատեց, ցրուեց, աւերեց. իր նոր աւժովը հրապուրուած՝ բարձրացաւ երկինք, փոթորկոտ թեւերով ամպերու խենթ պար մը ստեղծելու համար հոն, ու վերադարձաւ՝ անձրեւի պարարտ աւար մը քաշելով իր ծախն: Զոնձրացած աշնանային միօրինակ խողէն, ուժղին սառնութեամբ փշեց իջնող կաթիլներուն վրայ ու դանոնք վերածեց ճերմակ փաթիլներու:

Չմեռնային գորշ երկինք. կը ձիւնէ հանգարտ:

Գեղերու հոտով ու ճերմակաղգեսա կիներու զթութեամբ լեցուն սպիտակ շէնքի մը առջեւ կանգ առաւ փոթորիկը. զուսպ քայլերով բարձրացաւ պատէն ու նայեցաւ անգաղտնապահ պատուհանէ մը ներս: Չուղեց զարնել ապակիին: Ներսը երկունք մը կը կատարուէր. սպասող նայուածքներ հւ անհանդարտ ձեռքեր անձկութեամբ կը սպասէին պիտի մարմինի մը թուրութեան:

ձիւն մը...: Կատարած ստահակի մը նման սուրեց ծերացած զեփիւտը ու փախաւ: Ծանջցած էր այդ ձայնը. կեանքի ճիւղէն էր ան: Ծուլին ճիւղ...:

Ա. Ա.



Գ Ա Յ Ի Ն,
Շ Ն Չ Ա Ի Ո Ր Ե Ց Ի Ն,
Ե Կ Ա Ն



1900 Սեպտեմբերի սկզբները, Համազասիի «Մասպար Իփլիկան» թատերախումբը, 18 հոգիներէ բաղկացած անձնակազմով մը, Պէրութի մէկնցու գեղէ Միացեալ Նահանգներ և Գանատա և երկու երկիրներու շրջապատը շաղագիծուն մէջ ներկայացուց իր խաղացանկին երեք կտորները՝ «Կայսր», «Ոսկի Աւազակը» և «Օսկար»:

Արտագնա խումբի մը համար անսովոր է երկուսից ու մեծագույն թիւազարկան: Ան ներտականը թատրոնի սրբոյն աչք նուազութիւնը կորսելու յանձնարարութիւնը չէ: Հնուարութիւնը կրնայինք ժամու տակաւն և մեր հնացումը զարկել, եթէ խումբին ստանձնած առաջնութիւնը սահմանափակուէր միակ շաղագի մը միակ բնին վրայ: Ընդամենը մէկ ամսուայ ընթացքին, ութ տարբեր շաղագներու մէջ, երեք տարբեր փէկներով տանըութ անգամ ընծ քարձրանալը զորք մըն է, որուն երական տարրութիւնը ընդգրկելու համար մարդ անպարտան պէտք էր զգայ ուժ առ երեսակայութեան: Դիրութեանը կ'ըսենք, որ կատարուածը պետական զորք էր, մեծ ընկերութիւններու կողմէ համարուուած պաշտօնական խումբի զորք, ըսչ չինք անգրագանաւոր, որ պետութիւնները կամ մեծ ընկերութիւնները տնտես զիրութեանը չեն մտեր իրենց մեծագույն զբաղաւորութիւնը՝ մարդը: Ամեն բանի չափ մը կայ: Մեր ըրածը, սակայն, այս պարագային եւս, չափէ զուրք բան մըն էր, ինքնուրու խոյանք, երկ ու երեք մէկ պատկերը մեր կեանքին, Սփիւռքին, սփիւռքահայրան, որ հակառակ տարկայական անկաստ պայմաններուն և ներքին ջեղերու թերահասարակեան՝ զեւ կը հաստատայ իր ուրոյն զիմարիքը ցցել աշխարհի մէջ, հասանք ի վեր թեմարելու հակառակորդը նկատուի մը վերանան: Երբեք ազգ սուրբու մեր անզիմարելի քնաղին, հասարակ, յամառութեան քարձրացոյն պրտայայտութիւններէն մէկն էր այս արկանաբնորութիւնը, որ ոչ միայն նոր որակ մը կը զուարէ «Մասպար Իփլիկան» խումբի զառորդ զարու բնուն անցելուն վրայ, այլև Սփիւռքի մշակութային մեր ամարին մէջ կ'արձանագրէ սիրունի մը:

Հասարակ էները զառարկար մը կու տան երկուսի մշտական երկուսիներուն մասին:

ԺՈՐՃ ՍԱՐԳՍԵԱՆ
Նիկեֆոր Ֆոկասի դերին մէջ



ԱՆՄԱՅ ԶՐԱԿ...

Միացեալ Նահանգներու եւ Գամատայի գլխաւոր կեդրոններէն մեզի հասնող նամակներ աւ գրութիւններ կը հասաւտեն, թէ Համազգայինի «Գաւապար Իփէկեան» Բատերախումբի շրջապատը ստեղծած է մակընթացութիւն մը, մշակութային հետաքրքրութեան եւ ծարախի:

Արուեստի հարձքը կենսատու աւիչ է հոգիներու մէջ, երբ զայն բազմութենէ բազմութիւն փոխանցող տարրերը իրենց դերին գիտակցութիւնն աւ ապրումը ունին:

Երաշտէն պատուած հոգիներ վրայ՝ անձրելը ստեղծագործ ուժ է եւ վերանորոգումի ազդակ: Յուսահատական ամայութիւնը... ծաղկատանի՛ մը վերածող բարիք:

Կը թուի մեզի, թէ ամերիկանայութեան համար նոր փորձառութիւն մը եղաւ Պէյրութի Բատերախումբուն մշակութային դեպքանութիւնը բանի մը հայաշատ քաղաքներու մէջ, ուր հոգեկան կացի եւ կամրջումի ծարարը տասնամեակներու պատմութիւն ունի:

Ինձն իր մէջ կըզգացած, մեկուսացած զազութ մը, որ յամկարծ պատուեան կը բանայ բաց հորիզոններու վրայ աւ քարմ օդ կը ծծէ, օքափելու համար երկարատու քմրութենէ:

Խումբը եկաւ նաեւ Պոսթըն. նախասեսուած երկու ներկայացումներուն տեղ՝ տուաւ երեք ներկայացում, աւ տեսանք թէ ի՞նչ վերանորոգ շունչ աւ մքնայորտ ստեղծեց, բազմութիւնները հոգեշարժի ենթարկելով:

Կաւ Անէլլըս, Սամ Ֆրանսիսկօ, Ֆրէզնօ, Մանթրէալ, Թորոնթօ, Պոսթըն, — ամէ՛ն տեղ, ուր բնմայրեց իր յայտագրի երեք Բատերական գործերը, «Գաւապար Իփէկեան» արժանացաւ համաժողովրդային գնահատումքի:

հանդավառութիւն մը, որ, ըստ մեզի, արուեստի գուտ պահանջէն աւելի՝ ազգային-մշակութային հաղորդութեան մը ծարաւէն կը թելադրուէր:

Մշակոյթի մարզին մէջ՝ թատրոնը ամէնէն բարձր ու դժուարին ճիւղն է, որ կը կայտօտի, նախ, ղպրացի. ապա՝ ընդունակ տարրերու, եւ վերջապէս՝ ընկերային ու մշակութային որոշ դաստիարակութեան տէր հանդիսատեսու գանգուածներու:

Եթէ հայրենի երկրի մէջ թատերական արուեստի *բեմական* մասը նուսնումներ կ'արձանագրէ՝ պատճառները բացատրութեան չեն կարոտիր: Գործնական ամէն հնարագործութիւն կ'ընծայուի, որպէսզի շերտսաններ խըմորուին, բնագոյնական տուեալներ աղանդաւորին, դասընթացներ հաստատին արտասանական եւ առագանական վարժութեանց, թատերական գրականութեան ուսումնասիրութեան եւ բնագործական արուեստի զարգացման համար:

Եթէ Լիբանանի մէջ եւս մասնակի կենդանութիւն մը ստեղծուած է, շարժումին ազդիւրը պէտք է փնտռել հայաստան այդ գաղութի ազգային մըրթնալարտին, մեծ գանգուածներու համատեղ ներկայութեան մէջ: «*Փասպար Բփէկեան*»-ը իրեն համար ենթահող ունի ընդհանրապէս Միջին Արեւելիի ու յասկապէս Պէրճաքի հայութիւնը:

Եթէ ունենայինք այն ապահովութիւնը, որ կարելի է արուեստատէրներու այս խումբին համար ասպարէզի մը վերածել թատրոնը, պիտի իրատունք զգայինք նաեւ հաւատարմութիւնը, թէ մշակութային մեր կեանքը կրնայ օրէ օր կենդանանալ, ու մասնաւորաբար Հայ Բեմը՝ դառնալ ընկերային վերելքի ամուր կռուան մը:

Եթէ հայ թատերգութիւնը սահմանափակ դրամագլուխ մը միայն ունի, մատուցու վրայ հաշուուող հիմն-վեց գրագէտներով (անոնք այ՝ առհասարակ ժամանակավրէպ), հարուստ է սակայն միջազգային անդառտանը, ուրկէ կրնանք անպայման օգտուիլ: — Պատուաստուիլ նոր իմացումներով, հաղորդ մնալ մտքի ու հոգիի նոր հոսանքներու, ընկերային եւ մարդկային նոր շարժումներու:

Գոնէ անմիջական ներկան յուսատու չի թուիր այս տեսակէտով: Ու անոնք, որ մշակոյթի ու արուեստի տեղնով մը կը փորձեն հերկ ու վարացան կատարել՝ կը թախին անյադարանքի դժուարութեանց: Կը յուսալքուին ու կը պարտուին. կամ կը շարունակեն մաքտուիլ եւ նահատակուիլ:

«*Փասպար Բփէկեան*»-ը անվիսարկնելի հարստութիւն մըն է այս պայմաններուն մէջ, ու արժանի՝ համազգային գուրգուրանքի: Տեսնել իր նիզը, յստակայս ծափահարել իր իրագործումները, սիրոյ ու հիացումի արտայայտութիւններ ունենալ, — դրական նրեւոյթներ ու վկայութիւններ են, սակայն գործնական նպաստներ եւ նոր խոյանքի տուեալներ չեն: Հարկ է գիտակցիլ խումբի համահայկական-մշակութային դերակատարութեան եւ նրա թափուքի կանգնել:

Հայ մշակոյթի մարզին մէջ՝ թատրոնը բացառապէս կը կարօտի տրամտեսական միջոցներու: Հայ ժողովուրդի ընդհանրական կեանքին մէջ՝ թատրոնը ամէնէն անմաշ գրան է: Եթէ ինքնապահպանումի դատին կը հաւատանք, միջոցներ պիտի ստեղծենք միան խումբեր ստի պահելու, զօրացնելու եւ զարգացնելու:

«ՀԱՅՐԵՆԻՔ»

ԽԱՉԻԿ ԱՐԱՐԱՏԵԱՆ
Վասիլ Լեկայեճի դերին մէջ




«ՎԱՄԱԶԳԱՅԻՆ»Ի ԲԵՍԱԴՐՈՒԹԵԱՆՑ Ա Ռ Թ Ի Ի

Վերջին ամսուան ընթացքին, ամերիկահայ հոծ շրջաններու մէջէն յուզման ալիք մը անցաւ: Անցաւ, չեքմացուց, խանդավառեց եւ սնայ: Համազգայինի «Փաստալար Իփեկեան» թատերախումբի այցը, այդ կարճ ժամանակամիջոցին, տարօրինակ խանդավառութիւն մը ստեղծեց: Խումբը արեւի երկրէն կու գար եւ արեւ՝ քերաւ...:

Ամերիկայի շրջուցիչ կեանքին մէջ՝ ունինք երդախումբեր, թատերախումբեր, պարախումբեր եւ ժշակութային բազում միութիւններ, անկախ ինչ որ շունչին՝ մթնոլորտն է, եւ Համազգայինի խումբը այդ մթնոլորտի փոխանցումն էր որ շրջաւ... Կամբջեց՝ Միջին Արեւելքի շունչը խանդելով մեր շունչին... Բերաւ Հայաստանի շունչին կտորիկ մը՝ այնքան խանդալառ այդ «Զարթի՛ր, լա՛ս», մրոնիմ քրզի» ազգային երգով... Եւ աւա, գացին, մեծ յայտերով՝ որ կըրկին պիտի գան: Բարձ՛վ գան:

Նիւ Եորքի շրջանը բախտաւորներէն եղաւ, խումբին հետ եօթը օրուան վաշիլքի ժամերով: Հայ Մշակութային Միութեան ժրջան աշխատանքներուն շորհիւ, դադուիք խումբին ժողովն ծանօթացաւ, Նիւ Եորքի տեսարժան վայրերը միասին պտտեցան եւ Հաւաքօյթներու մէջ խանուեցան... Հանելի էր տեսնել ժողովրդային ընդունելութիւնը՝ խումբին: Հայ Մշակութային Միութիւնը ապահոված էր իր անդամներու կառքերը... Գրութիւններ... «Բարի՛» եկամ Համազգայինն», «Հայ Մշակութային Միութիւնը քարի գալուստ կը մագքէ»... Ուրախալի էր տեսնել ժանաւանդ թատերախումբին եւ Հ. Մ. Միութեան անդամներու սիրալիր յարաբերութիւնները... Եւ դեռ նոյն Միութեան կողմէ կազմակերպուած Պաշիկ Արարատեանի ասմունքի երեկոն եւ անոր յաջորդող խանդալառ մթնոլորտը... Բուրբը կ'ապացուցանէին, թէ Հասկացողու-



Օնան Գուրգեն (Ժ. Շահապետ), Թեոփանո (Գարսէն Տէր Կարապետեան) եւ Վասիլ Լեկապէն (Խ. Արարատեան)

թիւնը, մասնումները, զգացումները եւ աղբյւրն ցաները նոյնն էին Հայու բոլոր մեկորներուն համար:

Համազգայինի «Գաապար Իփէկեան» թատերախումբը, ղեկավարութեամբ Ժ. Աարգիսեանի, Նիւ Եորքի մէջ ներկայացուց Շանթի «Խայր»-ը, եւ Ֆրանսական բռնակալին՝ «Օսգար»-ը: Խումբի բեմական արուեստի մասին լրիւ դադարաբար կազմելու համար, մենք Բաֆֆիի «Ոսկի Աֆաղաղ»-ը տեսանք Գոսթընի մէջ:

«Գաապար Իփէկեան» սփիւռքի միակ թատերախումբն է, որ վերջին երեսուն տարիներուն, քաջարար դիմադրելով բոլոր դժուարութիւններուն, կեցած է պատեհէի վրայ եւ կը շարունակէ մնալ: Բնական է, որ այսպիսի թատերախումբէ մը ակնկալութիւնները մեծ ըլլան, եւ քննարկութիւնը իրենց խաղին՝ ըլլայ արուեստի փնտառութեամբ մը: Ընդունելով Հանդերձ, որ թատերախումբը սիրողներէ կը բաղկանայ, խումբին կեանքը եւ վայելչած վարկը կը ստիպեն, որ ըլլանք

արդար՝ թէ՛ քրտերական արուեստի, թէ՛ խումբին նկատմամբ:

Բաֆֆիի «Ոսկի Աֆաղաղ»-ը, Բաֆֆիի միւս զործերուն բաղդատարար՝ ձգձգումներով լեցուն կտոր մըն է: Աարգիսեան, այս վէպը թատերադրութեան վերածած ատեն, բրած է սքանչելի գիւտեր, որոնք սակայն աւելի ազդու կ'ըլլային, եթէ թատերակը չպահէր այդ ձգձգումները: Վէպի առանդքէն հետո եւ ոչինչ աւելցնող տեսարանները կարելի էր «չդիտել»:

Ժորժ Մարգիտեան, Մասիսեանի գերին մէջ տուաւ սքանչելի խողարկութիւն մը: Այդ վաշխառուի հողերանութիւնը լրիւ եւ հայակազ մեծով ներկայացուց: Իները մարմնաւորեց իր մայրի փոփոխութիւններով, մեռքի մասներու կծծիտարկ մեկերով: Յատկանշական էին իր շարժումները՝ այդ խորամանկ մարդը, որ միշտ առնել գիտէր պաղարկունութեամբ՝ նստած վիճակի մէջ, մէկ անգամ միայն իր հոգեկան վրդովումը յայտնաբերելու:

Համար ոտքի էլաւ, ա յն ալ՝ երբ մէկը...
իրմէ զողութիւն շրաւ: Սարգիսեան
Մասիսեանի տիպարը առաւ Հոյակապօ-
րէն: Աստուծոսիրող գերասանի մը բո-
լոր յատկութիւնները ի յայտ եկան իր
այս խաղարկութեան մէջ:

Յատկանշական էին եւ մեր ուշա-
գրութիւնը գրաւեցին, իրենց գերերով,
Տիկ. Նելլի Մինասեան՝ գիւղացի, սիրով
յեցուն եւ զուրգուրտ մօր գերին մէջ.
Տիկ. Մինասեան առաւ իր տիպարը.
ուզակի հակապատկերը Մասիսեանի,
ինչ որ աւելի ցայտուն դարձուց Մասի-
սեանի տիպարը: Ժորժ Եանապեան՝ խո-
րամանկ փաստարանի գերը գրեւորեց
չառ յաջող, իր պրպտող նայուածքնե-
րով, գլխու նշանակալից շարժումներով:
Տիկ. Չ. Եանթ յաջող էր իր երեք գերե-
րուն մէջ, բայց ապաւորիչ էր լացող մօր
գերին մէջ: Հասուն գերասանուհի է Տի-
կին Եանթ եւ այդ արտայայտեց իր տար-
բեր գերերը տարբեր մեներով գրեւորե-
լով: Կերասանական նկարագրային (Էա-
րաժքըր) զպրոցին կը պատկանի Պաշիկ
Արարտեան եւ կրնայ իր տիպարներուն
մէջ մտնել լուսալէս: Այս թատերակին
մէջ՝ ան առաւ տարբեր տիպարներ,
նրբութեամբ: Յաջող էր Մարի Սարգի-
սեան իրբեւ «Գայօ» մանաւոր ժամա-
նակի ճշգրտի տեսակէտ՝ իր եւ Վրէժ
Աւազեանի միջեւ եղած այդ՝ «Էս ի՞նչ
պզտիկ մի ի, ի՞նչ կ'ուտի» խօսակցու-
թեան մէջ, ճշգրտա կերպով տուաւ գիւ-
ղացի ազու մը պարզութիւնը եւ միամը-
սութիւնը: Ստեփան, Երբ Օր. Սարգիսեան
բնմ եկաւ իրբեւ յաճախող, մենք շաղ-
ջիկ Գայօ մը տեսանք: խաղարկութեան
ըմբռնումի՝ յստակ տարբերութիւն մը
կարելի էր տեսնել տարեց եւ երիտասարդ
գերասաններու միջեւ: Ճիշդ կար երիտա-
սարդ գերասաններու (Սարգիսե Արայան-
եան, Գարունս ձանաղեան, Գայմա
Գարագաշեան եւ Արփի. Պայաստրեան)
մօտ, անկան թատերակի նրբին կէտերը
մնացին անորոշ՝ իրենց խաղարկութեան
մէջ:

Գալով խաղի ղեկավարութեան եւ

բեմադրութեան, Սարգիսեան, այս կտո-
բր իրապաշտ (րիբլիզմ) զպրոցով մեկ-
նարանեց: Այս զպրոցը կը պահանջէ
կեանքի պիտոյքներու վերաբրտապրումը,
եւ, ճիշդ այս տեսակէտն ամենա-
զժուարն է մեկնարանութիւններուն, մա-
նաւանդ՝ Հայ բեմին Համար: Այս գժուա-
րութիւնները կը մնային յատկօրէն այս
բեմադրութեան մէջ: Տե՛րներու պար-
տադրած վիճակէն ծնած էր անհամեմա-
տութիւն եւ անհարգողակցութիւն՝ դե-
րասաններու եւ տե՛րներու միջեւ, որ
թատերական առումով Հիմնական ան-
հարմարութիւն է: Չբացած էր, օրի-
նակի Համար, զուգահեռական յարաբե-
րութիւնները՝ պատասաններուն եւ բեմ-
կան պիտոյքներու: Ասիկա Հիմնական
պահանջ է բեմին վրայ, ինչ որ կը պակ-
սէր այս խաղին մէջ:

Լեւոն Եանթի Վալարսը տեսանք Նիւ
Եորքի մէջ: Աւրախայի էր տեսնել բեմ-
ադրութեան նոր մօտեցում մը: Տե՛րներե-
րու զազախարը եւ կոտորցը շատ յաջող
էին: Դժբախտաբար, կորսնցուցին իրենց
աղցեցութիւնը՝ առաւ լոյսերու դործա-
ծութեամբ: Պաղը պահեց միջակ ուժա-
կանութիւն մը:

Գարմէն Տէր Կարապետեանի խա-
ղարկութիւնը գրաւեց մանաւոր ուշա-
գրութիւն: Տուաւ Քէնֆանոն՝ իր զանա-
զան վայրկեաններուն մէջ: Տէր Կարա-
պետեանի խաղարկութիւնը ցցուն դար-
ձաւ մանաւանդ, երբ յարաբերութիւնը,
բեմական իմաստով, շեշտուեցաւ իր եւ
Սարգիսեանի ու Արարտեանի միջեւ:
Ժորժ Եանապեան՝ Օճան Գուրգէնի գե-
րին մէջ մնաց անհարգողակից: Ս. Գուր-
գէնի եւ Հաննայի (Գայմա Գարագաշ-
եան) տեսարանները կորսնցուցին կեղ-
բոնացման կապը եւ շարժումներու պար-
տադրանք մը մնաց բեմին վրայ, միայն:
Մեր ուշագրութիւնը գրաւեց Գալունս
ձանաղեան, իր երկու գերերուն մէջ՝
Կուղիկին եւ Ներքինին: Մեր ուշագրու-
թիւնը գրաւեց նաեւ Յակոբ Քորիկեան,
իր իրապաշտի ճալունքով եւ գլխու
շարժումով: Արարտեան իր գերը զրո-

սեւորեց կէցուածքներով եւ մայրի փոփոխութիւններով, յաջող էր եւ տիրող՝ բեմին վրայ:

Փիկսը պահած էր Շանթի «ևս ոչինչ չտեսայ՝ յանդերձ, որոնք մեր կարծիքով, կարելի էր փոխել: Իսկ դազաթնակէտ հասնող տեսարանը — կերք թէնֆանոն պահէ կը հետաքննէ — շատ աւելի զօրաւոր պիտի ըլլար, եթէ շարժումներու ջրհոտու եւ խոյածեղ ձեւերը որդեգրուէին: Այս տեսարանը հարուստիւ թատերական տեսարան է համաշխարհային ոտուժով եւ կարելի է թատերագիր Շանթի մեծութիւններէն սեպել: Համաժողովուն աշխարհը, թէ Շանթի այս գործը աւելի միտք է, քան շարժում. մենք կընենք բազում թատերգութիւններ թըւել՝ միտաբար համար այս կարծիքը: «Խայտը»-ը աւելի մտաշեղի պիտի ըլլար, եթէ ուսումնասիրուած շարժումները յստակ ըլլային եւ յատկապէս զուգահեռ: Կեցուածքները ըլլային իշխանական եւ թայտիլը՝ խորխոր: Բեմին վրայ յստակ ըլլար այնքան անհրաժեշտ շեշտաբերումով: Շատ աւելի օգտագործուէին բեմին վրայ գործած պիտոյքները, որոնց շուրջ կարելի էր խաղարկութիւններ կատուցել՝ հոգեկան համապատասխան վիճակ տալու համար:

«Օսկար» Էմիլտին բացառիկ խաղերով առջուն գործ մըն է. եւ խումբը, ժորժի ղեկավարութեամբ, պահեց այդ աշխուժութիւնը: Նկատելի էին գերասաններու թեթեւ եւ արագ շարժումները, որոնք փիկսի մեկնարանութեան յաւաքումնակցին: Ըստ էին բեմական պատկերներու կատարողները: Դերասաններու միջեւ ստեղծուած անհարթակ-

ցութիւնը ընդհանուր բեմադրութեան եւ թատերակի դարձուածքներու մէջ կարսրեցաւ:

Ինչպէս վերը բոնք, մեր քննարկութիւնը ըրինք, մղուած՝ լաւ տեսնելու գաղափարէն եւ մտահոգութենէն, ինչպէս նաեւ այն համոզումէն, թէ քննարկատուութիւնը չի իր հոգեկան մէջ: Ուրախութեան զգացումներով լեցուած ենք թատերախումբի կատարած սքանչելի գործին հանդէպ եւ յոյսերով լեցուն, որ այս խումբը իր անխոնջ ղեկավար՝ զերուսոյց Ժորժ Մարդիսեանի ղեկավարութեամբ, արտադային պիտի արժանանային նորանոր յաջողութիւններ:

Աննկատ կարելի չէ թողուլ համագրայինի այս շրջապատը կողմակերպողներու հակայ աշխատանքը: Լեւոն Պէրպլերեան եւ Վարանդ Փափաղեան երկու «խենթ»-եր են, որոնց պաշտամունքը հանդէպ հայ մշակութիւն, ինչպէս աշխատանքի հաւաքը՝ զիրենք մղեց այս խիզախութիւն: Վստահ պիտոյքով հանդերձ, որ նիւթական կարեւոր վնասով մը պիտի վերջանար այս շրջապատը, այս երիտասարդները ոչ մէկ վարանում ունեցան: Իրենց հոգիին բաւարարութիւնը եղաւ այն, որ ամերիկահայուն ընծայեցին անմոտանալի օրեր... Եւ եղաւ ատիկա: Զերմացանք, թարմացանք, իրացանք, — փոյթ չէ թէ շատ կարճ ժամանակի համար...
Ատիկա կը պարտինք ձեզի՛, Լեւոն եւ Վարանդ...
Լեւոն Գրիգորեան, Վարանդ Գրիգորեան

ՀՐԱՆԻ ՄԱՐԳԱՐԵԱՆ



ԳԱՐՄԷՆ ՏԵՐ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ
Քեոֆանոյի գերին մէջ

«ԳԱՍՊԱՐ ԻՓԵԿԵԱՆ»
ԹԱՏԵՐԱԽՈՒՄԻ
ՆԵՐԿԱՅԱՅՈՒՄՆԵՐԸ
ՊՈՍԹՐԵՆԻ ՄԷՋ

Պէրոթի Համադղայինի «Գասպար՝ Իփէկեան» վաստակաւոր թատերախումբի ելոյթները, որոնք յայտնապէս խանգաւանցին ամերիկական եւ զանազանայ Հայաստան գաղութները, ազաջոյց մը աւելցուցին սփիւռքահայութեան ազգային ներկային ու Հաւատքով լեցուն ազգային վերաբերեալ:

Սփիւռքահայ թատերական աշխարհը միշտ կենսունակ եղած է, իր մէջ ունենալով հայ թատրոնի հիմնադիր ու գաղափ եղող դերասան - բեմադրիչներու փայլուն համաստեղութիւն մը, որոնցմէ շատեր կամ անոնց արժանաւոր շտապիղները հիմնադրիչներն ու շարունակողներն են ներկայ համահայկեան թատերական տրուեստին:

Հայ թատրոնը ունեցած է իր բազմաթիւ ու բազմառեսակ հանգրուանները:

Սակայն, այսօր, ան կ'ապրի նոր ուժով ու նոր կեանքի անհասարակչեմ վերիվայելումները կը դիմադրուէ հին

մարդկային ամբարձած կենսափորձով:

Այսօրէս, Սեպտեմբեր 19, 20 եւ 21ին, յաջորդաբար Պոսթրենի թատերասէր Հասարակութիւնը հասոյցն ունեցաւ դիտելու վերոյիշեալ թատերախումբի երեք ներկայացումները: Բաֆֆիի ձևակ Աբաղազը, Է. Շանթի «Կայսր»-ը եւ խումբին բեմադրիչ եւ դերասան Փարթ Սարգիսեանի թարգմանութեամբ «Յուզար»-ը, որուն հեղինակին անունը՝ Գլոս Մանիէ, դեռ մերթերս միայն այստեարերուցաւ, որովհետեւ ոչ մէկ տեղ (յայտագիր, ծանուցում եւայլն) յիշուած է թէ այս թատերադուրիւնը ո՞վ ստեղծած է. մինչև այսօր ալ հանդիսատեսներուն մեծամասնութեան համար հանելուկ է: Անուշտ այս իրողութիւնը թատերախումբին արժէքին վրայ ոչ մէկ յուր կը մղէ:

Երեք ներկայացումներուն ընթացքին ալ արահները լեցուն բողբոթիւն կ'ընդգրկէին:

«Ոսկի Աբաղազ»-ը, որուն նիւթը ա-



Թեոփանս (Փարմեն Տէր Կարապետեան) և Նիկեփոր Յակոբ (Փորձ Սարգիսեան)

մէնուս զաջնածանօթ է, խաղարկուեցաւ իր ժամանակի հարստացատ շունչով ու Հեղինակի ոճին անդուանան:

Մեծահարուստ վաճառական Պետրոս Աղա Մատիւեան - Փորձ Սարգիսեան ամբողջովին կլանեց հանդիսատեսները իր բարձր խաղարկութեամբ, որուն մէջ դերասան եւ կերպար միաձուլուած են իրարու: Սարգիսեան բեմի շունչն ու հուզին էր կարծես: Իր խօսուն դիմախաղերը, որոնք խիստ զգայնութեամբ ու ամբողջական խորութեամբ կը մեկնաբանեն խաղարկութեան մէջ արտաքին կացութիւնը, հերոսին ներաշխարհն ու մտածելակերպը և մանաւանդ հոգեբանութիւնը, շատ-շատ պահեր ամբողջ պատմութիւն մը կամ աշխարհ մը կը պարզեն հետաքրքիր աչքերուն առջև՝ շարժելով պարզ թուող պրիւժներով, աչքերուն բազմախօսուն առկայծումներով ու նշանակալից նայուածքներով, դէմքի ընդհանուր միմիկներով, երբեմն ալ նուրբ մնջախաղով մը: Փորձ Սարգիսեան արուեստագէտը ներկայացուց կերպար մը, որուն մէջ խացուած է իր դարա-

շրջանի (որ մասով մըն ալ ամէն դարաշրջանի յատուկ է) ամենատիրական վաճառականը՝ հայ դիւղացիի անյուզ ծորելը, իր դաման, բռնակալ ու ալան հողիով, նախապաշարուած, բարացած մրտածելակերպով ու հետոյը նիսա ու կացով մարդը: Ան անառիկ, օակայն ներքնապէս խաբիւած ամբողջ մը ճարտարացող, ժանդոտած երկաթէ մույլ գարպասը յիշեցնող ներկայութիւն մըն էր իր օտան պէս, որ կը քանդուի ինքն իրեն՝ ներսէ՛ն՝ փլատակներու վերածուելով:

Ահա Փորձ Սարգիսեանի կերտած տիպարը, զոր ամբողջական հարազատութեամբ ստեղծեց այս բնապէս Հմուտ արուեստագէտը և որ իտէպլ գրական հերոսի մը շահ յուզեց հանդիսատեսը իր վարպետ խաղարկութեամբ ու բացարձակ ճշմարիտ մեկնաբանութեամբ:

Յուզիչ տեսարաններ՝ ստեղծեցին նաեւ Փալօ-Մարի Սարգիսեան երիտասարդ դերասանուհին՝ իր անմեղ, դուրացի մանուկի տիպարովը, որ շորհուրի կարողութեան մը ապացոյցն էր՝ համարձակ ու արտայայտիչ խաղարկու-

թեան մէջ («Օսգար»-ի մէջ Աննայի գե-
րով) եւ Աւետ ապէր-Արթին Պալեան՝
միամիտ դիւղացիի ստեղծած իր կերպա-
րով:

Նէլլի Մինասեան, Մարիամ Մատի-
եանի դերին մէջ, Հարադատօրէն ներկա-
յացոց դատան ամուսինի մը բռնակալու-
թենէն տառապող, սակայն համակերպող
ու սիրող հայ մօր կերպարը:

Ձևփուա Շանթ, որուն լաւ խաղար-
կութիւններուն եւ դերասանական կարո-
ղութիւններուն մասին նախապէս խոսած
էինք, երեք ներկայացումներուն մէջ ալ
իր համոզիչ խաղով վաւերական վկայա-
կանը տուաւ իր քնատուր դերասանական
չնորձին:

Երիտասարդ դերասաններ Սարգիս
Արսլանեան (Միքայէլ), Գալուստ Ճան-
սըզեան (Ստեփան), Հակոբակ Վսկի Աքա-
ղաղ»-ի մէջ իրենց բնագրօսիկ խաղար-
կութեան, միւս երկու ներկայացումնե-
րուն մէջ կրցան (յատկապէս Գ. Ճան-
սըզեան՝ կուզիկի դերով «Վայսր»-ի մէջ
եւ Միշէլ Մարթինի՝ քարտուղարի դե-
րով «Օսգար»-ի մէջ) դրուել հանդիսա-
տեսի ուշադրութիւնը եւ համակրութիւ-
նը շահիլը:

Շնորհաւորելի եւ փնտհատելի խա-
ղարկութեամբ աչքի զարկին նաեւ Պա-
շիկ Արարատեան (ներքինպետ՝ «Վայ-
սր») ժորժ Շահապեան (Միմոն Եակո-
բիչ՝ «Ոսկի Անաղաղ» եւ Օհան Փուրղէն՝
«Վայսր»): Գարմէն Տէք Կարապետեան՝
(յատկապէս Քաղուհի Թէօֆանյի դե-
րով՝ «Վայսր»-ի մէջ):

Գործին ու կուշումին գիտակցող ու
քնական կատարելութեան ձգտող պատ-
րաստակամ ուժեր են նաեւ Պայծառ Գա-
րուղաչեան, Արփի Պաշտուրեան, Վրէժ
Աւաղեան, Քալիպազեան Արէլ, Յակոբ Թա-
րիկեան, Դուիթ Պոյաճեան:

«Ոսկի Անաղաղ» եւ «Վայսր»-ի ներ-
կայացումները թուիլիս... ամբողջական ու
ստատեան կարելի էր գործնել կարգ մը եր-
կարաշունչ: տեսարաններ... ամփոփելով:

«Պայսր»
25. Անպոստեր, 1969

աւելորդ մանրամասնութիւններ կրճատե-
լով (երբեմն ոչ անպայման պահանջուած
հոնտորաշունչ երկախօսութիւններ — ու-
րոնք արդէն շատ դասական են, հետե-
ւարտը եւ դժուարընդունելի կամ դրժ-
ւարհասկնալի — նամակներու կրկնակի
թուացող ընթերցումներ, որոնք բանով
մը կը խլին ստեղծուած ջերմութիւնն ու
միապագայ կը դարձնեն տեսարանը
եւայն): Այսօրինակ պահեր «Օսգար»-ի
մէջ կարծես աւելի աննշան էին):

Իսկ թեքնիք անբաւարար պայման-
ներն ու հնարաւորութիւնները թերեւս
նոյնպէս յուսախար ըրին խումբին դե-
կավար-ընթացիչն ու դերասանները,
որչափ որ հանդիսատեսը:

Նշելի է նաեւ ներկայացումներու ողջ
ընթացքին գիմարդար Սարգիս Մար-
գիսեանի, բեմայարդար Տիգրան Շիրին-
եանի, մազայարդար Գալուստ Ճանսը-
եանի եւ հազուատներու պատասխանա-
տու Ձ. Շանթի կատարած նախանձա-
խնդիր աշխատանքը՝ ներկայացումներու
յաջողութեան նպաստելու ճիղով:

«Գասար Իփէկեան» թատերախում-
բի դասական ներկայացումները իրենց
ընթ մտախաւարողները ունեցան եւ մե-
ծապէս զնահատուեցան պոսթընահայու-
թեան կողմէ:

Թատերախումբը, բեմագրիչ-դերա-
սան ժորժ Մարգիսեանի հմուտ ու ձեռ-
ներէց ղեկավարութեան ներքեւ աչքառու
մասնագիտական բարձրութիւն մը ցու-
ցաբերեց եւ կուտ, համերաշխ ուղիով մը
իր գործին ու կուշումին գիտակից հա-
սունութեամբ տարաւ իր բեմադրութիւն-
ները:

Շնորհակալութեան խօսք կ'ուղղուի
նաեւ Հայ Օդնութեան Միութեան, որ իր
հովանաւորութեամբ եւ ջանքերով իրա-
զործեց ու նպաստեց այս չըջապտոյտին՝
ամերիկահայութեան եւ գանատահայու-
թեան համար թատերական արուեստի
հազուադիւս, անժողաց պահեր ապահո-
վելով այս հոնուոր ակներուն վրայ:

ԱԶԱՏՈՒ ՀԻ ՔԵՇԻՇԵԱՆ

ԺՈՐԺ ՇԱՀԱՊԵԱՆ
Օհան Գուրգենի դերին մէջ

«ԳԱՍՊԱՐ ԻՓԵԿԵԱՆ» ԹԱՏԵՐԱԽՈՒՄԲԸ ՄՈՆԹԵՐԱԼԻ ՄԵԶ



Ազգերու կեանքին մէջ՝ թատրոնը, Լիթն ո՛չ առաջին, առաջիններէն է, որ ի յայտ կու գայ, երբ ան արդէն գիտագիտ ստացած Հաւաքականութիւն է, իր ուրոյն լեզուով, սովորութիւններով եւ սուսնութիւններով:

Հին Յունները անոր մէջ գտան իրենց երազներու եւ ձգտումներու արտայայտութիւնը, գերբնականը խառնելով բնականին, զննելով մարդը յաւիտենական անգոծուածին առջեւ, որ է կեանքը:

Բեմին վրայ կեանքի մէկ մասնիկն է, որ պահ մը կ'ապրի: Կ'ապրի, որովհետեւ անբացատրելի կապ մը կը ստեղծուի դերասանին ու հանդիսատեսին միջեւ, կը շրանայ բեմին հեռաւորութիւնը: ամէն մէկը ինքզինք նոյնացած կը դնէ դերասանին հետ, ինչպէս ինք՝ դերասանը կ'ապրի իր մարմնաւորած անձնաւորութիւններու այլազան կեանքով: Թըրթրուան մթնոլորտ մը, որ կ'արտայայտուի ծիծաղով, արցունքով ու... ծափով: Կեանքի պատկերներ:


«Կայսր»-ը մեր դասական թատրոնն է: Եթէ հոն չենք գտներ դասական թատրոնի վայրի, ժամանակի ու զէպներու միութիւնը, Շանթ, ինչպէս գրեթէ իր բոլոր գործերուն մէջ՝ կը ստեղծէ մարդկային կիրքերու եւ արհուական ժրգտումներու հակադրութիւն մը, ուր «մարդը» սրտոգամ մը ունի ապիք:

Ո՞վ է Կայսրը: Երբեմնի Արեւելեան բանակներու ընդհանուր հրամանատար Նիկեֆոր Ծովա՞սը, զերին՝ կայսրուհի պարած գինեպանի աղջկան, զէղեյիկ Թէոֆանոյի: Օհան Գուրգէնը, որ փառքի ճամբուն վրայ կը զոհէ իր երազը, Հաննա՞ն, թէ՞ Վասիլ Լեկասէնը, որ կայսրի՞ր կը գտրէ:

«Ոսիլի Ափաղազ»-ը — Ուրի՛չ շքլան, ուրի՛շ միջավայր, ուրի՛շ բարքեր:

Ի՞նչ նկարիչ է Րաֆֆին: Ի՞նչ դունաւոր է իր վրձինը, երբ կը գծէ անգրագէտ եւ միամիտ հայ պիղապին:

Գեորգոս ազա քաղաքացին է, վաշխառուն, կեղեքիլը, անգրագէտ եւ նա-



Տեսարան մը «Օսգար»ին

խաղաչարուժներով լեցուն, որ իր բախտը կատարած է իր կիսափույ տան պատուրուն մէջ պահուրտած Ոսկի Աքաղաղին: Բաֆֆին աղատաղբական շարժման հարր պիտի չըլլար, եթէ չզնէր հոն ալայի որդին՝ Ստեփանը, որ կը ներկայանայ իրրեւ բողոքը անկրաւուած գիւղացիութեան: Աւ վերջապէս Գայն, իւղճ, տրեխները ոտքին, որրուկ գիւղացին, որ քաղաք կ'ուղէ երթալ, աշխարհ տեսնելու համար:

Աւ ի՞նչ աշխարհ. տարիներս՝ զ ծառայ՝ աղային տունը, ապա աշկերտ խանութը, յետոյ՝ պրծակատար Մոսկուայի մէջ եւ ի վերջոյ տանը փեսան ե փրկարարը՝ Ոսկի Աքաղաղը:

Որքա՞ն տիպարներ միաժխ գիւղացիներու, շարաշահոյ քաղաքացիներու, հըւ, համակերպած՝ կեննու:

Ժ. Սարգիսեան յաջողած է 11 պատկերներու մէջ ամփոփել այս այնքան սիրուն վիպակը: Դժուար է վերածուծը, մանաւանդ երբ տիրական դէմքերէն մէկը, կէսին ետք կը պահի: Յարժես րեւը կը պարպուի, թափը կը թուշայ:

Նախընտրելի պիտի ըլլար, վերջին քանի մը պատկերները թիւ մը աւելի սեղմել:

«Օսգար»-ը Փրանսական սրճատութեամբ պարզարեան թեթեւ կատակերով թիւն մըն է, որուն առանցքը, ինչպէս պրեթէ միշտ պուշտին մէջ, անհասկացողութիւնն է, ստեղծուած արտակարգ գրութիւնները:

Աւ այսպէս, արարէ արտը բարդացող գրութիւններ՝ կը ստեղծեն զբեղի անվերջանայի շարան մը:

Ահա թէ ի՞նչ խաղացանկով Մոնթրէալ կը ներկայանար Պէյրութի Համալոգայինի «Գոսպար Իփիկեան» թատերախումբը:

Եթէ, ինչպէս ըսինք, ազգերու քաղաքակրթութեան մէջ տեղ է գրուեր թատրոնը, օգնելով անոր զարգացման, ուրեմն որքա՞ն մեծ է դերը Եսթրոպոնուրու այս քրացատիկ խումբին, որ 1941էն ի վեր չէ դադարած ծառայելէ հայ բեմին:

Պիտի ուղէի գտնել բառ մը, որ աւելի բնորոշէր այս խումբը, — չի՛ն է բացատրիկ կոչել, երբ գիտնեք, թէ պե-



Տեսարան մը հանգիստականներէն

առեթիւններ, սակն երկրի մէջ, ստիպւած են զոյգիլ թատրոններու բացը, — այդ ահաւոր Գանայեան կտորաբը:

Ապտ աւրմն, որքա՛ն աւելի զնաւատելի է այն մեծ աշխատանքը, զոր կը տանի «Գոսպար Իփէկեան» թատերախումբը:

Միայն անունն սկըը՝ զեպի բեմը, հոյ թատրոնն ու արուեստը, կրնայ արժեւորել խուճրին անասնման զանգութիւնը:

Ժորժ Ասրգիսեան անվարան վերջուց Գոսպար Իփէկեանի վառած փոքրիկ ջահը, զոր ո՛ր միայն վառ պահեց 28 տարիներ, այլեւ ամէն օր ջիւ մը աւելի հրահրեց, կրակ տուաւ եւ բոց՝ յուսաւորելու համար Նոր Աշխարհի հեռաւոր ասիերուն ջրուած հայութիւնը:

Ասրգիսեան զերասան է, զերուսոյց եւ կազմակերպիչ: Իրիւզ զերասան՝ ան, երեք կտորներու մէջ ալ, կը ներկայանար բոլորովին սարքիք տիպարներով:

«Ոսկի Աճաղազ»-ին մէջ Պետրոս աղան է, կեղեքիչ վաշխառուն: Նաշուածքը, զարուածքը, մատներուն բռնուածքը

...կարծես ճամկթոնիքը պահելու համար, ձայնին ելեւէջն ու առողանութիւնը, բոլորը՝ խորապէս սասուճասիրւած են, ստեղծելու համար տիպար մը, որ անմոռանալի պիտի մնայ:

Պետրոս աղան, ըսա խո, Սարգիսեանի յաւազոյն ստեղծագործութիւնն է, զլուխ-գործոց մը՝ իր ամբողջութեան մէջ, հաւասար՝ օտար մեծ զերասաններու:

Ուրի՛շ է Նիկէֆոր Տոկասի տիպարը «Կայնք»-ի մէջ: Յաղթական զօրավար, Տոկաս այլեւ պայտասկան դասերու խաղալիքն է, կորսնցուցած բարոյական իր զօրութիւնը, լքուած՝ իր ընկերներէն, իր կնոջմէ, պայտասկաններէն: Դժուար է հետեւիլ Եանթին՝ իր տիպարներուն մէջ, անոնց բարդ ներաշխարհին, սեին, որ ինքնուրոյն է, երբ տակաւին միայն զըրականութիւն է:

Աւելի՛ հա զժուար է՝ բեմին վրայ, ուր այդ խորապէս ներքին կեանքը պէտք է դրսևարել:

Ասրգիսեան յաջողեցաւ առջ տիպարը, մնալով միշտ զուսպ, ու իր բեկումի

ՎԱՐԱՆԴ ՓԱՓԱԶԵԱՆ

Այս տարի նազելեամ գրական մըր-
ցանակը շնորհուեցաւ Սամուէլ Պէճեքի
ու աշխարհի բոլոր կողմերէն ու քեր-
քերէն խանգաղաւորեամբ ոգիւնուե-
ցաւ այս որոշումը:

Սամուէլ Պէճեք, իր քստեքական
երկերով մանաւանդ, արտակարգ ոճով
մը կ'աժմատարէ մերկայ դարու տագ-
նապահար մարդուն սիպարը եւ կը վա-
յելէ համաշխարհային յարգամբ մը:

Սուրբե կաւ տամք մեր երիտասարդ
աշխատակիցին գեղեցիկ վերնուծումը,
որ պայծառ լոյս մը կը մնաւ Պէճեքի
բարդ մերաշխարհին ու գրականութեան
վրայ:



Ս. Պ Է Ք Է Թ Ի

ԱՄՔՈՂՋԱԿԱՆ ԹԱՏՐՈՆԸ

Քատրոնը Եղած է Հաղորդակցութեան միջոց: Փիլիսոփայութիւնը,
բարոյագիտութիւնը, ընկերարանութիւնը եւ հրապարակագրութիւնը բեմին
վրայ մարմնաւորած են իրենց պաղափարները եւ փոխանցած բազմութիւն-
ներուն: Քատրոնը զործիք եղած է ընդհանրապէս: Հազուադիւրս են այն
Քատրոնները, որոնք յաջողած են անցնել անդին առօրեայ մտահոգու-
թիւններէն, ձերբազատուիլ մտքի եւ լեզուի կապանքներէն եւ բռնել Երակը
Քատրոնական հարադատ արուեստին: Քատրոնը ենթակայ է բազմութիւննե-
րու, հոգեկան աշխարհին, նիւթի, տեղի եւ գերասանի պայմաններուն: Մեծ
Քատրոններ է ան, որ կը գոհացնէ թէ՛ ամբոխի վայելքի պահանջը, թէ՛
անհասարկ արուեստի եւ ճշմարտութեան փնտռուէքը: Այսօր կ'ըմբռնենք
Սոփոկլէսը անխաթար հաճոյքով թէ՛ իբր արժողակից ակնապիշ բազմու-
թեան, թէ՛ իբր վերացած եւ ինքնամոռի անհաս:

Սոփոկլէս, Շէյքսպիր, Չեխով կը պատկանին անցեալին: Անոնք զա-
ւակներն են հաւասարակշռուած քաղաքակրթութեան, ուր ակնյայտ էին
շափանդիչները, աղաւոյժ էին ճամբաները եւ Երբ կարելի էր անվախօրէն զբը-

ընթացում մարդու միտքն ու հոգին՝ հասնելու համար ճշմարիտին։ Այս հեղինակներուն համար լեզուն սրբազան միջոց էր հաղորդակցութեան, Աստուած կամ անոր նմանակը բաղձած էր իր գահին վրայ, մարդը կարելի էր ըմբռնել, կարելի էր տակաւին բարձրանալ մարդկային արժէքներու սանդղիսմատերէն եւ հասնել հանդրուաններու։

Արուեստը անժամանցելի է անշուշտ։ Բայց մարդը իր ըմբռնումներով եւ մտածելակերպով, եւ կեանքը իր մթնոլորտով, ենթակայ են յարասեւ յիզարջման։ Յեղաշրջումը կը տանէր զէպի վարդազոյն Հորիզոններ, այսօր ան կը տանէր զէպի մառախլապատ անել։

Չմտադրուող յեղաշրջեց արուեստի բոլոր չափանիւները եւ համընթաց փրկութեամբեան, բարոյագիտութեան եւ ընկերարանութեան շուարումին ստեղծեց կարելիութիւններով եւ անհեթեթով յզփայցած մթնոլորտ մը, ուր արուեստագէտը կորսնցուց բոլոր կոռուանները։ Ասանարանի գլխաւոր զուրկուալ իրերու, կեանքի եւ դոյութեան իմաստաւորումը։ Քանդակեցան բոլոր տաճարները։ Քէօցլէրի բարեկեցիկները փրթած եւ զանթիւն սուրացող վարչապետներն անինայ մուշգրին զոհ զացին կեանքի եւ դոյութեան իմաստը, սէրը եւ հաւատքը, անհատը իրր ինքնուրոյն արժէք, արուեստը իրր ձեւ, եւ լեզուն իրր հաղորդակցութեան միջոց։ Մերօրեայ իմացականութիւնները եւ հոգիները վկայեցին անզարձ լքումը քաղցր եւ թոնիրի նման ջերմ Սօրք դարուն, եւ սահմանած ու դողդոջուն նայեցան դոյութեան քառսին։ Ժառանգեցինք վիպասալատութիւնը, կը կտակենք անձկութիւն, երկնատրանք եւ թափուր ճամբաներ, ուր կը սլքտանք թափառաշրջիկի անհեթեթ զիկզակներով։ Կր միթարուինք միայն, երբ կը մտածենք, որ կը բարձրանայ մարդկային արժէքը, զոնէ՛ մեր աչքին, անոր որ կը քայլ զէպի անդունդ զիտակցօրէն։ Ան կը դառնայ ստեղծադործ արուեստագէտ, երբ կը տանի մեզ ալ ճշմարիտին, հակառակ որ ամայութիւնն է իր միջոցը եւ անձկութիւնը՝ իր միթուրտը։ Միակ կոռուանը, մեր զիտակցութեան, արուեստն է իրր տիեզերական եւ անխորտակելի արժէք։ Արուեստը զվարչապետք-ի Երկաթուղին է։ Բայց ինչպէ՞ս ստեղծել արուեստը, երբ կը փշրուին ստեղծադործութեան բոլոր միջոցները, երբ այլեւս անհեթեթ են մարդկային տիպարները, էնթրիկները, անհաղորդ լեզուն, ընութեան տափակ տեսարանը, յոգնած մեղեդիները եւ շուարած մտածումը։

Արդի նկարչութիւնը, երաժշտութիւնը եւ արձանագործութիւնը տըւած են իրենց պատասխանը, մերկացնելով արուեստը ձեւի եւ խորքի պարզայական երևոյթներէն եւ զիմելով զգայարաններուն, իրր անխարզալի թարման արուեստի ճշմարիտին։ Արդի վեպը փորձած է կապել զանոնք, բայց ստապած՝ վիպական մթնոլորտը ըմպող զգայարանքի պակասէն։ Արուեստի այս մարդերը, սակայն, ունին սահմանափակ տիրաւորութիւնները, որովհետեւ կը զիմեն մէկ զգայարանքի եւ կ'անտեսեն մտածումը։ Թատրոնը միակ արուեստն է, որ կը ստեղծէ բաղձաթիւ զգայարանքներու խօսող, կեանքով եւ մտածումով ամբողջացած համայնապատկերը ճշմարիտին։ Թէեւ, հաղուադիւտ են այն թատերագիրները, որոնք յաջողած են թատրոնը վերածել ամբողջական արուեստի։

Ստամբուլի Պէթիթ Թեթեւս միակն է, որ ունի բոլոր տուեալները։ «Սպասելով Կոստո» եւ «Եսաղի վերջը» թատերակները Պէթիթը վերածած են արուեստի հսկայի մը, որուն գործերուն ուսումնասիրութիւնը եւ վերլուծումը անդի տուած են հարիւրաւոր զիրքերու, յօղուածներու եւ վէճերու։ Այս գործերը թարգմանուած են բաղձաթիւ լեզուներու, ներկայաց-

ւած են Հարիւրաւոր բեմերու վրայ՝ հազարաւոր անդամներ եւ ստեղծած թատերական արուեստի հանդէպ նոր հաւատք եւ բմբռնողութիւն:

Դասական որեւէ մասեցում չի յարգուիր Պէքէթի կողմէ. ձեւը եւ խորքի մասեցումը իւրապատուկ են իրեն եւ կարելի չէ զանոնք կապել: Այս արդէն լուաղսյն չափանիշն է իր արուեստին: Ձեւը եւ խորքը կը նոյնանան Պէքէթի մօտ, համադրելու համար ճշմարիտի համայնապատկերը: «Ալա-սելուլ Կոսով» եւ «Կալի վերջը» մէկական նկար են, ուր ամէնէն փոքր մանրամասնութեան մէջ զծուած է մարդկային գոյամիճակը, անոնք համոնը-ւայ են, որսվհետեւ հեղինակի բանաստեղծութեան ընդմէջէն կ'ունինդրենք մինակ հողիներու եւ տառապող միտքերու երգը, անոնք արձանային լուս-թիւն են իբր բեմական անշարժութիւն, անոնք մարդկային կեանքի շեմա-ցընող կրկէս են, ուր միմսի խեղկատակութիւնը ու անհեթեթ ծիծաղը ա-ւելի եւս կը շեշտեն առանձին հողիներու անյոյս ողբերգութիւնը:

Պէքէթի թատերակներուն կառուցուածքը կ'արձագանդէ իր մտա-դաստիկը, մտածումը եւ ճշմարտոր: Արարներու թիւը, անձերու թիւը, նկարագրիները եւ փոխ-յարարութիւնները, վիճակներու եւ բաւերու կըրկ-նութիւնը եւ հողեկան վերիվայրումները անքակտելիորէն մաս կը կաղմեն ամբողջական արտայայտութեան: Պէքէթի թատրոնը կը նմանի բազմակող-մանի պրիմակի՝ ա՛յնքան ալլաղան, հարուստ եւ նրբրանգ, որ անոնց ըմ-բուշխումը կը դառնայ զգլխիչ վայելք:

Պէքէթի տիպարները կը ներկայանան իբր գոյգ կառուցուածքներ: «Ալալսելուլ Կոսով» երկին Վլատիմիրը (Տիտի) եւ Էսթրակոնը (Կոլո), Փօզո եւ Լաքին իրար կը լրացնեն, կը հակասեն եւ իրարու կ'արձագանդեն: Վլատի-միր գործնական է, Էսթրակոն՝ անճարակ, Վլատիմիր մտածող է, Էսթրա-կոն՝ երազիտ, Վլատիմիր լաւ յիշողութիւն ունի, Էսթրակոն՝ անմիջակա կը մոռնայ, Փօզո անպատկառ է, Լաքի՝ հեղ, Փօզո հարուստ է, Լաքի՝ գրկուած, երկրորդ արարին՝ Փօզո կոյր է, Լաքի՝ համր: Տիպարներու այս հակադրութիւնը կը ստեղծէ բեւեռներ, որոնք կը վանեն զիրար եւ կը ձգ-տին իրարու միաժամանակ: Բեմը կը լեցուի զգացական զեղումներու եւ ատելութեան, մտաւորական համաձայնութեան եւ ժխտումներու անհամար կարելիութիւններով: Տիպարներու խօսակցութիւնը կը հետեւի իրենց եր-կուութեան, բառերը եւ նախադասութիւնները կը դառնան ցցուն եւ ծայրա-յեղօրէն արտայայտիչ, անոնք կարծես իրար կը կտրատեն, կ'ամբողջացնեն, կը ժխտեն, իրարու կ'արձագանդեն միաժամանակ: Վլատիմիր եւ Էսթրակոն կ'ապրին լեզուն, կը նոյնանան անոր հետ ու տիեզերքը կը լեցնեն իրենց բառերով, մինչ կը սպասեն Կօտոյին:

Կօտոյի ինքնութիւնը դարձած է վէճի նիւթ եւ մարդիկ փորձած են գոյն անպայման տեղաւորել մեր սահմանափակ աշխարհէն ներս իբր Աստ-ւած, իբր հայր, իբր ընկեր եւ իբր տեսլական: Այս բոլորն ալ, սակայն, կը մնան մասնակի արտայայտութիւն: Կօտօն այդ բոլորն է եւ այդ բոլորը չէ, Կօտօն լինելիութիւնը եւ այս պահուն յալորդող պահն է, Կօտօն ժամա-նակի անցումն է եւ սպալայ ժամանակի սպասումը արդարացնող խարկան-քը: Վլատիմիր եւ Էսթրակոն կը սպասեն, բայց վստահ չեն, թէ ինչո՞ւ կը սպասեն, անոնք նոյնիսկ վստահ չեն իրենց ժամագրութեան:

- ԻՍԹՐԱԿՕՆ.— Վստա՞հ ես որ այս գիշերուայ համար էր:
- ՎԼԱՏԻՄԻՐ.— Ի՞նչը:
- Է.— Որ պէտք էր սպասել:
- Վ.— Ըստ Երարք, (քիչ հաք) կը բռի:

Է.- Գործէն ետք :

Վ.- Պէտք է որ ներառուած ըլլամ (կը փնտռէ զանազան բարձրորով եւ թուղթերով յորդող սրբաններուն մէջ) :

Է.- Բայց ո՞ր Շարաքը եւ արդեօք Շարաք ենք : Աւելի հաւանական չէ՞, որ ըլլանք Կիրակի կամ Երկուշաբթի կամ Ուրբաթ :

Վ.- (Մարտափահար նայելով շուրջը, կարծես թուականը գրուած ըլլայ բնութեան մէջ) Ձի կրնար ըլլալ :

Է.- Կամ Հինգշաբթի :

Վ.- Ի՞նչ ընենք :

Է.- Եթէ երէկ եկաւ պարագայ տեղը, կը կարծեմ, որ այսօր պիտի չգայ :

Վ.- Բայց կ'ըսես, որ երէկ գիշեր եկանք մենք :

Է.- Կրնամ սխալիլ :

Այս անձնութիւն եւ անորոշ սպասուածը կը ստեղծէ լարում եւ հակամարտութիւն երկուքին միջեւ, կը դժուարին, կը հեռանան, վերստին միանալու համար, կ'անգրադանան, որ միմեկ են եւ իրարմով պիտի լեցնեն պարագութիւնը, կը նստին ու կը սպասեն կրբեմն լուս, բայց յաճախ անասնձևիօրէն շատախօս : Հետեւեալ տողերը կը ցոյցանեն Պէքէթի բանաստեղծական շունչը եւ երկու թափասուարձիկներու խօսելու մարմաղին պատճառը :

Վ.- ձիշո՞ք է, անցամբելի ենք :

Է.- Որ չմտածենք :

Վ.- Ունինք մեր արդարացումները :

Է.- Որ չլսենք :

Վ.- Ունինք մեր պատճառները :

Է.- Բոլոր մեռած ձայները :

Վ.- Թեւեալ ձայն մը :

Է.- Տերեւներու :

Վ.- Աւազի :

Է.- Տերեւներու :

Լուսթիւն :

Վ.- Կը խօսին բոլորը միասին :

Է.- Ամէն մէկը ինքն իրեն :

Վ.- Կարծես կը մրմառն :

Է.- Կը մրմնջեն :

Վ.- Կը շիրտառն :

Է.- Կը մրմնջեն :

Լուսթիւն

Վ.- Ի՞նչ կ'ըսեն :

Է.- Կը պատմեն իրենց կեանքը :

Վ.- Ձի բաւեր որ ապրեցան :

Է.- Պէտք է որ խօսին :

Վ.- Ձի բաւեր որ մեռան :

Է.- Ո՛չ, չի բաւեր :

Վ.- Կարծես փետուրներու ձայն է :

Է.- Տերեւներու :

Վ.- Մոխիի :

Է.- Տերեւներու :

(Երկար լուսթիւն)

Այս ձայները, որ կը խօսին հակառակ մեր կամքին, կը մխրճուին մեր հոգիին ներս, կը խլրտան, կը հարցնեն, կը կասկածին ու կը քննեն հոս-թեան եւ ետի խորհուրդը համապարփակ անձկութեամբ եւ անհուն տառապանքով: Լուսնի մէջ իսկ անոնք լսելի են: Փրկութեան ճամբան կուր-ցրնող եւ խուլցնող զրադումն է, առօրեայի խաբկանքը, այսինքն՝ քաղա-քակրթութիւնը: Այս վերջինի ներկայացուցիչներն են Փողոս եւ Լաբի: Փող-ոս ախրող եւ նիւթապաշտ, Լաբի՝ խեղճացած եւ սնանկացած մտածող, ա-նոնք անքակտելիօրէն շղթայուած են իրարու ու կը զարն ճամբաներէն՝ կեանքը վերածած սովորութեան եւ ծէսի:

Վլադիմիր եւ Էսթրաէն խաղալիք դասը երեխաներու նման կը հրճուին տնոնց ներկայութեամբ եւ պահ մը կը մոռնան Կոտոյի սպասումը: Այս քաղցր վայրկեանները կը լեցնեն կատակով, բարկութեամբ, հետաքրք-րութեամբ եւ բարեհարսութեամբ: Իրենց համար Փողոս եւ Լաբի կը ներ-կայացնեն համայն մարդկութիւնը, որ կ'ապրի կուրօրէն, անտեսելով Կո-տոն: Վլադիմիր եւ Էսթրաէն կը մխրճուին քիչ մը, քանի իրենք զօնէ դիտակից են, որ կը սպասեն:

Վ.Տ Մենք մերկայ ենք ժամադրութեան, սուրբեր չենք, բայց մերկայ ենք, քանի՞ հոգի մայր կ'ունայ ըսել:

Ժամադրութիւնը կեանքի եւ մահուան հետ է, սակայն ո՛չ սկիզբը, ոչ ալ վերջը կ'իյնան մեր գիտակցութեան սահմաններէն ներս, կ'ապրինք մի-ջանկեալ, անտրջ եւ անիմաստ սպասումը՝

ՓՕՁԶՕ.— (Կտաղած) Հոգիս քունուարեցիք՝ մեր ժամանակի հարցե-րով, այս արդէն անիմաստ է: Ե՞րբ, ե՞րբ: Օր մը, գոհ չէ՞ք, որ մը ուրիշ օրերու նման լաքի դարձաւ համբ, որ մը եւ կուրցայ, որ մը պիտի խլա-նանք, որ մը մնանք, որ մը պիտի մեռնինք, մայն օրը, մայն պահուն, գոհ չէ՞ք: (Հանդարտ) Կը ծնին կոկոզած գերեզմանին վրայ, օրը կը փայլի պահ մը, այսպէս գիշեր է դարձեալ:

Ժամանակի անցումը եւ հետեւարար սպասումը գոյութիւն չունին մարդկութեան մեծ մասին համար: Վլադիմիր եւ Էսթրաէն խաղալիքն են գիտակից մարդոց, որոնք երբեմն կը մօտենան կարծէք ամբողջական գի-տակցութեան, պահ մը կը սաւառնին ճշմարտութեան մերձակայքը, թա-ւալելու համար կրկին խաւարին գիրկը՝

Վ.— Արդեօք քնացա՞յ, երբ միւսները կը տառապէին. արդեօք կը բը-նանում հիմա. վաղը երբ ինքզինքս արթնցած կարծեմ՝ ի՞նչ պիտի ըսեմ այ-սօրուայ մասին, որ ընկերոջս՝ Էսթրաէնի հետ, հոս, մինչեւ գիշեր սպա-սեցի Կոտոն, որ Փողոսն անցաւ իր բեռակրին հետ եւ հետեւին յօսեցաւ, անպայման: Բայց այս բոլորին մէջ ի՞նչ կայ ճշմարտ: (Վլադիմիր կը գի-տէ Էսթրաէնը, որ կը քնանայ): Ան բան մըն ալ պիտի չգիտնայ: Պիտի յօ-սի իր ստացած հարուածներուն մասին եւ եւ իրեն տանալի մը պիտի տամ (պահ մը) կոկոզած գերեզմանին վրայ եւ շքուար ծնունդ մը: Փոսին յոյր-բէն երազկոտ, գերեզմանափորը կ'անցնէ շքանքեր: Ուրիշ ժամանակ ծե-րանալու, մքնալարտը լի է մեր ձիշերով, (Մտիկ կ'ընէ) բայց սովորաբար շատ ազդու հանդարտեցնող է (կը դիտէ Էսթրաէնը), ինձի ալ ուրիշ մը կը նայի, ըսելով, կը բնանայ, չի գիտեր, քոզ բնանայ (պահ մը) ալ չեմ կոր-նար շարունակել: (Պահ մը) ի՞նչ ըսի:

Անձկան սպասումը միակ նիւթն է այս թատերակին, սպասում մը, սակայն, որ անհեթեթ է: Սպասելով Կոտոն թատերակի երկու արարներու վերջաւորութեան ալ ներս կը մտնէ նոյն տղեկը, յայտնելու համար, որ Կո-

սօն այլ օր պիտի շղայ, բայց մտահարար յաջորդ օրը: Տղևկր չի ճտնել- նար վլատիմիրը եւ Էսթրակօնը եւ յստակ է, որ վաղն ալ պիտի շնանշնայ: Տղևկր կը յայտնէ նաեւ, որ ինք Կօտոյի այծկրը կը պահէ եւ որ Կօտօն իր հետ լաւ կը վարուի: ունի եզրայր մը, որ Կօտոյի ոչխարները կը պահէ եւ զոր Կօտօն միշտ կը ծնծէ: Երբ իրեն կը հարցնեն, թէ դժբա՛խտ է, կը պա- տասխանէ, թէ չի դիտեր: Հաստարակչութիւն մը կայ կենանքի մէջ, որ չունի բացատրութիւն:

Վ.— Աշխարհի արցունքները կայուն են: Ամէն մար լացողի դէմ, տեղ մը, ուրիշ մը կը դադրի լալէ:

Այս անտարբեր հասարակչութիւնը անիմաստ կը դարձնէ նաեւ քրիստոնէական փրկութիւնը: Պատահական եւ անպարտաւեր է կրօնքի ճամ- բան:

Վ.— Փրկիչը: Երկու աւագակներ: Կ'ըսեն, որ մէկը փրկուեցաւ, իսկ միւսը... (կը փնտռէ փրկուածին հակառակը) ...անիծուեցաւ:

Է.— Փրկուած ինչէ՞ն:

Վ.— Գժօխէն:

Է.— Ես կ'երթամ (կը մնայ անշարժ):

Վ.— Թէ՛ն... (պահ մը) ինչպէ՞ս կ'ըլլայ որ... քեզ չեմ ձանձրացնիր, չէ՞:

Է.— Մտիկ չեմ ըներ:

Վ.— Ինչպէ՞ս կ'ըլլայ որ չորս անտարանիչներէն մէկը միայն դէպ- քերը այսպէս կը ներկայացնէ: Չորսն ալ հոն էին, վերջապէս ոչ հեռու: Եւ միայն մէկը կը խօսի փրկուած սրիկայի մը մասին: (Պահ մը): Կօկօ՛, պէտք է որ երբեմն պատասխանես ինծի:

Է.— Մտիկ կ'ընեմ:

Վ.— Չորսն ալ հոն էին. եւ միայն մէկը կը խօսի փրկուած սրիկայի մը մասին. ինչո՞ւ անոր հատատալ եւ ոչ միւսներուն:

Է.— Ո՞վ կը հատատայ:

Վ.— Բայց ամէ՛նքը: Միայն այս մօտեցումը ճանչցուած է:

Է.— Մաքրիկ տխմարներ են:

Վ.— Այլեւս բացարձակապէս բաժուր են համբաները եւ անհատա- լի բալոր վարդապետութիւնները:

Է.— Ոչինչ կը պատահի, ոչ ոք կու գայ, ոչ ոք կ'երթայ, սարսա- փիլի է:

Այս ահաւոր վիճակը կը դառնայ աւելի իրաւ եւ ցայտուն, երբ Պէ- ճէթ կենանքի նուաստացուցիչ եւ կենդանական երեւոյթները կը շողկապէ անհեթեթին: Էսթրակօնի կօշիկները միշտ ոտքերը կը ցաւցնեն, վլատիմիր դժուար կը միզէ: Էսթրակօն միշտ դիւերները կը կորսուի եւ ծեծ կ'ուտէ, երկուքն ալ կէս անօթի են եւ Էսթրակօն հակառակ վլատիմիրի վերաւոր- ւած արժանապատուութեան՝ աչք կը անկէ Փօզդոյի կերած հաւի ոսկոր- ներուն:

Կենանքը կրկն է, իսկ վլատիմիր եւ Էսթրակօն միմօսներ, գլխարկ- ներու իտղ, սաքի հարուած, կատակ, կապիտմ եւ յետոյքին վրայ անկում՝ կը լեցնեն բեմը եւ կենանքը, կը խնդացնեն մեզ, անմիջապէս զղալ տալու համար խորքի անհեթեթը:

Վ.— Ընդունել՝ որ դուն ալ պէտք է գոհ ըլլաս:

Է.— Գոհ ինչէ՞ն:

Վ.— Զիս գտնելուդ:

- Է.- Կը կարծե՞ս:
- Վ.- Ընդունէ, եթէ նայնիսկ ճիշդ չէ:
- Է.- Ի՞նչ պէտք է ըսեմ:
- Վ.- Ըսէ՛, ես գոհ եմ:
- Է.- Ծս գոհ եմ:
- Վ.- Ծս ալ:
- Է.- Ծս ալ:
- Վ.- Մենք գոհ ենք:
- Է.- Մենք գոհ ենք: (Լուսթիւն) Հիմա որ գոհ ենք, ի՞նչ կ'ընենք:
- Վ.- Կը սպասենք Կոստի:
- Է.- Իրաւ է:

*Միծաղը, բարկութիւնը, սէրը եւ ասելութիւնը շարունակ միմեան, դե-
րասաններ ենք բռնուք, որ կեանք եւ ասորիլ ձեր խաղանք» ու ժամանակ կը
սպաննենք:*

- Վ. (Լ.Ս.Տ.Ի.Մ.Ի.Ր. ԵՒ Է.Ս.Թ.Ր.Ա.Կ.Ծ.Ն.- (Միասին) Արդեօ՞ք...)
- Վ.- Ներգուրբիւն:
- Է.- Մտիկ կ'ընեմ:
- Վ.- Ո՞չ, խնդրեմ:
- Է.- Բայց, այո՛:
- Վ.- Խօսող կտրեցի:
- Է.- Ընդհակառակն:
- (Իրարու կը նային բարկացած):
- Վ.- Եթէ կարելի է, պաշտօնակախարհան պէտք չկայ:
- Է.- Օ՛ն, յամառ մի ըլլար:
- Վ.- (Ուժդին) Լրացուր նախադասութիւնդ կ'ըսեմ քեզի:
- Է.- (Նոյնպէս) Քո՛ւկդ լրացուր:
- (Լուսթիւն, գէպի իրար կը քալեն, կը կենան):
- Վ.- Թշուառական:
- Է.- Այո՛, կառնիք (Իրարու կը հայհոյեն): (Լուսթիւն) Հիմա հաշ-
տարիք:

- Վ.- Կոկո՛:
- Է.- Տիտի՛:
- Վ.- Տուք ձեռքդ:
- Է.- Ահաւասիկ:
- Վ.- Եկուր քեւերուս մէջ:
- Է.- Թեւերո՞ւդ:
- Վ.- (Բանալով թեւերը) Հո՛ս:
- Է.- Երբանք:

(Կը դրկուին: Լուսթիւն):
Վ.- Որքան արագ կ'անցնի ժամանակը, երբ կը գուարնանանք:
*Սակայն անբերրի եւ ճահճացած սպասումը կը զառնայ ամենակուլ ի-
րակտութիւն, կը վերագառնանք միշտ մեկնակէտին ու կը կրկնենք.*

- Է.- Ուրեմն երբա՞նք:
- Վ.- Երբանք:
- (Կը մեան անշարժ):
- Եւ կամ՝
- Է.- Երբանք:
- Վ.- Չենք կրնար:

է. — Ինչո՞ւ :

Վ. — Կը սպասեմք Կոտոն :

«Սպասելով Կոտոն» կ'արտայայտէ մարդու՝ արտաքին աշխարհի, ուրիշ մարդոց եւ կեանքի հետ ունեցած յարաբերութիւններուն անհեթեթիւ «հաղի վերջը» կ'արտայայտէ նոյն անհեթեթին նայող մարդու ներաշխարհը : «Սպասելով Կոտոն» գոյութեան բովին մէջ թրծուած ամբողջական եւ մարդկային համայնապատկեր մըն է : «հաղի վերջը» անցած է նոյն բովէն, բայց կարծէք կռնծած է քիչ մը եւ կորսնցուցած իր ջերմութիւնը, պահուով հանդերձ իր ճշմարիտ նկարագիրը :

Համ եւ Քլով, Նակ եւ Նէլ իրար լրացնող տիպարներ են դարձեալ : Համ հարուստ տէրն է, Քլով՝ ծառան, Համ ետամու է, Քլով՝ Համի հանդէպ տակույթեամբ լեցուն : Զորութիւն կ'ապրին մէկ սենեակի մէջ : Նակ եւ Նէլ, Համի ծնողքը, անդամահատուած են ժամանակին եւ կ'ապրին ողբամաններու մէջ, կ'երեւին իրենց գլուխները միայն, կըր շատ խօսին, Քլով կը զոցէ աղբամաններու կափարիչները : Համ կոյր է եւ անդամալոյծ : Քլով կը ծառայէ բոլորին ու կը դիտէ պատուահանէն : Կ'երեւի ամայութիւն միայն, անորոշ արհաւիրք մը քանդած եւ այրած է տիեզերքը, կը մնայ կանդուն Համի սենեակը միայն եւ իր ուտելիքի պահեստը : Այս անկիւնն ալ, սակայն, ենթակայ է կործանման, որովհետեւ Քլով կ'ուզէ լքել իր տէրը եւ մեկնիլ, գիտնալով որ կ'ըլլայ անծնասպան : Քլով պիտի կարենա՞յ ձգել Համը եւ առթել բոլորին անկացումը, թէ ոչ : Այս է թատերակի միակ արարի առանցքը : Արարի վերջը, Քլով վերաբերուն ձեռքը դրան քով կեցած է, բայց վարագոյրը կ'իջնէ մեկնումէն առաջ :

«հաղի վերջը» կեանքի եւ գոյութեան անհեթեթին խրոչած, ինքնամփոփ եւ ինքնաքննիչ եսի ամուլ եւ մահացու ապրումներու նկարն է :

Համի ետը, որ կը պարփուի Քլով, Նակ եւ Նէլ արտաքին աշխարհէն կարուած ինքնի մը պէս կը տալուի իր իսկ ստեղծած զժոյրքին մէջ : Ուրիշ հետ հաղորդակցութեան սլակասը եւ անհեթեթին առթած անհուն ունայնութիւնը տարած են Համը զէպի ալլամերթ, ետակողրուն եւ մահամերձ լծացման, ան չի տեսներ որեւէ կանաչ ծիւլ, կեանքի նշոյլ՝ զինք չըջապատող ամայութեան մէջ՝

ՀԱՄ. — Ճամջցայ խեմք մը, որ կը կարծէր թէ հասած է աշխարհի վերջը : Նկարիչ էր... Կ'երթայի խեմքանոց զինք տեսնելու . ձեռքէն կը բռնէի ու կը տանէի պատուեամբիմ առջեւ : Դիտէ՛, կ'ըսէի, հո՞ն ցործներ, օր կը բուսնի, եւ հո՞ն, դիտէ՛, ձկնորսներու առագաստները, այս գեղեցկութիւնը : Կը բաշէր ձեռքը ձեռքէս եւ սարսափահար կը վերադառնար իր անկիւնը : Ան տեսած էր միայն մոխիր, միայն իրեն էր խնայուած, միայն իմէն էր մտաջուած : Կ'երեւի, թէ այսպիսի պարագան այդպիսի ալ հազուադէպ չէ... չէր :


«հաղի վերջը» գոյութեան կողմէ՛ շարչրկուած մտքի վերջին պատանէն է, ուր ետը եւ հողին կ'ապրին իրենք իրենց հետ, անանց ճառադայթումի, առանց կարելիութեան : Թերեւս այս է պատճառը, որ այս թատերակը թէեւ նոյնքան է յաճախ աւելի ուժեղ, քան «Սպասելով Կոտոն», չի տար վերջինին վայելքը : «հաղի վերջը» ինքնաբաւ մտեցումն է ճշմարիտին, մինչ «Սպասելով Կոտոն» կ'ընդգրկէ համայն մարդկութիւնը եւ՝ բոլոր ճշմարտութիւնները : Հետագայ իր թատերակներուն մէջ՝ Պէթէթ հետզհետէ կը հեռանայ Վլաստիլիի եւ Եսթրաիտի բաղմերանդ կրկնէն, կը դառնայ հետադարձ աւելի յուստես, աւելի ինքնամփոփ, մինչեւ որ կը դարձի կրկնէ :

Սակայն, ան ըսած է ամէն ինչ և ըսած հանճարով՝ «Ապաստելով Կոստոն»
Քատերակին մէջ:

Ստուէլ Պէքէթի թատրոնը կը կլանէ հանգիստեսը, որովհետեւ սո-
վորական երևույթները վերածած միջոցի՝ արուեստագէտը կը կամբէ մեր
ժամանակներու արժէքադրկումը և մեզ կը դնէ անմիջական հազորդակցու-
թեան մէջ կեանքի և գոյութեան անտաճանցելի և ճշմարիտ գիճակներուն՝
հետ:

Սոն Քուենթինի բանասրկեալները մեծ յուզումով դիտած են «Ապա-
ստելով Կոստոն»: Երբ իջած է վարագոյրը, անոնք լուս և դիտելոր մեկնած
են սրահէն: Բոլորս ալ բանասրկեալներն ենք մեր իրականութեան, երբեմն
կը թօթափենք սովորութեան և ծէսի փրկարար թմրութիւնը, կը դիտենք
Վլաաիմիր և Խաթրուհի, որ կը սպասեն ամայի ճամբաներուն վրայ, հարց
կու տանք մենք մեզի ու անձկութեամբ կը յուսահատ կը թուենք մեր կարե-
լիութիւնները, պահ մը կը սուսանինք բարձրերէն, կը նոյնանանք թափա-
ռալիքի հնչիւններն և ան ու կը նայինք մեր վրայ՝ մեր աչքերով: Բայց
այլեւս չենք կրնար շարունակել: Ի՞նչ կ'ըսէինք:

Վ. Փ.





«ՍԱՐԵՐՈՒ ԱՍԼԱՆԸ»

ՇԵՂԵԱԿ՝ ԿԱՐՈ ՍԱՍՈՒՆԻ

Պատումամբ մեզք անցաւ Կարօ Սասունիի Վարերու Առանձնը վէպը: Կարգացի մին Շատաբըրբեանք, այսպէս ըսած համոզ-հատով: Պատումամբ ըսի անոր համար, որ մասնաւորապէս մէկ համար, լաւ բաները վերջին քսած եւ հինգ տարիներու ընթացքին միշտ ուլ պատահական են եղած ու մենք՝ մեր այս հանոյթն ու վայելքը, քաբի մարդկանց բարի արածադրութիւններուն կը պարտենք:

Կ'ուզեմ համառօտ գրախօսականով մը խօսիլ Վարերու Առանձնի մասին, քննութեան առարկայ դարձնել անոր վիպական գործարարները:

Նախ եւ առաջ, ըսեմ որ կարգաւով այս վէպը, որու ապէս կը զգացուի հեղինակին այն միտքը, որով կը մզտի երբոստարգ գրողները ուղղելի դէպքի նիւթ մը, որ բովանդակութեամբ թէեւ անցեալին կը պատկանի, սակայն նութեամբ նոր եւ այժմեական է եւ որմէ ներկայիս ոչեւորուած են դոյաութիւն ունեցող բոլոր ժողովուրդներու, ի մասնաւորի ընկերվարական իրաւակարգ ունեցող երկրներու հին եւ նոր գրողները:

Վարերու Առանձնը իր մէջ կը պարփակէ նիւթ մը, որուն ախուճը մեր յեղափոխական անցեալին մնուել կ'ուսնէ, մեր հայրուկներու կեանքով ու գործունէութեամբ կը սքաղի եւ ցոյց կու տայ ատաւելաբար լուփերով անոնց անսահման զոհարարութիւնը, ազգին եւ հայրենիքին նկատմամբ ցոյց տուած անոնց ինքնաուրիշութիւնը, հաւատարմ եւ սպին:

